ե Ր կ Ր ո Ր դ ն ի Ր ա կ ա ն ի Ր ա վ ա հ ար ա ք ե Ր ո Լ թ յ ո Լ ն ն ե Ր ն ե ն .  
ի Ր ա կ ա ն ի Ր ա վ ա հ ար ա ք ե Ր ո Լ թ յ ո Լ ն ն ե Ր ի  
ա ճ կ ա յ ո Լ թ յ ո Լ ն ը ե ն թ ա դ Ր վ ո Լ մ է , ս ա կ ա յ ն ա յ դ  
հ ար ա ք ե Ր ո Լ թ յ ո Լ ն ն ե Ր ը ք ա գ ա հ ա յ տ չ ե ն : Ծ ի ն ծ ո Լ  
գ ո Ր ծ ար ք ի դ ե պ ք ո Լ մ կ ե ղ ծ և ի Ր ա կ ա ն  
ի Ր ա վ ա հ ար ա ք ե Ր ո Լ թ յ ո Լ ն ն ե Ր ը մ ե կ ը մ յ ո Լ ս ի ց  
ա ճ ա ն ձ ի ն գ ո յ ո Լ թ յ ո Լ ն ո Լ ն ե ն ա Լ չ ե ն կ ար ո ղ <sup>23</sup>: Ը ս տ Ի . Ա .  
Դ ա ն ի Լ ո վ ի ՝ ք ո ղ ար կ ո ղ գ ո Ր ծ ար ք ը , ի տ ա Ր ք ե Ր ո Լ թ յ ո Լ ն  
ք ո ղ ար կ վ ա ծ գ ո Ր ծ ար ք ի , ը ս տ է ո Լ թ յ ա ն , կ ե ղ ծ գ ո Ր ծ ար ք  
է և , ո Ր պ ե ս կ ա ն ո ն , ա յ դ գ ո Ր ծ ար ք ի ց ք խ ո ղ  
ի Ր ա վ ո Լ ն ք ն ե Ր ն ո Լ պ ար տ ա կ ա ն ո Լ թ յ ո Լ ն ն ե Ր ը

<sup>23</sup>Տ ե Դ Մ **Мурашко М. С.** "Притворные сделки в судебной практике"//Российская юстиция. Российская юстиция.  
Издательская группа Юрист, Москва - 2006. - № 3 (հ ա ս ա ն ե Լ ի է  
[http://zadnepr.sml.sudrf.ru/modules.php?name=press\\_dep&op=4&did=3](http://zadnepr.sml.sudrf.ru/modules.php?name=press_dep&op=4&did=3) հ ղ ո Լ մ ո վ 22.12.2018թ .  
դ Ր ո Լ թ յ ա մ ք ):



Կողմերը չեն իրականացնում: Կողմերն իրականացնում են միայն այն պարտավորությունները, որոնք համընկնում են կողմերի՝ քողարկված գործարքից բխող պարտավորությունների հետ<sup>24</sup>:

Այսպիսով, կեղծ և շինծու գործարքների որոշիչ տարբերությունն արտահայտվում է նրանում, որ շինծու գործարքի կողմերը, այդուհանդերձ, մտադրություններն ունեն միմյանց միջև առաջացնելու իրավական հետևանքներ, սակայն այնպիսիք, որոնք բխում են քողարկված գործարքից:

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավադրույթից բխում է գործարքի շինծու լինելու դեպքում քողարկող և քողարկված գործարքների առկայությունը, սակայն հստակեցված չեն շինծու և քողարկված գործարքների հարաբերակցությունը, մասնավորապես՝ այդ գործարքների պայմանների ու կողմերի համընկնման անհրաժեշտությունը վերաբերող հարցերը:

Շինծու գործարքի բնույթը, այսինքն՝ մեկ այլ գործարք քողարկելու նպատակով կնքված լինելը, անվավերությունն առանձնահատուկ իրավական հետևանքները, այն է՝ քողարկված գործարքի նվերաբերող կանոնների կիրառումը, արդեն իսկ վկայում են քողարկված և քողարկող գործարքների միջև որոշակի կապի առկայության մասին: Քողարկող և քողարկված գործարքների միջև առկա կապը դրսևորվում է գործարքների պայմանների և կողմերի (կողմի) համընկնմամբ:

Տեսական գրականության մեջ արտահայտված կարծիքների ամփոփումը վկայում է, որ քողարկող և

<sup>24</sup>Տե՛ս Դանիլով Ի. Ա. "Вопросы недействительности притворных сделок". "Юрист", 2011, № 23. Издательская группа "Юрист" (Москва), էջ 33: Кузнецова О. А. "Мнимые и притворные сделки в гражданском праве", "Законодательство". Изд: Фонд Правовая поддержка, Москва, № 6, июнь 2006, էջ 17:

քողարկված գործարքների որոշակի պայմաններ պարտադիր համընկնում են: Մասնավորապես՝ ըստ Ի.Ա. Դանիլովի՝ նման մասնակի համընկնման բացակայության դեպքում չի կարող շինծու գործարք կնքվել<sup>25</sup>: Նույն տեսակետն է արտահայտել նաև Օ. Ա. Կուզնեցովան՝ ավելացնելով, որ սովորաբար քողարկող և քողարկված գործարքներն ունենում են նույն կամ հարակից իրավական ուղղվածություն, օրինակ, ուղղված են լինում գույքը սեփականության կամ օգտագործման իրավունքով փոխանցելուն: Շինծու և քողարկված գործարքի մյուս պայմանները չեն համընկնում<sup>26</sup>:

Կարծում ենք, որ քողարկող և քողարկված գործարքների որոշակի պայմանների պարտադիր համընկնման անհրաժեշտությունը բխում է շինծու գործարքի նպատակային նշանակությունից: Շինծու գործարքների միջոցով քաղաքացիական շրջանառության մասնակիցները ցանկանում են իրենց միջև քողարկված իրավահարաբերություններին, այնուամենայնիվ, որոշակի իրավական բնույթ հաղորդել, ընդ որում այնպես, որ երրորդ անձանց կամ դատարանի մոտ կասկած չառաջանա՝ քողարկող գործարքի կեղծ բնույթի և իրականում այլ իրավահարաբերություններին առկայության մասին: Նշվածն էլ ինքնաբերաբար հանգեցնում է իրական գործարքն այնպիսի գործարքով քողարկելուն, որը որոշակի առումով համապատասխանում է իրականում գոյություն ունեցող հարաբերություններին:

Անդրադառնալով շինծու և քողարկված գործարքների կողմերի համընկնման հարցին՝ նախ վկայակոչ ենք ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշումը.

<sup>25</sup>Տե՛ս **Данилов И. А.**, նշված հոդվածը, էջ 33:

<sup>26</sup>Տե՛ս **Кузнецова О. А.**, նշված հոդվածը, էջ 17:

«□...□ Գրավոր գործարքների նկատմամբ շինծու  
լինելու հիմքով առնչինչ գործարքի  
անվավերությունը հետևանքների կիրառման համար  
անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն  
ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի  
համապատասխանում պայմանագրում շարադրվածին:  
Այսինքն, շինծու գործարքն առկա է այն դեպքում,  
երբ կողմերի միջև իրականում ծագում են  
իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց  
բնույթով այլ են, քան այն  
իրավահարաբերությունները, որոնք կողմերը  
ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց»<sup>27</sup>: ԶԶ  
վճռաբեկ դատարանի նշված որոշումից բխում է, որ  
առկա է գրավոր ձևով կնքված շինծու գործարքի  
երկու տեսակ, այն է՝ երբ գործարքն իրականում  
կնքվում է ոչ այն ստորագրած անձանց միջև, և երբ  
գործարքը ստորագրած անձանց կամքը չի  
համապատասխանում պայմանագրում շարադրվածին:  
Յետևաբար շինծու գործարք կարող է կնքվել ոչ  
միայն իր բնույթով այլ գործարք քողարկելու, այլ  
նաև գործարքի իրական կողմին քողարկելու  
նպատակով: Այսինքն՝ ԶԶ քաղաքացիական օրենսգրքի  
306-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված □մեկ այլ  
գործարք □ հասկացությունը ներառում է ոչ միայն  
այլ պայմաններով գործարք, այլ և այլ  
սուբյեկտային կազմով գործարք<sup>28</sup>: Օրինակ, Ա.-ն  
փաստացի ձեռք է բերում անշարժ գույք՝ վաճառողի

<sup>27</sup>Տե՛ս թիվ 3-89(ՏԴ) և թիվ 3-35(ՎԴ) քաղաքացիական գործերով ԶԶ  
վճռաբեկ դատարանի 2008թ. փետրվարի 1-ի որոշումները:

<sup>28</sup>ԶԶ վճռաբեկ դատարանի որոշմանը հակառակ մոտեցում է  
արտահայտվել ՌԴ գերագույն արբիտրաժային դատարանի  
նախագահության որոշմամբ, մասնավորապես՝ նշելով, որ  
շինծու գործարքը պետք է կնքված լինի այն նույն անձանց  
միջև, որոնք կնքել են քողարկված գործարքը □տե՛ս Постановление  
Президиума Высшего Арбитражного Суда РФ от 02.08.2005 №2601/05 // Вестник Высшего Арбитражного Суда РФ. - 2005. -  
№11□:

հետ նախապայմանագրային հարաբերությունների մեջ մտնելով իր անունից և վճարումը կատարելով իր միջոցների հաշվին: Մինչդեռ գործարքի կնքման պահին առավաճառքի պայմանագրի տեքստը գնորդի անունից ստորագրում է Բ.-ն (մերձավոր ազգական), որը հետագայում գրանցում է իր իրավունքը որպես անշարժ գույքի սեփականատեր: Միաժամանակ անշարժ գույքը հետագայում չի անցնում պայմանագիրը ստորագրած անձի՝ Բ.-ի տիրապետության տակ: Ընդ որում, պայմանագրի կնքմանը Բ.-ի մասնակցությունը կարող է պայմանավորված լինել տարբեր պատճառներով, օրինակ, Ա.-ի պարտավորություններով վերջինիս գույքի վրա բռնագանձում տարածելը կանխելու անհրաժեշտության պարագայում գնորդը չի ցանկանում ձեռք բերվող անշարժ գույքը ներառել ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության կազմում, որի մասին տեղյակ է նաև վաճառողը: Համանման փաստական հանգամանքներով քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից շինծու է ճանաչվել առավաճառքի պայմանագիրը, որը չի ստորագրվել իրականում այն կնքած անձանց միջև: Առավաճառքի պայմանագիրը ստորագրվել է գնորդի քրոջ կողմից, պայմանագիրը վավերացվել է նոտարական կարգով, իրավունքն էլ ստացել է պետական գրանցում: Սակայն գործում առկա էր նույն թվականին իրական գնորդի կողմից նույն անշարժ գույքը ձեռք բերելու համար տրված ստացական՝ գումարի մի մասը մեկ տարվա ընթացքում վճարելու պայմանով: Միաժամանակ առկա էր նաև հարևանի հայտարարություն՝ այն մասին, որ պայմանագիրը ստորագրած անձի եղբայրը գնել է անշարժ գույքը, իր ներկայությունով վճարել դրա արժեքի մի մասը՝

գ ու մ ար ի մ ն ա գ ա ծ մ ա ս ը պ ար տ ա վ ո թ Վ Ե Լ ո վ վ ճ ար Ե Լ մ Ե կ տ ար վ ա ը ն թ ա գ ք ու մ <sup>29</sup>:

Վ Ե թ ո գ թ յ ա Լ ի ց ք ա ց ի՝ հ ար կ Ե ն շ Ե Լ , ո թ ա յ Լ ս ու ք յ Ե կ տ ա յ ի ն կ ա գ մ ո վ գ ո թ ծ ար ք ը ո չ մ ի ա յ ն կ ար ո ղ Ե ի թ ք ո Լ ո թ պ ա յ մ ա ն ն Ե թ ո վ ն ու յ ն ա ն ա Լ ք ո ղ ար կ վ ա ծ գ ո թ ծ ար ք ի հ Ե տ , ա յ Լ ն ա ն գ ո թ ծ ար ք ը ք ո ղ ար կ Ե Լ ու ն պ ա տ ա կ ո վ կ ար ո ղ Ե կ ն ք վ Ե Լ շ ի ն ծ ու գ ո թ ծ ար ք ն Ե թ ի մ ի ա մ ք ո ղ ջ ա կ ա ն շ ղ թ ա : Ա յ ս կ ա պ ա կ ց ու թ յ ա մ ք Ա . Պ . Ս Ե թ գ Ե ն ը , ը ն դ ու ն Ե Լ ո վ , ո թ ք ո ղ ար կ ո ղ և ք ո ղ ար կ վ ա ծ գ ո թ ծ ար ք ն Ե թ ի կ ո ղ մ Ե թ ի հ ա մ ը ն կ ն ու մ ն ի ս կ ա պ Ե ս ք ն ո թ ո շ Ե շ ի ն ծ ու գ ո թ ծ ար ք ն Ե թ ի ն , մ ի ա ժ ա մ ա ն ա կ ն շ Ե Լ Ե , ո թ դ ա շ ի ն ծ ու գ ո թ ծ ար ք ի պ ար տ ա դ ի թ հ ա տ կ ա ն ի շ չ Ե : Գ ո թ ծ ն ա կ ա ն ու մ հ ա ն դ ի պ ու մ Ե ն ի թ ա վ ի ճ ա կ ն Ե թ , ո թ հ ա ն ու ն ա յ ն գ ո թ ծ ար ք ի ք ո ղ ար կ մ ա ն , ո թ ը կ ո ղ մ Ե թ ն ի թ ա կ ա ն ու մ ց ա ն կ ա ն ու մ Ե ն կ ն ք Ե Լ , կ ն ք վ ու մ Ե փ ո խ կ ա պ ա կ ց վ ա ծ գ ո թ ծ ար ք ն Ե թ ի մ ի շ ղ թ ա , ա յ դ թ վ ու մ՝ Ե թ թ ո թ դ ա ն ձ ա ն ց մ ա ս ն ա կ ց ու թ յ ա մ ք : Ս ա կ ա յ ն ն ու յ ն ի ս կ ա յ ս դ Ե պ ք ու մ , Ե թ ք շ ի ն ծ ու (ք ո ղ ար կ ո ղ) Ե Լ ի ն ու մ փ ո խ կ ա պ ա կ ց վ ա ծ գ ո թ ծ ար ք ն Ե թ ի մ ի ա մ ք ո ղ ջ շ ղ թ ա , ա ն հ թ ա ժ Ե շ տ Ե գ ո թ ծ ար ք ն Ե թ ի ս կ գ ք ն ա կ ա ն և վ Ե թ ջ ն ա կ ա ն կ ո ղ մ Ե թ ի հ ա մ ը ն կ ն ու մ ը <sup>30</sup>: Օ թ ի ն ա կ , ք ա ժ ն Ե տ ո մ ս Ե թ գ ն Ե Լ ու ն ա խ ա պ ա տ վ ու թ յ ա ն ի թ ա վ ու ն ք ը շ թ ջ ա ն ց Ե Լ ու ն պ ա տ ա կ ո վ՝ կ ար ո ղ Ե ն կ ն ք վ Ե Լ ք ա ժ ն Ե տ ո մ ս Ե թ ի ն վ ի թ ա տ վ ու թ յ ա ն և ա ռ ու ծ ա խ ի պ ա յ մ ա ն ա գ թ Ե թ , ի ս կ Ե թ Ե ա ռ և տ թ ա յ ի ն կ ա գ մ ա կ Ե թ պ ու թ յ ու ն ն Ե թ ի մ ի ջ և Ե կ ա տ ար վ ու մ ն վ ի թ ա տ վ ու թ յ ու ն ը , ն վ ի թ ա տ վ ու թ յ ա ն ար գ Ե Լ ք ը շ թ ջ ա ն ց Ե Լ ու ն պ ա տ ա կ ո վ , վ Ե թ ջ ի ն ն Ե թ ի ս կ ո ղ մ ի ց ո թ պ Ե ս մ ի ջ ա ն կ յ ա Լ օ ղ ա կ կ ար ո ղ Ե պ ա յ մ ա ն ա գ ի թ կ ն ք վ Ե Լ Ֆ ի գ ի կ ա կ ա ն ա ն ձ ի հ Ե տ : Ը ն դ ո թ ու մ , ն մ ա ն գ ո թ ծ ար ք ն Ե թ ի շ ի ն ծ ու Լ ի ն Ե Լ ու մ ա ս ի ն կ ար ո ղ Ե ն վ կ ա յ Ե Լ ք ա ժ ն Ե տ ո մ ս Ե թ ի ն վ ի թ ա տ վ ու թ յ ա ն և

<sup>29</sup>Տ Ե ՚ս թ ի վ 3-163(Վ Դ) ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն գ ո թ ծ ո վ 33 վ ճ ռ ա ք Ե կ դ ա տ ար ա ն ի 2008թ . ա պ թ ի Լ ի 23-ի ո թ ո շ ու մ ը :

<sup>30</sup>Տ Ե ՚ս **Сергеев А. П.** "Некоторые вопросы недействительности сделок. Очерки по торговому праву": Сборник науч. тр. / Под ред. Е.А. Крашенинникова. Ярослав. гос. ун-т; Ярославль, 2004.- Вып. 11, է ջ 24:

առ ու վաճ առ ք ի պայ ման ա գր եր ի մ ի ջ ն կ ար ճ ա տ ն ը ն դ մ ի ջ ու մ ը , ն վ ի ի ր ա տ վ ու թ յ ա ն պայ ման ա գր ի կ ող մ եր ի մ ի ջ ն ա գ գ ա կ ց ա կ ա ն հ ար ա ք եր ու թ յ ու ն ն եր ի առ կ այ ու թ յ ու ն ը , ո Ր ո վ կ ար ող է ար տ ա հ այ տ վ ե լ ն վ ի ի ր ա տ վ ու թ յ ա ն շ ար ժ առ ի թ ը , ն ա խ ք ա ն շ ի ն ծ ու գ ո Ր ծ ար ք ն եր ի կ ն ք ու մ ը ք ա ժ ն ե տ ո մ ս եր ը վ ա ճ առ ե լ ու մ տ ա դ Ր ու թ յ ա ն մ ա ս ի ն ծ ա ն ու ց ու մ ն եր ը <sup>31</sup>:

Հ ա վ ե լ ե ն ք , ո Ր շ ի ն ծ ու գ ո Ր ծ ար ք ո վ կ ար ող է ք ող ար կ վ ե լ ո չ մ ի ա յ ն ա յ լ գ ո Ր ծ ար ք կ ա մ գ ո Ր ծ ար ք ի կ ող մ ը , ա յ լ ն ա ն գ ո Ր ծ ար ք ի ո Ր ն է պայ մ ա ն ը : Օ Ր ի ն ա կ , ն մ ա ն դ ի Ր ք ո Ր ո շ ու մ է ար տ ա հ այ տ վ ե լ Ռ Դ գ եր ա գ ու յ ն դ ա տ ա ր ա ն ի պ լ ե ն ու մ ի կ ող մ ի ց . « Շ ի ն ծ ու է հ ա մ ար վ ու մ ն ա ն ա յ ն գ ո Ր ծ ար ք ը , ո Ր ը կ ն ք վ ե լ է ա յ լ պայ մ ա ն ն եր ո վ : Օ Ր ի ն ա կ , եր ք հ ա ս տ ա տ վ ու մ է , ո Ր կ ող մ եր ը , խ ո շ ո Ր գ ու մ ար ո վ գ ո Ր ծ ար ք ը ք ող ար կ ե լ ու ն պ ա տ ա կ ո վ , կ ն ք ե լ ե ն փ ո ք Ր գ ու մ ար ո վ գ ո Ր ծ ար ք , դ ա տ ա ր ա ն ը կ ող մ եր ի մ ի ջ ն կ ն ք վ ա ծ գ ո Ր ծ ար ք ը ճ ա ն ա չ ու մ է ո Ր պ ե ս խ ո շ ո Ր գ ու մ ար ո վ կ ն ք վ ա ծ գ ո Ր ծ ար ք , ա յ ս ի ն ք ն ` կ ի Ր առ ու մ է ք ող ար կ վ ա ծ գ ո Ր ծ ար ք ի ն վ եր ա ք եր ող կ ա ն ո ն ն եր ը »<sup>32</sup>:

Ա յ ս պ ի ս ո վ , կ ա տ ա ր վ ա ծ ու ս ու մ ն ա ս ի Ր ու թ յ ա ն ար դ յ ու ն ք ու մ կ ար ե լ ի է փ ա ս տ ե լ , ո Ր ի Ր ա վ ա կ ի Ր առ պր ա կ տ ի կ այ ու մ ձ ն ա վ ո Ր վ ե լ է շ ի ն ծ ու գ ո Ր ծ ար ք ի եր ե ք տ ե ս ա կ ` *ա յ լ գ ո Ր ծ ար ք ք ող ար կ ող , գ ո Ր ծ ար ք ի ո Ր ն է պայ մ ա ն ք ող ար կ ող և գ ո Ր ծ ար ք ի ի Ր ա կ ա ն կ ող մ ի ն ք ող ար կ ող շ ի ն ծ ու գ ո Ր ծ ար ք ն եր* : Մ ի ա ժ ա մ ա ն ա կ գ տ ն ու մ ե ն ք , ո Ր շ ի ն ծ ու և ք ող ար կ ող գ ո Ր ծ ար ք ն եր ի ո Ր ո շ ա կ ի պայ մ ա ն ն եր ը պ ար տ ա դ ի Ր հ ա մ ը ն կ ն ու մ ե ն : Ե թ ե կ ն ք վ ու մ է շ ի ն ծ ու գ ո Ր ծ ար ք ն եր ի ա մ ք ող ջ ա կ ա ն շ դ թ ա , ա պ ա ս կ գ ք ն ա կ ա ն և վ եր ջ ն ա կ ա ն կ ող մ եր ը պ ե տ ք է հ ա մ ը ն կ ն ե ն :

<sup>31</sup>Տ է 'ս **Волков А. В.** "Принцип недопустимости злоупотребления гражданскими правами в законодательстве и судебной практике" (Анализ более 250 судебных дел о злоупотреблении правом) / М.: Волтерс Клувер, 2011. Է ջ 334:

<sup>32</sup>Տ է 'ս Постановление Пленума Верховного Суда РФ от 23.06.2015 N 25 "О применении судами некоторых положений раздела I части первой Гражданского кодекса Российской Федерации":

**§1.1.1. Նպատակի իրավական նշանակությունը կեղծ  
և շինծոն գործարքներում**

Դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կեղծ և շինծոն գործարքներին տրված բնորոշմամբ ներառված հատկանիշները շատ հաճախ բավարար չեն լինում՝ կեղծ և շինծոն գործարքները բացահայտելու, վերջիններին սճիշտ իրավաբանական գնահատական տալու համար: Մեր կարծիքով, նշվածը վկայում է այն մասին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածով սահմանված իրավադրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, ինչի արդյունքում ոչ միայն բարդանում է այս գործարքների ապացուցումը, այլ նաև ձևավորվում է հակասական իրավակիրառ պրակտիկա: Ինչպես արդեն նշել էինք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունն ինքնում է, որ գործարքը կեղծ որակելու համար բավարար է միայն առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված լինելը, իսկ գործարքը շինծոն որակելու համար՝ միայն մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված լինելը: Մեր կարծիքով, գործարքի միայն ձևականորեն կամ առանց տվյալ գործարքի ցեխող իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված լինելը չէ, որ տվյալ գործարքը դարձնում է կեղծ կամ շինծոն: Կեղծ և շինծոն գործարքներին սուբյեկտիվ կողմից բնորոշ են նաև այլ հատկանիշներ, որոնք օրենսդրական ձևակերպում չեն ստացել: Այդ հատկանիշները, ըստ էության, հանգում են «նպատակ» հասկացությունը, որն էլ, կարծում ենք, իրավական որոշիչ նշանակություն պետք է ստանա գործարքը

Կեղծ կամ շինծո՛ւ որակե՛լիս: Բանն այն է, որ կեղծ և շինծո՛ւ գործարքներ կնքելով՝ կողմերը ցանկանում են միայն ստեղծել տվյալ գործարքից բխող քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների ծագման, փոփոխման կամ դադարեցման տպավորություն, որպես կանոն, նպատակ ունենալով խոլսափել որոշակի «բացասական» իրավական հետևանքներից: Ինչպես նշում է Յ. Վ. Մելնիկովան, կեղծ և շինծո՛ւ գործարքները գործարքում ամրագրված կանխամտածված խաբեություն են, որոնք կարող են էականորեն բացասաբար անդրադառնալ քաղաքացիական շրջանառության բարեխիղճ մասնակիցների շահերի վրա: Կեղծ գործարքի կնքմանը կողմերը դիմում են այն ժամանակ, երբ անհրաժեշտ է ստեղծել իրավահարաբերությունների առկայություն պատրանք: Իսկ եթե անհրաժեշտ է քողարկել իրական մտադրությունները, կնքվում են շինծո՛ւ գործարքներ: Կեղծ և շինծո՛ւ գործարքները թափանցում են քաղաքացիական շրջանառություն՝ վերջինիս համար նշանակալի վտանգներ կայացնելով<sup>33</sup>: Իսկ Վ. Կոտինը, Ֆիկտիվ գործարք ասելով, հասկանում է հակաիրավական գործողություններ, որոնք կատարվում են՝ գործարքի մասնակցին կամ երրորդ անձանց վնաս պատճառելու նպատակով իրական հանգամանքների և մտադրությունների վերաբերյալ նրանց մոլորություն մեջ գցելու կամ գործարքից բխող պարտավորությունները կանխամտածված չկատարելու միջոցով<sup>34</sup>:

<sup>33</sup>Տե՛ս **Мельникова Ю. В.** "Недействительность (ничтожность) мнимых и притворных сделок и их правовые последствия"/Российский судья, Издательская группа "Юрист" (Москва), 2014, № 11, էջ 8:

<sup>34</sup>Տե՛ս **Котин В.** "Фиктивные сделки в предпринимательской деятельности"//Законность. "Редакция журнала "Законность", Москва - 1996. - №10 (հասանելի է <https://www.lawmix.ru/comm/8575> հղումով 22.12.2018թ. դրությամբ):



Նախքան կեղծ և շինծու գործարքների նպատակներին անդրադառնալը՝ անհրաժեշտ ենք համարում պարզել, թե որն է գործարքի իրավական նպատակը:

Գործարք կնքած սուբյեկտների հետապնդած նպատակը միշտ կրում է իրավական բնույթ՝ որոշակի գույքի նկատմամբ սեփականության, օգտագործման իրավունքի ձեռքբերում և այլն: Երբ գործարքի միջոցով իրականացվում են ոչ իրավաչափ գործողություններ, նպատակը և իրավական արդյունքը չեն կարող համընկնել: Գործարքի իրավական նպատակը հարկ է տարբերակել գործարքի շարժառիթից, որից էլ նեղով այն կնքվում է: Շարժառիթը, որպես գիտակցված կարիք, գիտակցված մոտիվացիա, այն հենքն է, որի վրա ծագում է նպատակը: Այդ պատճառով շարժառիթները դրդում են սուբյեկտներին գործարքներ կնքելու և գործարքի իրավական բաղադրիչը չեն կազմում՝ բացառությամբ օրենքով հատուկ նախատեսված դեպքերի<sup>35</sup>: Ինչպես նշել է Վ. Ի. Սինայսկին՝ գործարքի նպատակը չպետք է խառնել գործարքի շարժառիթների հետ: Շարժառիթներն ընդհանուր առմամբ նշանակություն չունեն իրավական տեսանկյունից, իսկ եթե շարժառիթ է հակաիրավական նպատակին հասնելը, ապա այս դեպքում դժվար է շարժառիթը (կառուցան), որպես խթանող պատճառ, տարբերակել նպատակից<sup>36 37</sup>:

<sup>35</sup>Տե՛ս **Суханов Е. А.** (отв. ред.) "Гражданское право": 4 т.: Т. I: Общая часть. Учебник. 3-е изд., перераб. и доп., М.: Волтерс Клувер, 2007, էջեր 442, 444:

<sup>36</sup>Տե՛ս **Синайский В. И.** "Русское гражданское право". Редкол.: Долгов А.Г., Ем В.С., М.: Статут, 2002, էջ 146:

<sup>37</sup>Ինչ վերաբերում է «causa»-ի և իրավական նպատակի հարաբերակցությանը՝ նշենք, որ որոշ հեղինակներն ունենացնում են «causa» հասկացությունն իրավական նպատակի հետ, որիս ձգտում են հասնել քաղաքացիական շրջանառությամբ մասնակիցները գործարքներ կնքելիս (տե՛ս **Гражданское право: 2 т.: Т. I: Учебник / отв. ред. Е. А. Суханов. 2-е изд., перераб. и доп., М., 2000, էջ 331** (автор главы - В. С. Ем.), **Белов В. А.** "Гражданское право, Общая и Особенная части, Учебник М., АО «Центр ЮрИнфоР», 2003, էջ 86, **Цыбуленко З. И.** ред. "Гражданское право России". Часть первая: Учебник- М.: Юристь, 1998, (автор главы - Н. А. Баринов) էջ 180: Մյուս հեղինակները ճիշտ են համարում գործարքի շարժառիթը և նպատակը տարբերակել գործարքի հիմքից («causa»-ից), այսինքն՝

Այս պիսոզ, ցանկացած վավեր գործարք կնքվում է որոշակի իրավական նպատակով, որն էլ կանխորոշված է տվյալ գործարքի օրենսդրական կարգավորումներում: Ընդ որում, գործարքի իրավական նպատակը համընկնում է այն իրավական արդյունքի հետ, որին հասնում են կողմերը՝ գործարքը կատարելով: Մինչդեռ անվավեր գործարքների իրավական նպատակը և իրավական արդյունքը չեն համընկնում: Ինչ վերաբերում է կեղծ և շինծու գործարքներին, ապա նման գործարք կնքելիս կողմերը, որպես կանոն, նպատակ են հետապնդում հասնելու այն քողարկված իրավական արդյունքին, որը նրանք, որպես այդպիսին, չէին կարող ստանալ՝ առանց նման գործարք կնքելու: Այսինքն՝ կեղծ կամ շինծու գործարքի դեպքում կողմերը ոչ թե հասնում են այդ գործարքին բնորոշ իրավական արդյունքին, այլ ստանում են որոշակի առավել ություններ, որպես կանոն, իրավական բնույթի կամ խուսափում են իրավական բացասական հետևանքներից կամ շրջանցում են օրենսդրական արգելքներ:

Վերոգրյալով պայմանավորված՝ անհրաժեշտ ենք համարում նախ բացահայտել նպատակի իրավական նշանակությունը կեղծ գործարքում:

Իրավական գրականության մեջ կեղծ գործարքի նպատակի վերաբերյալ կարծիքները, ըստ էության, հանգում են նրան, որ կեղծ գործարքները հաճախ կնքվում են՝ գործարքին չմասնակցող երրորդ անձանց խաբելու կամ որոշակի նորմատիվ արգելքներ շրջանցելու նպատակով<sup>38</sup>: Կեղծ գործարք

---

այն տիպային իրավական արդյունքից, որին պետք է կողմերը հասնեն գործարքը կատարելով (տե՛ս **Сергеев А. П., Толстой Ю. К.** (ред.) "Гражданское право": Учебник Т. I. Изд. 6-е, перераб и доп./М., 2004. (автор главы – М. В. Кротов) էջ 282, **Садиков О. Н.** (отв. ред.) "Гражданское право России". Общая часть: курс лекций / М., Юристъ, 2001, (автор главы – О. Н. Садиков) էջ 319:  
<sup>38</sup>Տե՛ս **Бежецкий А. Ю.** "Недействительность мнимых и притворных сделок: проблемы теории и практики". НОУ ВПО Московская академия экономики и права: Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук: Москва – 2013, էջ 67:

կնքելիս կողմերի կամքն ուղղված է կողմերի միջև քաղաքացիաիրավական հարաբերություններ հաստատելուն, և կողմերի նպատակն է կողմերից երկուսի կամ, որ առավել հաճախ գործնականում հանդիպում է, կողմերից մեկի համար երրորդ անձանց հետ հարաբերություններում իրավական հետևանքներ առաջացնելը<sup>39</sup>: Որպես կանոն, կեղծ գործարքները կնքվում են պետության ֆինանսական միջոցներին ոտնձգելու, հարկերից և տուրքերից խուսափելու նպատակով, ինչպես նաև կանխամտածված սնանկության դեպքում, երբ գույքը դիտավորյալ թաքցնում են, որպեսզի պարտատերերի պահանջները չբավարարեն, աշխատողների աշխատավարձը չվճարեն, հարկերի և տուրքերի հետ կապված պարտավորությունները չմարեն<sup>40</sup>: Գործարքի կեղծ բնույթը ենթադրում է, որ կողմերը գործել են անբարեխղճորեն (ի վնաս երրորդ անձանց շահերին և հանուն սեփական օգուտի)<sup>41</sup>: Քաղաքացիական շրջանառության բարեխիղճ մասնակիցների շահերի վրա կեղծ գործարքի բացասական ազդեցությունը շեշտադրվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից<sup>42</sup>:

Այսպիսով, կեղծ գործարքի էությունը բացահայտելու և կեղծ գործարքին ճիշտ իրավական գնահատական տալու համար՝ առաջարկում ենք տարբերակել «կնքված գործարքի իրավական նպատակը», «կեղծ գործարքի նպատակը», «կեղծ գործարք կնքելու նպատակը (կեղծ գործարքի կնքման շարժառիթը)»<sup>43</sup>:

<sup>39</sup>Տե՛ս **Гришаев С. П.** (ред.) "Гражданское право": Учебник / М.: Юристь, 1999, էջեր 75-76:

<sup>40</sup>Տե՛ս **Козьяр Н. В.** "Категория ничтожной сделки в гражданском праве Российской Федерации". Российский государственный социальный университет (РГСУ): Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. 2011, էջ 120:

<sup>41</sup>Տե՛ս **Кратенко М. В.** "Злоупотребление свободой договора: частноправовые и публично-правовые аспекты": Монография/М.: Волтерс-Клувер, 2010, էջ 45:

<sup>42</sup>Տե՛ս թիվ ԿԴ 1/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. հունիսի 22-ի որոշումը:

<sup>43</sup>Աշխատանքում հիմնականում օգտագործվում է «կեղծ գործարք կնքելու նպատակ» հասկացությունը՝ նկատի ունենալով, որ կեղծ գործարքի դեպքում, ի տարբերություն վավեր

Կնքված գործարքի իրավական նպատակն այն իրավական արդյունքն է, որը կանխորոշված է տվյալ տեսակի գործարքը կարգավորող իրավական նորմերում, և որին կհասնեին գործարքի կողմերը, եթե այն չլիներ կեղծ և փաստացի կատարվեր: Օրինակ՝ երբ կնքվում է կեղծ նվիրատվության պայմանագիր, ապա կնքված պայմանագրի իրավական նպատակն է նվիրառուի սեփականությանն անհատույց գույք կամ գույքային իրավունք (պահանջ) հանձնելը կամ նվիրառուին գույքային պարտավորությունն ից ազատելը: Մինչդեռ գործարքի կեղծ լինելու հետևանքով փաստացի կնքված գործարքի իրավական նպատակը չի իրականացվում, այսինքն՝ իրավական արդյունքն ավարտին չի հասնում՝ կողմերի փաստական հարաբերություններում ոչինչ չփոխելով: Ներկայացված օրինակում նվիրատվության պայմանագիրը կնքվում է, նույնիսկ գույքի նկատմամբ իրավունքի գրանցում կարող է իրականացվել, սակայն իրականում գույքը նվիրառուի սեփականությանը չի անցնում կամ վերջինս ուրև է գույքային պարտավորությունն ից ազատվում:

Մեր կարծիքով, գործարքի իրավական նպատակի իրականացված չլինելը, այն է՝ տվյալ տեսակի գործարքին բնորոշ իրավական արդյունքի բացակայությունը փոխում է գործարքի իրավական որակումը՝ կախված գործարքի ռեալ կամ կոնսենսուալ լինելուց: Գտնում ենք, որ ռեալ գործարքները, որպես կանոն, չեն կարող լինել կեղծ, քանի որ նման գործարքի կատարված չլինելը վկայում է այդ գործարքի կնքված չլինելու մասին: Յետևաբար գործարքի կնքված չլինելու

---

գործարքների, կնքման շարժառիթներն ու նպատակները շահաճախ նույնանում են՝ ունենալով իրավական նշանակություն, հետևաբար դրանք դժվար է միմյանցից տարբերակել:

պարագայում այդ գործարքի անվավերության հարցն առհասարակ բարձրացվել է ի կարող: Օրինակ, ռեալ գործարքներից է փոխառության պայմանագիրը, որի վիճարկման հիմքերից է «անփող» փոխառության ապացուցումը: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «եթե փոխառության պայմանագիրը սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերով վիճարկելիս պարզվում է, որ փոխառուն դրամը կամ այլ գույքն իրականում չի ստացել փոխատուից, փոխառության պայմանագիրը համարվում է չկնքված: (...)»:

Այսպիսով, վերոգրյալը վկայում է այն մասին, որ ցանկացած դեպքում, երբ կողմը կբարձրացնի փոխառության պայմանագրի կեղծ լինելու հարցը, դրանով իսկ կընդունի իրականում այդ պայմանագրով գումար ստացած չլինելու, հետևապես նաև փոխառության պայմանագրի կնքված չլինելու հանգամանքը:

<i>Կեղծ</i>	<i>գործարքի</i>	<i>նպատակը՝</i>
իրավահարաբերության		առկայության
տպավորության ուն ստեղծելն է,	գործարքի ձևացումն է:	Կեղծ գործարք կնքելով՝ կողմերը նպատակ չունեն առաջացնելու տվյալ գործարքից բխող իրավունքներ և պարտականություններ: Կեղծ գործարքի նպատակն ուղղակիորեն իրար տացուղումն է գտել կեղծ գործարքի օրենսդրական

հասկացողության մեջ :

Կեղծ գործարք կնքելու նպատակը կանխորոշում է այն քողարկված արդյունքը, որը կողմերը չէին ունենա, եթե չկնքեին կեղծ գործարք: Այսինքն՝ կեղծ գործարք կնքելու նպատակը որոշակի բացասական հետևանքներից խուսափելն է կամ որոշակի առավելություններ ստանալը կամ որևէ օրենսդրական արգելք, սահմանափակում շրջանցելը: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բավականին տարածում ունեն այն կեղծ գործարքները, որոնք կնքվում են պարտապանի գույքը «փախցնելու» նպատակով, այսինքն՝ գույքի բռնագրավումը, գույքի վրա արգելանք դնելը կամ բռնագանձում տարածելը կանխելու նպատակով: Գույքի օտարման պայմանագրեր կնքելով՝ պայմանագիրը կա՛մ ընդհանրապես չի կատարվում, կա՛մ կատարվում է մասամբ: Պարտատերերը նույնիսկ դատարանի օրինական ուժի մեջ մտածվճռի առկայության դեպքում չեն կարողանում իրենց պահանջների բավարարում ստանալ, քանի որ պարտապանը կեղծ գործարքների արդյունքում դառնում է իրավական առումով անվճարունակ: Կեղծ գործարքները կնքվում են նաև հարկերը կրճատելու կամ հարկերից խուսափելու, ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը, ընդհանուր սեփականության իրավունքում վաճառվող բաժնի ը գնելու նախապատվության իրավունքը շրջանցելու, պարտքի առկայություն ցույց տալու (օրինակ՝ ուսման վարձի մասով գեղջ ստանալու համար) և այլ նպատակներով: Ամուսիններից մեկի ունեցած պարտավորությունների դիմաց ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի բռնագանձումը կանխելու նպատակով՝ կեղծ ամուսնական պայմանագիր է կնքվում, որով

փոփոխվում է ամուսինների միջև գույքային հարաբերությունների ռեժիմը:

«Կեղծ գործարքի նպատակ» և «Կեղծ գործարք կնքելու նպատակ» հասկացությունների փոխարեն ՀՀ Վճռաբեկ դատարանն օգտագործել է «մոտակա նպատակ» և «հեռահար նպատակ» հասկացությունները, մասնավորապես, նշելով. «Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ կեղծ գործարքի առկայությունը գնահատելիս դատարանները պետք է գնահատման արժանացնեն գործարքի կողմերի մոտակա և հեռահար նպատակները՝ հաշվի առնելով, որ գործարքի կնքման մոտակա նպատակը գործարքի տպավորություն ստեղծելն է, իսկ հեռահար նպատակը՝ կողմերի կամ նրանցից մեկի համար որևէ առավելություն ստանալը կամ որևէ սահմանափակում շրջանցելը: Հեռահար նպատակի մասին կարող է վկայել, օրինակ, չկատարված պարտավորության, օրինակյան ուժի մեջ մտած՝ չկատարված դատական ակտի կամ այլ նմանատիպ հանգամանքների առկայությունը: Ի տարբերություն հեռահար նպատակի, որի առկայությունը հաստատելու համար կարող են ներկայացվել ուղղակի ապացույցներ, մոտակա նպատակն ապացուցելը բարդ է՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է գործարքի կողմերի ներքին կամքին, հետևաբար՝ մոտակա կամքը բացահայտելու համար կարող են ներկայացվել նաև անուղղակի ապացույցներ: Մոտակա կամքը բացահայտելու համար կարող է ուղենշային լինել, օրինակ, գործարքի կողմերի դրսևորած վարքագծի արդյունավետության գնահատումը, մասնավորապես այն, որ եթե տվյալ գործարքի իրավական հետևանքներին կարելի է հասնել ավելի խնայողական և կարճ ճանապարհով, առանց լրացուցիչ գործարքների կնքման, ապա առկա

ավելորդ օղակները կարող են վկայել քողարկված նպատակի առկայության մասին (օրինակ՝ ավելորդ գործարքներ կարող են կնքվել լրացուցիչ ծախսեր ցույց տալու՝ հարկային պարտավորություններին խոստովանելու նպատակով): Կամ գործարքը կեղծ լինելու մասին կարող է վկայել այն հանգամանքը, որ գործարքի կողմերից մեկն ի սկզբանե ի վիճակի չէր լինելու կատարել գործարքով ստանձնած պարտավորությունները (օրինակ՝ համապատասխան սարքավորումների, աշխատուժի բացակայության պատճառով)»<sup>44</sup>:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում ենք, որ գործարքը կեղծ որակելու համար անհրաժեշտ է ապացուցել կնքված գործարքի իրավական նպատակի փաստացի իրականացված չլինելը, կեղծ գործարքի նպատակի առկայությունը, ինչպես նաև կեղծ գործարք կնքելու նպատակի առկայությունը:

Հարց է առաջանում, թե արդյոք գործարքը կեղծ որակելու համար կեղծ գործարք կնքելու նպատակները պետք է կրեն *իրավական բնույթ*, այսինքն՝ արդյոք այս գործարքները պետք է կնքված լինեն *որոշակի բացասական իրավական հետևանքներից խոստովանելու կամ որոշակի հակաիրավական բնույթի առավելություններ ստանալու կամ որևէ օրենսդրական արգելք, սահմանափակում չըջանցելու նպատակով*:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերոգրյալ որոշմամբ անդրադառնալով կեղծ գործարքի հեռահար նպատակների առկայության մասին վկայող հանգամանքներին, միաժամանակ չի անդրադարձել այդ նպատակների իրավական բնույթին: Կարծում ենք, այս հարցի պատասխանը պետք է փնտրել՝

<sup>44</sup>Տե՛ս թիվ ԿԴ 1/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. հունիսի 22-ի որոշումը:



բացահայտելով կեղծ և շինծու գործարքների կնքման անթույլատրելիությունն օրենսդրական պահանջի նպատակային նշանակությունը:

Ինչպես նշում է Մ. Վ. Կրատենկոն, պայմանագրի տեսակի ընտրության ազատության ընդհանուր սահմանափակումն իրենից ներկայացնում է օրենքի այն պահանջը, ըստ որի՝ կողմերի կամահայտնությունը պետք է համապատասխանի իրենց իրական կամքին<sup>45</sup>: Յեղիսակի կարծիքով՝ կեղծ և շինծու գործարքների դեպքում կարելի է խոսել պայմանագրի ազատության չարաշահման մասին՝ ի վնաս երրորդ անձանց շահերի (պարտատերերի, համասեփականատերերի, նախապատվության իրավունք ունեցող սուբյեկտների) կամ հանրային շահերի (օրինակ՝ անհիմն հարկային օգուտ ստանալը)<sup>46</sup>: Յեղիսակը գտնում է, որ կեղծ գործարքների կնքումը պայմանագրի ազատության չարաշահման լայնորեն տարածված ձևերից է<sup>47</sup>:

Մեր կարծիքով, պայմանագրի ազատության սկզբունքի գործողությունն պայմաններում կեղծ և շինծու գործարքների անթույլատրելիությունը սահմանելու նպատակն է ապահովել առավելապես երրորդ անձանց կամ հանրային շահերի պաշտպանությունը, իսկ նշված շահերին սպառնացող վտանգի մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ այս գործարքները կնքված լինեն որևէ հակաիրավական նպատակով: Բոլոր այն դեպքերում, երբ գործարքը կնքվում է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, սակայն չի հետապնդում որևէ առավելություն ստանալու, օրենսդրական արգելք կամ սահմանափակում չրջանցելու թաքնված նպատակ, ապա գործարքի կեղծ լինելու մասին չի կարելի խոսել: Նման

<sup>45</sup>Տե՛ս Кратенко М. В., նշված աշխատությունը, էջ 18:

<sup>46</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 18:

<sup>47</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 45:

գործարքներում կարող է առկա լինել կամքի և կամահայտնություն անհամապատասխանություն, մինչդեռ այդ գործարքներն օրենքով նախատեսված դեպքերում կարող են անվավեր ճանաչվել այլ հիմքերով:

Նման մոտեցում նկատվում է մի շարք այլ երկրների օրենսդրական կարգավորումներում: Այսպես, Մեծ Բրիտանիայի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ Ֆիկտիվ (sham) գործարքը պետք է անարդարություն տարրեր պարունակի: Միայն այն պատճառով, որ համաձայնությունն արհեստական է և առաջացնում է դատարանի համար անցանկալի հետևանքներ կամ համաձայնությունը պարզապես կայացվել է՝ անձի դրությունն անհիմն այլ անձի համեմատ բարելավելու նպատակով, դատարանին ինքնին իրավունք չի վերապահում հաստատելու գործարքի Ֆիկտիվ բնույթը: Ֆիկտիվ լինելը կեղծավորություն, խաբեություն է: □...□<sup>48</sup>: Իսպանիայի քաղաքացիական օրենսգրքի համաձայն □1275-1276-րդ հոդվածներ□՝ Ֆիկտիվ գործարքները դիտարկվում են կառուցային արատով գործարքներ: Մինչդեռ, այսպես կոչված, ձևացված կառուցային գործարքների շարքը կարող է լինել բավականին լայն՝ խարդախ նպատակներից մինչև հայեցողություն կամ գաղտնիություն պատճառներն ընդգրկելով: Սակայն իսպանական իրավունքում ևս Ֆիկտիվ գործարքի պաթոլոգիան բխում է խաբեությունից: Պայմանագրային Ֆիկտիվ բողբ, որը ստեղծվել է թաքնված իրական գործարքը քողարկելու համար, դատարանների կողմից որակվում է որպես սիմուլյացիա: Կողմերը, ժամանակները և երրորդ անձինք, որոնց

<sup>48</sup>Տե՛ս Holly Doyle & Simon Passfield, նշված հոդվածը (հասանելի է [http://www.jordanpublishing.co.uk/system/redactor\\_assets/documents/141/Shams.pdf](http://www.jordanpublishing.co.uk/system/redactor_assets/documents/141/Shams.pdf) հղումով 22.12.2018թ. դրությամբ):

իրավունքներն ու օրինական շահը վտանգված են  
ֆիկտիվ գործարքով, իրավունք ունեն պայմանագիրը  
ֆիկտիվ ճանաչելու պահանջով դատարան դիմել:  
Բարեխիղճ երրորդ անձինք, ովքեր հիմնվել են  
առերևույթ պայմանագրի վրա, օգտվում են  
պաշտպանություններից<sup>49</sup>: Չինաստանի քաղաքացիական  
իրավունքում նախատեսված է հակաիրավական  
նպատակով պայմանագրի օգտագործման արգելք:  
Մասնավորապես՝ պայմանագիրը, որը թեկուզև  
իրավական առումով կնքված է, դիտարկվում է  
գոյություն չունեցող և առնչինչ, եթե այն կնքվել  
է՝ հակաիրավական նպատակի հասնելու համար: Տվյալ  
դեպքում պայմանագրի ձևը և պայմանագիրն ինքնին  
արտաքինից վավեր են կամ իրավական առումով  
թույլատրելի, բայց նպատակը, որին պայմանագիրն  
իրականում ուղղված է, հակաիրավական է կամ  
իրավունքի կոդմից արգելված: Ենթադրենք՝  
կոդմերը պայմանագիր են կնքում՝ սեփականության  
միմասը կամավոր փոխանցելու վերաբերյալ: Եթե  
օրենքով արգելված չէ այդ գույքի փոխանցումը,  
պայմանագիրը կլինի վավեր և արդյունավետ: Բայց  
եթե գույքի փոխանցումը նպատակ է հետապնդել  
հարկերից կամ պարտքերի վճարումից խուսափել,  
կհամարվի, որ պայմանագիրն ունեցել է քողարկված  
հակաիրավական նպատակ (հարկերից խուսափում կամ  
խաբեություն) և հետևաբար առնչինչ է:  
Պայմանագրով քողարկված հակաիրավական նպատակի  
առկայությունը պարզելու համար Եական գործուն է  
կոդմերի մտադրությունը, քանի որ արտաքինից  
պայմանագրում որևէ սխալ առկա չէ: Այսպիսով, եթե  
կոդմերը մտադիր են օրինական պայմանագրի  
միջոցով խուսափել օրենքից կամ իրավական  
պարտավորություններից, կհամարվի, որ առկա է

<sup>49</sup>Տե՛ս **Teresa Rodríguez de las Heras Ballell** with the collaboration **Jorge Feliu Rey** "Introduction to Spanish Private Law: Facing the Social and Economic Challenges" London; New York: Routledge-Cavendish, 2010, էջ 243:

քողարկված հակահիրավական նպատակ :  
Մտադրողը կարող է բխեցվել նաև  
պայմանագրով առաջացած իրական հետևանքներից (...)<sup>50</sup>:

Կատարված ուսումնասիրության արդյունքում  
գտնում ենք, որ գործարքը կեղծ կամ շինծու  
որակելու համար որոշիչ նշանակություն պետք է  
ստանա որոշակի քողարկված արդյունքի հասնելու  
նպատակի առկայությունը, որը կարող է  
արտահայտվել որոշակի հակահիրավական բնույթի  
առավելություններ ստանալու, օրենսդրական  
արգելքներ կամ սահմանափակումներ շրջանցելու  
կամ դրանցից խուսափելու մտադրողամբ :  
Այսինքն՝ ցանկացած դեպքում, երբ առկա է կեղծ  
կամ շինծու գործարքի միջոցով որևէ քողարկված  
արդյունքի հասնելու նպատակ, ապա չի կարելի  
խուսել կեղծ կամ շինծու գործարքի առկայության  
մասին :

Նշվածի կապակցությամբ, որպես հակափաստարկ,  
կարող է բարձրացվել այն հարցը, որ կեղծ գործարքը  
կարող է կնքվել նաև այնպիսի քողարկված  
նպատակով, որն իրավական բնույթ չկրի, օրինակ,  
կեղծ առուվաճառքի պայմանագրով մեծ  
արժողությունները որդու կողմից մորը  
փոխանցելը, որ որդու հարևանները չիմանան նման  
մեծ արժեքի ունեցվածքի մասին : Սակայն, նկատենք,  
որ նման գործարքի անվավերության հարցը, որպես  
կանոն, չի բարձրացվում, քանի որ այդ գործարքն  
ինքնին չի կարող խախտել երրորդ անձանց կամ  
հանրային շահերը : Բացառիկ դեպքերում նման  
գործարքի անվավերության հարցը կարող է  
բարձրացնել գործարքի կողմը, բերված օրինակում  
որդին, եթե մյուս կողմը՝ մայրը, չարաշահելով

<sup>50</sup>Տե՛ս Mo Zhang Leiden "Chinese Contract Law: Theory and Practice"; Boston: Martinus Nijhoff Publishers, 2006, էջ 179 (հասանելի է <https://books.google.ru/books?id=XhzVnIGSB0cC&printsec=frontcover&hl=ru#v=onepage&q&f=false> հղումով 22.12.2018թ. դրությամբ) :

որդու և իր միջև առկա վստահության հարաբերությունները, կեղծ առուվաճառքի պայմանագիրը շահարկի որպես իրական գործարք:

Անդրադառնալով շինծու գործարքում նպատակի իրավական նշանակությանը՝ նշենք, որ շինծու գործարք կնքելիս կողմերը նպատակ են հետապնդում հասնելու այն իրավական արդյունքին, որը նրանք կունենային քողարկված գործարքը բացահայտ կնքելիս՝ միաժամանակ խուսափելով քողարկված գործարքի կնքման հետևանքով առաջացող իրենց համար բացասական հետևանքներից, որոնք, որպես կանոն, կրում են իրավական բնույթ և կարող են լինել քաղաքացիաիրավական, հարկային և այլ բնույթի:

Ըստ գրականության մեջ արտահայտված տեսակետների մեծամասնության՝ շինծու գործարքները ևս առավել հաճախ կնքվում են հակաիրավական նպատակներով, այսինքն՝ օրենքով սահմանված արգելքներն ու սահմանափակումները շրջանցելու, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտելու, անհիմն առավելություններ ստանալու և այլ նպատակներով<sup>51</sup>: Տեսական գրականության մեջ օգտագործվում են «շինծու գործարքի կնքման նպատակ», «շինծու գործարքի կնքման մեջ կողմերի օգուտ», «շինծու գործարքի թաքնված նպատակ» և մի շարք այլ արտահայտություններ<sup>52</sup>: Մասնավորապես՝ նշվում է, որ գործարքը շինծու ճանաչելու վերաբերյալ հայցներ կայացնելիս (...) պետք է հստակ բնորոշել քողարկված գործարքը և հիմնավորել շինծու գործարքի կնքման նպատակը (...): Գործարքի

<sup>51</sup>Տե՛ս **Сергеев А. П.** "Некоторые вопросы недействительности сделок. Очерки по торговому праву": Сборник науч. тр. / Под ред. Е.А. Крашенинникова. Ярослав. гос. ун-т; Ярославль, 2004.- Вып. 11, էջ 24:

<sup>52</sup>Տե՛ս **Бежецкий А. Ю.**, նշված ատենախոս., էջ 98: **Холоденко Ю. В.** "Субъективная сторона в мнимых и притворных сделках", "Бизнес в законе. Экономико - юридический журнал". Изд. Дом "Юр-ВАК", Выпуск № 4/2007, էջ 255 (հասնելի է <http://cyberleninka.ru/article/n/subektivnaya-storona-v-mnimyh-i-pritvornyh-sdelkah> հղումով 22.12.2018թ. դրույթով ամբ):

շիւծու բնույթն ապացուցելիս անհրաժեշտ է, համապատասխան իրավական նորմերին հղումներ կատարելով, հիմնավորել շիւծու գործարքի կնքման մեջ կողմերի օգուտը, այսինքն՝ ապացուցել գործարքի կնքման թաքնված նպատակը<sup>53</sup>: Ըստ Յ. Վ. Խոլոդենկոյի՝ շիւծու գործարքներում առկա է երկու նպատակ. որևէ քաղաքացիաիրավական գործարքի միջոցով հասնել որոշակի արդյունքի և թաքցնել նախատեսված արդյունքը, դրա իրավական հետևանքները, ինչպես նաև այլ գործարքի միջոցով, որն իրականացնելու կամքը կողմերի մոտ իրականում բացակայել է, թաքցնել այդ արդյունքին հասնելու նուղղված գործարքը<sup>54</sup>:

Այսպիսով, շիւծու գործարքում նպատակի իրավական նշանակույթը բացահայտելու համար՝ առաջարկում ենք տարբերակել «շիւծու գործարքի նպատակը», «շիւծու գործարք կնքելու նպատակը», «քողարկող գործարքի իրավական նպատակը» և «քողարկված գործարքի իրավական նպատակը»:

Ինչպես արդեն նշել ենք, շիւծու գործարքի օրենսդրական բնորոշումից բխում է, որ *շիւծու գործարքի նպատակ* նեմեկայլ գործարք քողարկելը<sup>55</sup>: «քողարկել» բառն ուղիղ իմաստով նշանակում է ծածկել, պատել, քողածածկել, իսկ փոխաբերական իմաստով՝ ծածկել, թաքցնել, սքողել, պարտակել, պահել, վարագուրել<sup>56</sup>: «քողարկել» բառի բացատրույթը նաև արդեն իսկ ենթադրում է, որ գործարքը թաքցնելն ինքնանպատակ չէ: Գործարքը քողարկելու կողմերը դիմում են, երբ առկա է

<sup>53</sup>Տե՛ս **Бежецкий А. Ю.**, նշված ատենախոս., էջ 98:

<sup>54</sup>Տե՛ս **Холоденко Ю. В.**, նշված հոդվածը, էջ 255:

<sup>55</sup>Տե՛ս նաև թիվ ՅՅՔԴ2/0086/02/09 քաղաքացիական գործով ՅՅ վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումը:

<sup>56</sup>Տե՛ս **Սուքիասյան Ա. Մ.**, «Յայոց Լեզվի հոմանիշների բացատրական բառարան»: Երևանի Պետական Յամալ սարան, Երևան, 2009, էջ 1211 (հասանելի է <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=47> հղումով 22.12.2018թ. դրույթով):

գործարքում կամ գործարքից դուրս որևէ բան թաքցնելու նպատակ:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ շինծու գործարքները հաճախ կնքվում են՝ հիմնական և պարտավորության կատարման ապահովմանն ուղղված գործարքները քողարկելու նպատակով: Օրինակ՝ առևձաճառքի պայմանագրով քողարկվում են փոխառության և գրավի պայմանագրերը<sup>57</sup>: Նվիրատվության պայմանագրով քողարկվում է առևձաճառքի պայմանագիրը, կտակը, ստացականով՝ ներդրումների ապահովումը, իրավաբանական անձանց միջև համատեղ գործունեության պայմանագիր կնքելով և անշարժ գույքով ներդրում կատարելով՝ քողարկվում է անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը՝ այդ վարձակալությանից ստացված շահույթից վճարման ենթակա հարկերը կրճատելու նպատակով: Միակողմ գործարքներով երբեմն քողարկվում են երկկողմ գործարքներ: Օրինակ՝ նախկինում բավականին հաճախ, լիազորագրով ավտոտրանսպորտային միջոցներն օգտագործման տրամադրելով, քողարկվում էին առևձաճառքի, անհատույց օգտագործման կամ վարձակալության պայմանագրերը:

Միաժամանակ նշենք, որ երբ շինծու գործարքով քողարկվում է պարտավորության կատարման ապահովումը, ապա նախքան շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառումը հարկ է ապացուցել հիմնական պարտավորության գոյության փաստը, քանի որ պարտավորությունների կատարման ապահովման միջոցները նպատակառոտ ուղղված են օժանդակելու իրենց նախատեսման համար հիմք ծառայած

<sup>57</sup>Տե՛ս, օրինակ, թիվ 3-439(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. հունիսի 25-ի որոշումը:

պարտավորութեան կատարմանը և հետևաբար ինքնուրույն գոյութեան ունենալ չեն կարող<sup>58</sup>: Բոլոր այն դեպքերում, երբ բավարար ապացույցներ չեն ներկայացվում՝ հիմնական պարտավորութեան առկայության փաստը հիմնավորելու համար, ապագործարքի նկատմամբ շինծու լինելու հիմքով պարտավորութեան ապահովման համապատասխան միջոցի կանոնները չեն կարող կիրառվել<sup>59</sup>:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ պրակտիկայում կարող են դժվարութեան ներ առաջանալ պարտավորութեան կատարման ապահովումը քողարկող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը հետգնման իրավունք նախատեսող առուվաճառքի պայմանագրից տարբերակելիս: Օրինակ, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում կարող է նախատեսված լինել պայման կամ կարող է գնորդի կողմից տրված լինել պարտավորագիր՝ այն մասին, որ պայմանագրի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում ծագում է գնորդի՝ գույքը հետ վաճառելու պարտավորութեան արդեն իսկ վճարված գումարով: Այստեղ որոշիչ նշանակություն է ստանում կողմերի կամքը: Չարկ է պարզել, թե արդյոք առուվաճառքի պայմանագիրը կնքելիս կողմերի կամքն ուղղված է եղել այլ գործարք քողարկելուն, այսինքն՝ պարտավորութեան ներ կատարման ապահովման հարաբերութեան ներ առաջացմանը, թե կողմերն իսկապես մտադրված են եղել առաջացնելու առուվաճառքի հարաբերութեան ներ: Այս հարցի վերաբերյալ հիշարժան է ԱՄՆ-ի Լոուիզիանա նահանգի քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորումը: Մասնավորապես՝ ԱՄՆ-ի Լոուիզիանա

<sup>58</sup>Տե՛ս թիվ ԵԱԴԴ/0134/02/13 քաղաքացիական գործով ՅՅ վճռաբեկ դատարանի 2015թ. ապրիլի 30-ի որոշումը:  
<sup>59</sup>Տե՛ս նույն որոշումը:



նահանգի քաղաքացիական օրենսգրքով առանձին կարգավորում է նախատեսված հետզնման իրավունք նախատեսող պայմանագրի համար: Այսպես՝ հետզնման իրավունքով առավելագույնը սիմուլյացիա է, երբ գործի հանգամանքները վկայում են, որ կողմերի իրական մտադրություններն ուղղված են եղել պարտավորության ապահովման պայմանագիր կնքելուն: Այդ դեպքում գնորդի կողմից վարձակալության դիմաց կամ այլ եղանակով ստացված եկամուտը, պտուղները կամ այլ օգուտը կարող են դիտարկվել որպես տոկոսներ՝ վաշխառության կանխարգելմանն ուղղված օրենսդրությանը համապատասխան (2569-րդ հոդված)<sup>60</sup>:

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ենթադրյալ շինծու գործարքի վավերականության կանխավարկածն է գործում, մինչդեռ շինծու գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու վերաբերյալ գործեր քննելիս դատարանները, մեր կարծիքով, պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն վաճառողի կողմից տիրապետման պահպանման փաստի առկայությանը: Օրինակ՝ ԱՄՆ-ի Լուիզիանահանգի քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ սիմուլյացիայի կանխավարկած է դիտարկվում վաճառողի կողմից տիրապետման պահպանումը: Երբ վաճառված իրը մնում է վաճառողի փաստացի տիրապետման ներքո, ենթադրվում է, որ առավելագույնը սիմուլյացիա է, և երբ դառնալով վաճառողի ժառանգների և պարտատերերի շահերին, կողմերը պետք է ապացուցեն, որ իրենց կնքած պայմանագիրը սիմուլյացիա չէ (2480-րդ հոդված)<sup>61</sup>:

*Քողարկող գործարքի իրավական նպատակը,*

<sup>60</sup>Տե՛ս Louisiana civil code: Louisiana State Legislature - Legislative Law: Updated for the 2016 Regular Session  
□ հասանելի է [https://legis.la.gov/legis/Laws\\_Toc.aspx?folder=67&level=Parent](https://legis.la.gov/legis/Laws_Toc.aspx?folder=67&level=Parent) հղումով  
22.12.2018թ. դրությամբ □:  
<sup>61</sup>Տե՛ս նույն տեղում:

կարծում ենք, այն իրավական արդյունքն է, որը կանխորոշված է տվյալ տեսակի գործարքը կարգավորող իրավական նորմերում, և որին կհասնեին գործարքի կողմերը, եթե այն չլիներ շինծու և կատարվեր: Օրինակ՝ առավել հաճախակի քողարկող գործարքներից է առուվաճառքի պայմանագիրը, որի իրավական նպատակն է գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը և դրա դիմաց որոշակի դրամական հատուցում ստանալը: Ընդ որում, հարկ է նկատել, որ քողարկող գործարքի իրավական նպատակը չի իրականացվում, քողարկող գործարքի իրավական արդյունքն ավարտին չի հասնում:

Ինչ վերաբերում է *քողարկված գործարքի իրավական նպատակին*, ապա այն, մեր կարծիքով, հիմնականում համընկնում է իրավական արդյունքի հետ, այսինքն՝ նպատակն իրականացվում է: Այսպես՝ եթե գործարքի շինծու լինելը դատական կարգով չի հաստատվում, ապա գործում է այդ գործարքի վավերականության կանխավարկածը, և դրա քողի ներքո իրականացվում է թաքցված գործարքը: Կողմերն այդ դեպքում հասնում են իրենց համար ցանկալի իրավական արդյունքին: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ դատական կարգով հաստատվում է շինծու գործարքի առկայությունը, ապա քողարկված գործարքի իրավական նպատակն իրականացվում է, եթե այդ գործարքը համապատասխանում է տվյալ տեսակի գործարքի կնքվածությանը և վավերականությանն օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին: Միաժամանակ, կարծում ենք, որ քողարկված գործարքի իրավական նպատակին հասնելը կարող է վկայել քողարկող գործարքի շինծու լինելու մասին: Այս կապակցությամբ Վ. Ն. Սուրովյովը նշել է, որ առուվաճառքի պայմանագիրը քողարկող նվիրատվության պայմանագրի շինծու

լի ն ե լ ու մասին կարող է վկայել քողարկված գործարքի՝ առուվաճառքի պայմանագրի բոլոր էական պայմանների կատարման փաստը (առարկա, գին և այլն)<sup>62</sup>:

Գործարքը շինծու որակելու հարցում, մեր կարծիքով, առանձնակի կարևորություն է ներկայացնում *շինծու գործարք կնքելու նպատակը*: Շինծու գործարք կնքելու հիմնական նպատակն է գործարքի կողմերի համար «բացասական» հետևանքներից խուսափելը, որոնք կառաջանային, եթե քողարկված գործարքը կնքվեր բացահայտ: Այդպիսի հետևանքներ կարող են լինել գոլթի բռնագրավումը, գոլթի վրա արգելանք դնելը կամ բռնագանձում տարածելը կանխելը, հարկերը կրճատելը կամ հարկերից խուսափելը, վաշխառությունը, օտարերկրյա քաղաքացու կողմից հողամասի նկատմամբ սեփականություն իրավունք ձեռք բերելու արգելքի պարագայում փաստացի այդ իրավունքի ձեռք բերումը, ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը, ընդհանուր սեփականության իրավունքում վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունքը շրջանցելը: Ամուսնության ընթացքում գոլթ ձեռք բերելիս նվիրատվության շինծու պայմանագիր կնքելու նպատակ կարող է լինել այդ գոլթի նկատմամբ մյուս ամուսնու սեփականության իրավունքի ծագումը կանխելը (որպես համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գոլթ):

Պրակտիկայում շինծու գործարք կնքելու նպատակները մեծամասամբ իրավական բնույթ են կրում: Մինչդեռ շատ հազվադեպ շինծու գործարքը կեղծ գործարքի նման կարող է կնքվել այլ շարժառիթներով ևս, օրինակ՝ նվիրատվության

<sup>62</sup>Տե՛ս **Соловьев В. Н.** "Настольная книга судьи по гражданским делам" // Ефимов Л. Ф., Зайцев В. Ю., Манохина Г. В. и др.; под ред. Толчеева Н.К. 2-е изд., перераб. и доп. М: Велби, Проспект, 2008, էջ 169:

պայմանագրով առուվաճառքի պայմանագիրը քողարկելու շարժառիթ կարող է լինել մեծ չափի գումար ունենալու հանգամանքը թաքցնելու ցանկությունը<sup>63</sup>: Ինչպես կեղծ գործարքի դեպքում, այստեղ ևս հարց է ծագում, թե արդյոք շինծու գործարքի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է համարվում շինծու գործարք կնքելու *իրավական բնույթի* որևէ «թաքնված» նպատակի առկայությունը: Կարծում ենք, որ այս հարցի պատասխանը ևս պետք է փնտրել՝ ելնելով քաղաքացիական հարաբերությունների կարգավորման ոլորտում շինծու գործարքի անթույլատրելիության օրենսդրական պահանջի նշանակությունից: Ինչպես արդեն նշել ենք, շինծու գործարքների կնքման անթույլատրելիության նկատմամբ պետության ռեակցիան արտահայտվում է՝ այդ գործարքն անվավեր համարելով և անվավերության համապատասխան հետևանքներ կիրառելով: Ի տարբերություն կամքի և կամահայտնության անհամապատասխանության հիմքով անվավեր համարվող մյուս գործարքների (եական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության, խաբեության, բռնության կամ սպառնալիքի ազդեցության ներքո կնքված)՝ շինծու գործարքների համար սահմանված են անվավերության առանձնահատուկ հետևանքներ: Մասնավորապես՝ թե շինծու գործարքով քողարկված գործարքը համապատասխանում է գործարքների վավերականությանը ներկայացվող ընդհանուր պահանջներին, ապա կողմերի միջև

<sup>63</sup>Տե՛ս թիվ ՍԴ 1/0412/02/15 քաղաքացիական գործով ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. հոկտեմբերի 21-ի վճիռը: Մասնավորապես՝ հայցվորն իր դիրքորոշման շրջանակներում նշել է, որ պատասխանողը «չի ցանկացել, որ իրենց գյուղում իմանան, որ ինքը նման գումար ունի, որ ինքը գնել է այդ շենքը, այդ իսկ պատճառով խնդրել է ձևակերպել նվիրատվության պայմանագիր, այլ ոչ թե կնքել առուվաճառքի պայմանագիր»:

ձևավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են այդ գործարքին վերաբերող կանոնները: Այսինքն՝ այդ հարաբերություններին հաղորդվում է իրավական բնույթ:

Մեր կարծիքով՝ շինծու գործարքների անվավերության նման հետևանքներ նախատեսելու նպատակն է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումը՝ ելնելով գործարքի մասնակից չհանդիսացող անձանց, պետության ու համայնքների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Հետևաբար, որպես կանոն, չի կարելի խոսել շինծու գործարքի առկայության մասին բոլոր այն դեպքերում, երբ կողմերը շինծու գործարք կնքելիս չեն հետապնդել որևէ իրավական առավելություն ստանալու, օրենդորական արգելք կամ սահմանափակում շրջանցելու կամ դրանցից խուսափելու նպատակ: Իհարկե, կողմերը կարող են առանց որևէ հակաիրավական նպատակ հետապնդելու ձևականորեն կնքել գործարքներ, որոնցում առկա է կամքի և կամահայտնության անհամապատասխանություն, սակայն նման գործարքների անվավերության հարցը, ինչպես արդեն նշել էինք, որպես կանոն, չի բարձրացվի, քանի որ հակաիրավական նպատակի բացակայության պատճառով չի ծագի գործարքի մասնակից չհանդիսացող անձանց, պետության կամ համայնքների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտություն: Նման իրավական դիրքորոշում է արտահայտվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից՝ մասնավորապես նշելով հետևյալը. «(...) շինծու գործարք կնքելիս կողմերը նպատակ են հետապնդում հասնելու այն արդյունքին, որը նրանք կունենային քողարկված գործարքը բացահայտ կնքելիս՝ միաժամանակ խուսափելով քողարկված գործարքի կնքման

հետևանքով իրենց համար առաջացող իրավական հետևանքներին»<sup>64</sup>:

Այս կապակցությամբ, կարծում ենք, հիշարժան է Իտալիայի քաղաքացիական օրենսգրքով նախատեսված շինծու գործարքի իրավակարգավորումը: Իտալիայի քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավակարգավորման հիմնական սկզբունքն այն է, որ սիմուլյացիան (ձևացումը) ինքնին անօրինական չէ: Յետևաբար, կողմերն իրավունք ունեն կնքելու պայմանագիր, որը չի արտահայտում իրենց իրական համաձայնությունը: Ընդհանուր կանխավարկածն այն է, որ սիմուլյացիան ինքնին անօրինական չէ, եթե այն չի հետապնդում խարդախ նպատակ: Յետևաբար առերևույթ պայմանագիրը ո՛չ առնչինչ է, ո՛չ վիճահարույց, այլ ի գորու չէ կողմերի համար պարտավորություններ առաջացնել, քանի որ վերջիններիս միջև իրավահարաբերությունները կարգավորվում են նրանց միջև առկա իրական համաձայնությանը համապատասխան <sup>65</sup>:

Նշված հարցի վերաբերյալ ՅՅ դատարանների մոտեցումները ևս տարբեր են: Այսպես՝ գործարքը շինծու որակելիս ոչ միշտ է, որպես ապացուցման ենթակա փաստ, վկայակոչվում շինծու գործարք կնքելու որևէ նպատակի առկայությունը <sup>66</sup>: Սակայն

<sup>64</sup>Տե՛ս թիվ ԵԱԴԴ/1557/02/14 քաղաքացիական գործով ՅՅ վճռաբեկ դատարանի 2018թ. ապրիլի 07-ի որոշումը:

<sup>65</sup>Տե՛ս **Luisa Antonioli, Anna Venezian**, նշված աշխատությունը, էջեր 284-286:

<sup>66</sup>Տե՛ս, օրինակ, թիվ ԱՐԴ/2516/02/14 քաղաքացիական գործով ՅՅ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2015թ. սեպտեմբերի 9-ի որոշումը: Մասնավորապես, գործարքի կողմին քողարկող գործարքի վերաբերյալ քաղաքացիական գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ դատարանը հարկ է համարել պարզել հետևյալ իրավական հարցադրումները. արդյո՞ք մի կողմից հայցվորի և մյուս կողմից Ա.-ի կամքն ուղղված է եղել պայմանագրով քողարկված այլ պայմանագիր կնքելուն, և արդյո՞ք նշված գործարքն իրականում կնքվել է ոչ թե այն ստորագրած անձանց, այս ոգեպքում՝ հայցվորին և Ա.-ի միջև, այլ՝ ուրիշ անձանց միջև: Արդյո՞ք պայմանագիրը կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

կան գործեր, որոնցում դատարանը շեշտադրել է պայմանագրի կողմին քողարկելու որևէ նպատակի առկայությունն ապացուցելու անհրաժեշտությունը<sup>67</sup>:

Այսպիսով, գտնում ենք, որ գործարքը շինծու որակելու համար ևս նպատակը պետք է ունենա իրավական նշանակություն, այսինքն՝ գործարքը շինծու ճանաչելիս պետք է ապացուցել ոչ միայն գործարքի կողմերի կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը, այլ նաև շինծու գործարքով այլ գործարք քողարկելու նպատակի և շինծու գործարք կնքելու որևէ քողարկված նպատակի առկայությունը, որն էլ, մեր կարծիքով, որպես կանոն, կրում է հակաիրավական բնույթ<sup>68</sup>:

---

<sup>67</sup>Տե՛ս, օրինակ, թիվ ԱՐԴ/1028/02/14 քաղաքացիական գործով ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. փետրվարի 18-ի վճիռը: Մասնավորապես, դատարանը նշել է. «(...) պարզ է, թե Ռուբեն Դարբինյանի՝ պայմանագրի ենթադրյալ կողմ լինելու պարագայում ինչն է խոչընդոտ կամ արգելք հանդիսացել Ռուբեն Դարբինյանի կողմից առավաճառքի պայմանագիրն անձամբ կնքելու համար: Այսինքն՝ բացակայում է պայմանագրի իրական կողմին քողարկելու իրական շարժառիթն ու նպատակը»:

<sup>68</sup>Նպատակի իրավական նշանակության կարևորությունը գործարքը շինծու որակելու հարցում արձանագրվել է նաև թիվ ԵԱԴԴ/1557/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2018թ. ապրիլի 07-ի որոշմամբ:

**§ 1.2. Կամքի և կամահայտնություն  
առանձնահատկությունները կեղծ և շինծո  
գործարքներում**

Կամքի՝ որպես մարդու վարքագծի որոշիչ գործոնի մասին հասկացողությունը ձևավորվել է դեռևս Յին Յունաստանում և առաջին անգամ հստակ ձևակերպվել Արիստոտելի կողմից (մ. թ. ա. 384-324 թթ.): Վերջինս այդ հասկացողությունը ձևակերպել է, որպեսզի տարբերակի այն արարքները, որոնք իրականացվում են սուբյեկտի բնականորեն կայացված որոշումներով (որովհետև այդպես է պետք), այն արարքներից, որոնց հիմքում ընկած են սուբյեկտի ցանկությունները: Կամքի արիտոտելյան հասկացողության համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ կամքը ոչ միայն նախաձեռնում է, այլ նաև ընտրում է կամավոր գործողություններ, ինչպես նաև կարգավորում է դրանց իրականացումը: Ռ. Դեկարտի կարծիքով, կամքն օգնում է մարդուն հետևելու որոշակի կանոնների՝ ելնելով բնականության մեջ բարու և չարի վերաբերյալ առկա պատկերացումներից<sup>69</sup>:

Կամք հասկացությունն ու շահորոշյան է արժանանում տարբեր գիտությունների կողմից: Կամք հասկացությունն սուբստանսիալում է նաև իրավագիտության մեջ, այդ թվում՝ քաղաքացիական իրավունքի շրջանակներում: Օրինակ՝ ինչպես առհասարակ գործողության իրականացման, այնպես էլ գործարքների կնքման համար առաջնային նշանակություն է ստանում հենց սուբյեկտի կամքը (մտադրությունը): Մինչդեռ միայն կամքի առկայությունը բավարար չէ՝ իրավահարաբերություններ առաջացնելու,

<sup>69</sup>Տե՛ս **Ильин Е. П.** "Психология воли". 2-е изд. - СПб.: Издательство: Питер, 2009. (Серия «Мастера психологии»), էջ 28:



փոփոխելու կամ դադարեցնելու համար: Յետևաբար կամքը պետք է ընկալել ի լինի շրջապատի համար, այսինքն՝ արտահայտվի: Կամքի արտահայտման ձևը, միջոցը, եղանակն էլ կոչվում է կամահայտնություն: Կամքը և կամահայտնությունը հարաբերվում են ինչպես ձևը բովանդակության հետ:

Նշվածն իր նորմատիվ ամրագրումն է ստացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածներում: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ «Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու և կամ դրանց դադարեցնելուն»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Օրենքին, այլ իրավական ակտերին կամ կողմերի համաձայնությանը համապատասխան միակողմ գործարք կնքելու համար անհրաժեշտ և բավարարելի կողմի կամքի արտահայտությունը»:

Կամքը և կամահայտնությունը որոշիչ նշանակություն ունեն հատկապես գործարքի վավերականության տեսանկյունից: Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ առանձնացվում են գործարքի վավերականության հետևյալ չորս պայմանները՝ բովանդակության օրինականությունը, գործարքի կնքման համար կողմերի իրավունակության և գործունակության առկայությունը, գործարքի ձևի պահպանումը և գործարքի կողմերի կամքի

համապատասխանությունը կամահայտնությունը :  
Նշված պայմաններին օրենքով նախատեսված  
հանգեցնում է գործարքի անվավերությունը 70:

Կամքը որոշիչ նշանակություն է ստանում նաև  
կեղծ և շինծու գործարքների դեպքում: Մինչդեռ  
կեղծ և շինծու գործարքների անվավերության  
հիմքի վերաբերյալ կարծիքները գրականության  
մեջ տարբեր են: Հեղինակների մի մասը կեղծ և  
շինծու գործարքները դիտարկում է որպես  
հակաօրինակ գործարքներ<sup>71</sup>: Երբեմն էլ այդ  
գործարքները համարվում են բովանդակության  
արատով գործարքներ<sup>72</sup>: Սակայն հեղինակների  
մեծամասնության կարծիքով՝ կեղծ և շինծու  
գործարքները պատկանում են կամքի արատով  
գործարքների շարքին<sup>73</sup>: ՀՀ վճռաբեկ դատարանը ևս  
կեղծ և շինծու գործարքները դիտարկում է որպես  
կամքի արատով գործարքներ<sup>74</sup>:

Կեղծ և շինծու գործարքները պատկանում են  
կամքի արատով գործարքներին, քանի որ սահմանված  
ձևով արտահայտված կողմերի կամահայտնությունը  
չի համապատասխանում նրանց ներքին կամքին:

<sup>70</sup>Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.**: Հայաստանի Հանրապետության  
քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. (երրորդ  
հրատարակություն)- Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի համալս.  
հրատ., 2006, էջեր 219-220, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի  
2001թ. սեպտեմբերի 26-ի «Գործարքների անվավերության  
վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» թիվ 43  
պարզաբանող որոշումը:

<sup>71</sup>Տե՛ս **Мельникова Ю. В.**, նշված հոդվածը, էջ 8: **Иоффе О. С.** "Советское гражданское право", М.,  
Юрид. лит., 1967, էջ 291 (հասանելի է <https://www.twirpx.com/file/1579342/> հղումով  
22.12.2018թ. դրությամբ):

<sup>72</sup>Տե՛ս **Сергеев А. П., Толстой Ю. К.** (отв. ред.) "Гражданское право": учеб. в 3 т. Т.1./М.: ТК Велби, изд-во Проспект, 2005,  
էջեր 308-309: **Сенина Ю. Л.**, "Категория воли в гражданском праве России (в аспекте гражданско-правовой сделки)":  
диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Новосибирск - 2006, էջեր 102-106: **Зарубин А.  
В.** "Недействительность сделок с пороками воли": диссертация на соискание ученой степени кандидата юридических наук.  
Краснодар - 2003, էջ 38: **Емельянова К. И.** "Сделки с пороками" // Нотариус - 2007. Издательская группа Юрист,  
Москва. №2, էջեր 31-32: **Матвеев В. И.** "Правовая природа недействительных сделок". М. Юрлитинформ, 2002, էջ  
76:

<sup>73</sup>Տե՛ս **Хейфец Ф. С.** "Недействительность сделок по российскому гражданскому праву", Хейфец Ф. С. - 2-е изд., доп. - М.:  
Юрайт, 2000, էջ 84: **Кузнецова О. А.**, նշված հոդվածը, էջ 13: **Сергеев А. П.** (ред.) "Комментарий к  
Гражданскому кодексу Российской Федерации (постатейный)". Часть 1: учеб. - практич. комментарий / Е. Н. Абрамова, Н. Н.  
Аверченко, Ю. В. Байгушева (и др.) - Москва: Проспект, 2012, էջ 453:

<sup>74</sup>Տե՛ս թիվ 3-1258 (Տ Դ) քաղաքացիական գործով 2007թ. սեպտեմբերի 5-ի,  
թիվ Կ Դ 1/0935/02/14 քաղաքացիական գործով 2016թ. հունվարի 22-ի՝ ՀՀ  
վճռաբեկ դատարանի որոշումները:

Ինչպես հայտնի է, կամքի արատով գործարքները հիմնականում համարվում են վիճարկելի: Կեղծ և շինծոն գործարքները օրենսդիրը համարել է առնչինչ գործարքներ, այսինքն՝ գործարքներ, որոնց դեպքում չի պահանջվում անվավերության հաստատում դատարանի կողմից: Միևնույն ժամանակ գործարքով կողմերի արտահայտած կամահայտնության անհամապատասխանությունը կողմերի իրական կամքին ակնհայտ փաստ է, որը պետք է հաստատվի հիմնավորապես ուղղակի 75:

Կամահայտնության միջոցով սուբյեկտը երրորդ անձանց հայտնում է իր մտադրությունների մասին: Կամահայտնությունը կարող է լինել ուղղակի՝ «անմիջական», այդ թվում՝ բանավոր կամ գրավոր ձևով, կամ անուշխալ «միջնորդավորված»: Վերջին դեպքում սուբյեկտի ներքին կամքի մասին կարելի է դատել այն գործողություններով, որոնք նա իրականացնում է 76: Սուբյեկտի կամահայտնության ներքին կամքի միջև համապատասխանությունն առկա է, երբ սուբյեկտը ճիշտ պատկերացում ունի իր կողմից կնքվող գործարքի և դրամիջոցով ստացվող արդյունքի վերաբերյալ, ընդ որում գործարքը կատարելու իր ցանկությունը կամավոր է և լուրջ 77:

Կամքի և կամահայտնության անհամապատասխանության բոլոր դեպքերը, ըստ Դ. Դ. Գրիմմի, կարող են ներառվել երկու խմբում՝ կանխամտածված և ոչ կանխամտածված: Կամքի և կամահայտնության ոչ կանխամտածված անհամապատասխանությունն առաջանում է սուբյեկտի նկատմամբ որևէ արտաքին պատճառի ներգործության հետևանքով (կոնտրագենտի, երրորդ անձանց կողմից խաբեություն կամ հարկադրանք)

75Տ է՝ս **Сергеев А. П.** (ред.) "Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации (постатейный)". Часть 1: учеб. - практич. комментарий / Е. Н. Абрамова, Н. Н. Аверченко, Ю. В. Байгушева (и др.) - Москва: Проспект, 2012, է ջ 453:

76Տ է՝ս **Кратенко М. В.**, նշված աշխատությունը, է ջ 42:

77Տ է՝ս նույն տեղում, է ջ 43:

կամ գործարքի բնույթի և դրանով հասանելի քարոյունքի վերաբերյալ սուբյեկտի սխալ պատկերացման հետևանքով (մոլորություն): Կամքի և կամահայտնություն կանխամտածված անհամապատասխանությունն առկա է, երբ գործարքը կնքվում է առանց իրավական հետևանքներ առաջացնելու լուրջ մտադրություն (կատակով գործարքներ) կամ երրորդ անձանցից կողմերի իրական մտադրությունները թաքցնելու նպատակով (ձևացված գործարքներ): Կամքի և կամահայտնության կանխամտածված անհամապատասխանություն՝ երրորդ անձանցից կողմերի իրական մտադրությունները թաքցնելու նպատակով, առկա է կեղծևշինծու գործարքներում<sup>78</sup>:

Այս կապակցությամբ ՅՅ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: ՅՅ վճռաբեկ դատարանը, բացահայտելով «կամք» և «կամահայտնություն» հասկացությունների բովանդակությունը, նշել է, որ «կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպասած՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է: Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտնության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է

<sup>78</sup>Տե՛ս Гримм А. А. "Лекции по догме римского права": Учебник, Москва, издательство "Зерцало", 2003, էջեր 137-138:

պայմանավորված լինել ինչպես գործարքը կնքած անձանց անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությունը<sup>79</sup>:

Կեղծ և շինծու գործարքներ կնքող սուբյեկտների կամքը ձևավորվում է բնականոն ճանապարհով և ոչ խաբուսիկ պատկերացումների ազդեցության տակ, կողմերը գիտակցում են իրենց մտադրությունների կեղծ լինելը և ցանկանում են, որ կեղծ կամ շինծու գործարքին բնորոշ հետևանքները չառաջանան: Կողմերի կամահայտնությունը ձևավորվում է ազատորեն:

Գրականության մեջ հիմնականում քննարկման առարկա է դարձել կեղծ և շինծու գործարքները դիտավորություն կնքելու հարցը: Մասնավորապես՝ Օ. Ա. Կուզնեցովան, անդրադառնալով շինծու գործարքի սուբյեկտիվ կողմին, նշել է, որ այդ գործարքը կնքվում է մեղքի դիտավորության ձևով: Ըստ հեղինակի՝ շինծու գործարքն անզգուշաբար կամ պատահաբար կնքել հնարավոր չէ<sup>80</sup>: Մ. Ս. Մուրաշկոն նշել է, որ շինծու գործարքին օրենսդրությունով տրված բնորոշումը ցույց է տալիս դիտավորության բոլոր նշանները՝ գործարքի մասնակիցների կողմից իրենց գործողությունների հակաիրավական բնույթի գիտակցումը, նման գործողությունների հնարավոր արդյունքի կանխատեսումը, դրան հասնելու ցանկությունը<sup>81</sup>: Իսկ ըստ Ի. Ա. Դանիլովի՝ գործարքը ճանաչվում է շինծու, ի թիվս այլ պայմանների, գործարքի կողմերի մոտմեղքի դիտավորության ձևի առկայությունը, այսինքն՝ երբ կողմերը

<sup>79</sup>Տե՛ս թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՅՅ վճռաբեկ դատարանի 2015թ. հունիսի 17-ի որոշումը:

<sup>80</sup>Տե՛ս **Кузнецова О. А.**, նշված հոդվածը, էջ 18:

<sup>81</sup>Տե՛ս **Мурашко М. С.**, նշված հոդվածը:

գիտակցում են իրենց գործողությունների հետևանքները<sup>82</sup>:

Կեղծ և շինծու գործարքների կողմերի կամքը համապարփակ բացահայտելու նպատակով՝ նախնշենք, որ ցանկացած գործարքի վավերականությունը գնահատելիս պետք է քննարկման առարկա դառնա գործարքը կնքելու, գործարքին իրավաբանական ուժ հաղորդելու և այդ գործարքին բնորոշ իրավական արդյունքին հասնելու համար անհրաժեշտ կամքը, այսինքն՝ գործարքը կնքելու և այն կատարելու ցանկությունը, մտադրությունը: Մեր կարծիքով, կեղծ և շինծու գործարքներում առկա է կամքի արատ<sup>83</sup>: Այսպես՝ կեղծ գործարքը կնքվում է կողմերի ազատորեն ձևավորված կամքով, սակայն այն կատարելու ցանկությունը բացակայում է: ՀՀ վճռաբեկ դատարանը ևս փաստել է, որ կեղծ գործարքը համարվում է կամքի արատով գործարք, քանի որ այն չի պարունակում գործարքի կողմերի նպատակադրված կամային ակտը՝ ներքին կամքը, ուղղված իրավունքների և պարտականությունների ծագմանը, փոփոխմանը կամ դադարմանը<sup>84</sup>: Շինծու գործարքի դեպքում կողմերի կամքը չի սահմանափակվում միայն շինծու գործարքը կնքելու և այն չկատարելու ցանկությամբ, քանի որ շինծու՝ քողարկող գործարքն արդեն իսկ ենթադրում է քողարկված գործարքի առկայությունը, և կողմերի կամքը ներառում է նաև քողարկված գործարքը կատարելու մտադրությունը:

Միաժամանակ գտնում ենք, որ կեղծ և շինծու

<sup>82</sup>Տե՛ս **Данилов И. А.**, նշված հոդվածը, էջ 35:

<sup>83</sup>Գրականության մեջ տեսակետ է արտահայտվել, որ կեղծ գործարքների դեպքում, ըստ էության, առկա է միայն կամահայտնությունը, որի հիմքում առկա չէ կամքը՝ կատարելու նշված գործարքը, այն կնքվում է միայն տեսանելության համար (տե՛ս **Козяр Н. В.**, նշված ատենախոս., էջ 121):

<sup>84</sup>Տե՛ս թիվ ԿԴ 1/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. հունիսի 22-ի որոշումը:

գործարքներում կամքի  
առանձնահատկություններն այդքանով չեն  
ավարտվում, քանի որ միայն գործարքը կնքելու,  
սակայն այն չկատարելու կամքի առկայությունը  
պարզելը հնարավորություն չի տալիս՝  
տարբերակելու կեղծ և շինծու գործարքները կամքի  
արատով մյուս գործարքներից (օրինակ՝ սխալ մամբ  
կամ կատակով, բռնություն, խաբեություն,  
մոլորություն ազդեցության տակ կնքված  
գործարքներից): Բանն այն է, որ կեղծ և շինծու  
գործարքների կողմերի կամքը ներառում է նաև կեղծ  
և շինծու գործարքներ կնքելու միջոցով օրենքով  
սահմանված արգելքներն ու սահմանափակումները  
շրջանցելու կամ որոշակի հակաիրավական նպատակի  
հասնելու կամ որոշակի առավելություններ  
ստանալու ցանկությունը, մտադրությունը,  
դիտավորությունը:

Անդրադառնալով կեղծ և շինծու գործարքների  
դեպքում կողմերի կամքի մյուս  
առանձնահատկությանը՝ գտնում ենք, որ *գործարքը  
կեղծ կամ շինծու որակելու համար անհրաժեշտ է  
կեղծ կամ շինծու գործարք կնքելու և այդ  
գործարքը չկատարելու ընդհանուր կամքի  
առկայությունը գործարքի բոլոր կողմերի մոտ:  
Միայն մեկ կողմի մոտ նման խաթարված կամքի  
առկայությունը բավարար չէ գործարքը կեղծ կամ  
շինծու որակելու համար: Նշվածը հաստատվում է  
նաև գրականության մեջ արտահայտված  
տեսակետներով (օրինակ՝ գործարքի բոլոր կողմերի  
մոտ շինծու կամ կեղծ գործարք կնքելու  
մտադրության պարտադիր առկայության մասին նշել  
են Ի.Ա.Դանիլովը, Ն.Վ.Ռաբինովիչը, Դ.Ի.Միկոբյան, Ռ.  
Յուրևը և այլ հեղինակներ<sup>85</sup>):*

<sup>85</sup>Տե՛ս **Данилов И. А.**, նշված հոդվածը, էջ 34: **Рабинович Н. В.** "Недействительность сделок и ее последствия". - Ленинград: Изд-во ЛГУ, 1960, էջ 86: **Мындра Д. И.** "Недействительность сделки, не соответствующей

Կեղծ գործարք կնքելու և այդ գործարքը չկատարելու երկու կողմերի ընդհանուր կամքի պարտադիր առկայության անհրաժեշտությունն արձանագրվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործարքը կեղծ որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի գործարքի բոլոր կողմերի կամքն ուղղված լինի առերևույթ հարաբերության ծագման տպավորությունն ստեղծելուն, հակառակ դեպքում, եթե գործարքի կողմերից միայն մեկն է նման նպատակ հետապնդում, ապա առկա կլինի կամքի արատով այլ գործարք, քանի որ երկկողմ գործարքը համաձայնեցված կամքի արտահայտությունն է, և եթե գործարքը ձևակերպվում է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, ապա դա չի կարող լինել միայն մեկ կողմի ցանկությունը: Կողմերից մեկի դիտավորության բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ գործարքի կեղծ լինելը հաստատելու համար, քանի որ գործարքի բարեխիղճ կողմը չպետք է տուժի մյուս կողմի անբարեխիղճության հետևանքով: Բացի այդ, կեղծ գործարքի նպատակը իրավահարաբերության պատրանք ստեղծելն է, իսկ նման տպավորությունն ստեղծելու համար անհրաժեշտ է, որպեսզի բոլոր կողմերն իսկզբանե նման ցանկություն ունենան<sup>86</sup>:

Ինչ վերաբերում է շինծու գործարքին, ապա նշենք, որ շինծու գործարքի դեպքում կողմերի կամքի դրսևորումն ունի որոշակի առանձնահատկություններ: Ինչպես նշում է Դ. Ի. Մեյերը. «Շինծու գործողությունը կամքի դրսևորում է, մինչդեռ այն չի սահմանափակվում

закону или иным правовым актам": Диссертация к.ю.н. - Екатеринбург, 2003, с. 94: Юрьев Р. "Притворные сделки" // Хозяйство и право. Изд. Журнал Хозяйство и право, Москва, № 8. 2004, с. 12:

<sup>86</sup>Տե՛ս թիվ ԿԴ 1/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. հունիսի 22-ի որոշումը:



շինծու գործողությունը, այլ ստեղծում է այնպիսի  
 իրադրություն, որի արդյունքում առաջացնում է  
 այնպիսի հետևանքներ, որոնք սովորաբար դրանից  
 չեն բխում, այլ ըստ էության կապված են այլ  
 գործողության հետ»<sup>87</sup>: Երբ հաստատվում է գործարքի  
 շինծու լինելը, դրանով հաստատվում է երկու  
 գործարքի գոյություն փաստը՝ քողարկող (շինծու) և  
 քողարկված: Բացի այդ, անվավեր գործարքների  
 շարքում շինծու գործարքներն առանձնանում են  
 անվավերության հատուկ հետևանքներով  
 (կիրառվում են քողարկված գործարքին վերաբերող  
 կանոնները): Յետևաբար կարևորություն է ստանում  
 ինչպես շինծու գործարքի, այնպես էլ քողարկված  
 գործարքի կողմերի կամքի բացահայտումը:  
 Քողարկված գործարքում, որը կողմերն իրականում  
 նկատի են ունեցել, կամքի և կամահայտնության  
 միասնությունն ապրիորի գոյությունն չունի:  
 Քողարկված գործարքն իրավաբանական փաստ  
 ճանաչելը, որի հիման վրա ծագում, փոփոխվում կամ  
 դադարում են քաղաքացիական իրավունքներ, տեղի է  
 ունենում կամքի և կամահայտնության  
 միասնության պահանջին հակառակ: Իրականում  
 կողմերի նկատի ունեցած գործարքի նկատմամբ,  
 հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այդ  
 գործարքին վերաբերող կանոնները: Տվյալ  
 իրավադրույթը ստեղծում է միանգամայն  
 յուրահատուկ իրավիճակ, քանի որ  
 հնարավորություն է տալիս կամային  
 գործողության նկատմամբ ճանաչել գործարքի  
 հատկանիշներն այլ անձանց և պետությանը

<sup>87</sup>Տե՛ս **Мейер Д. И.** "О юридических вымыслах и предположениях, скрытых и притворных действиях", Казань, 1854,  
 էջ 85 (հասանելի է <https://naukaprava.ru/catalog/297/615/13725?view=1> հղումով 22.12.2018թ.  
 դրությամբ):

հասանելի կամահայտնության բացակայության պայմաններում<sup>88</sup>:

Նախ նշենք, որ գործարքը շինծու որակելու համար այդ գործարքի բոլոր կողմերի կամքը պետք է լինի այլ գործարք քողարկելը: Ընդ որում, երկու կողմերն էլ պետք է գիտակցեն իրենց կողմից կնքվող գործարքի շինծու բնույթը և չցանկանան այդ գործարքով նախատեսված պարտավորությունների առաջացումը (նշված ընդհանուր կանոնից բացառությամբ կարող է լինել միայն 2-րդ գլխի 2.2-րդ պարագրաֆում մեր կողմից որպես շինծու գործարքի տեսակ առաջարկված իրական կողմի քողարկման նպատակով կնքված այն շինծու գործարքը, որում կողմին քողարկելու նպատակ են հետապնդում միայն գործարքի մի կողմի մասնակիցները):

Այստեղ հիշարժան է մեջբերել Մեծ Բրիտանիայում շինծու գործարքին տրված դասական բնորոշումը. Կողմերի կատարած գործողությունները կամ կազմած փաստաթղթերը \$իկտիվ (կեղծ, շինծու) են, եթե վերջիններս նպատակ ունեն երրորդ կողմի կամ դատարանի առջև ստեղծել որոշակի իրավունքների կամ պարտականությունների գոյության տպավորություն, որոնք իրականում տարբերվում են այն իրավունքներից և պարտականություններից, որոնք կողմերը մտադիր են ստեղծել (եթե իհարկե մտադիր են որևէ իրավունք կամ պարտականություն ստեղծել): Միաժամանակ նշվել է, որ բոլոր կողմերը պետք է ունենան \$իկտիվ (կեղծ, շինծու) գործարք կնքելու ընդհանուր մտադրություն: Միայն մեկ կողմի մոտևման գործարք կնքելու մտադրության առկայության դեպքում մյուս կողմի մոտ

<sup>88</sup>Տե՛ս **Рябов А. А.** "К вопросу о притворности сделок", "Законодательство". Изд: Фонд Правовая поддержка, Москва, N 9, сентябрь 2008г. (հասանելի է <http://w.pc-forums.ru/241.html> հղումով 22.01.2017թ. դրությամբ):

մոլորոլթյան հիմքով համապատասխան իրավունքներ են առաջանում<sup>89</sup>:

Կարծում ենք, որ շինծու գործարքի էոլթյանը հակասող տեսակետ է արտահայտվել Յոլ. Վ. Մելնիկովայի կողմից: Ըստ հեղինակի՝ շատ հաճախ շինծու գործարքները ծագում են նաև այն պատճառով, որ քաղաքացիները պարզապես չգիտեն և չեն հասկանում, թե ինչ գործարք է պետք կնքել: Այդ պատճառով էլ օրենքը հնարավորոլթյոլն է ընձեռում ոլղղել նման սխալները<sup>90</sup>: Այս կապակցոլթյամբ հարկ է նշել, որ բոլոր այն դեպքերոլմ, երբ գործարքի երկոլ կողմերի կամ որևէ կողմի մոտբացակայել է կնքված գործարքով այլ գործարք բողարկելոլ կամքը, ապա չի կարող խոսք լինել գործարքի շինծու լինելոլ մասին: Այստեղ պետք է քննարկել կամքի այլ արատների հարցը: Եթե շինծու գործարք կնքելոլ մտադրոլթյոլնն առկա է եղել միայն մեկ կողմի մոտ, իսկ մյոլս կողմը մոլորվել է գործարքի բնոլյթի հետ կապված, ապա այդ գործարքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի չէ: Նման գործարքը համապատասխան հանգամանքների առկայոլթյան պայմաններոլմ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի հիման վրա կարող է անվավեր ճանաչվել որպես էական նշանակոլթյոլն ոլնեցող մոլորոլթյան ազդեցոլթյան տակ կնքված գործարք<sup>91</sup>:

<sup>89</sup>Տե՛ս **Holly Doyle & Simon Passfield**, նշված հոդվածը:

<sup>90</sup>Տե՛ս **Мельникова Ю. В.**, նշված հոդվածը, էջ 9:

<sup>91</sup>Մոլորոլթյոլնը գործարք կնքած կողմի կամքի շեղումն է (կամքի խեղաթյոլրոլմը) կամ շեղման արդյոլնքն է, որն ոլնի որոշիչ ազդեցոլթյոլն գործարքի կնքման և (կամ) դրա կնքման համար էական նշանակոլթյոլն ոլնեցող հանգամանքների վրա: Այն, որպես կանոն, հիմնված է սխալ ենթադրոլթյան (պատկերացման) վրա: Մոլորոլթյան ազդեցոլթյան տակ կնքված գործարքոլմ կողմի կամքը համապատասխանոլմ է նրա կամահայտնոլթյանը, սակայն այն ձևավորվոլմ է գործարքի կնքման համար նշանակոլթյոլն ոլնեցող հանգամանքների սխալ պատկերացման արդյոլնքոլմ, որոնք կարող են պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով (օրինակ՝

Երկկողմ գործարքը կնքողներին միայն մեկ կողմի մոտ խաթարված կամ քի առկայ ու թյան դեպքում գործարքը կարող է նաև դիտարկվել որպես խաբե ու թյամբ կնքված գործարք (վիճահար ույց գործարք)<sup>92</sup>, որի համար օրենսդիրը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդված) սահմանել է անվավեր ճանաչելու այլ հիմքեր և դրանից բխող հետևանքներ<sup>93</sup>:

Հարկ է նկատել, որ դատական պրակտիկան ոչ միշտ է ընթանում վերոնշյալին համապատասխան: Օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանը շինծու գործարք է համարել Ա.-ի և Բ.-ի միջև կնքված բնակելի տան, Բ.-ի և Գ.-ի միջև կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագրերը՝ արձանագրելով, որ այդ պայմանագրերի նկատմամբ ենթակա են կիրառման փոխանակ ու թյան պայմանագրի կանոնները:

Մինչդեռ, ըստ դատական գործի փաստական հանգամանքների, Ա.-ն փաստացի բնակվում էր և 2008 թվականին հաշվառվել էր Բ.-ի կողմից Գ.-ին վաճառված բնակարանում: Քաղաքացիական գործում առկա հայտարար ու թյան ներքին, հայցվորի և պատասխանողների բացատր ու թյան ներքին համաձայն՝ Ա.-ն ցանկացել է իր սեփական տունը փոխանակել բնակարանի հետ, ինչի մասին

---

անուշադր ու թյանը, կրթ ու թյան ոչ բավարար մակարդակը, գործարքի առարկայի կամ գործարքի այլ պայմանների մասին անհրաժեշտ տեղեկ ու թյան բացակայ ու թյանը կամ դրա ոչ բավարար կամ թերի լինելը) (տե՛ս թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2015թ. հոկտեմբերի 17-ի որոշ ու մը):

<sup>92</sup>Խաբե ու թյան ներքին գիտակցաբար մոլոր ու թյան մեջ գցել ն է՝ նրա հետ գործարք կնքել ու նպատակ ու վ: Գործարքը, լինել ու վ կամային ակտ, ենթադր ու մ է, որ կողմերից ոչ մեկը չպետք է այն պիսի միջոցներ գործադրի, որպեսզի մյուս կողմը չիմանա կամ սխալ պատկերացնի այն հանգամանքները, որոնք նրա համար վճռական նշանակ ու թյան կարող են ունենալ գործարքը կնքել իս: Խաբե ու թյանմբ կնքված գործարքներ ու մեկ կողմի անբարեխղճ ու թյան ն անպայման ենթադր ու մ է (տե՛ս թիվ ԵԿԴ/1671/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հոկտեմբերի 1-ի որոշ ու մը):

<sup>93</sup>Տե՛ս թիվ 3-793 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. մայիսի 18-ի որոշ ու մը:

տեղեկացրել է Գ.-ին և Գ.-ի ամուսնուն: Վերջիններս տեղեկանալով, որ Բ.-ն ցանկանում է իր բնակարանը փոխանակել սեփական տան հետ, պայմանավորվածությամբ ներառել նրա հետ՝ վճարել 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ և կատարել փոխանակում, ինչից հետո էլ կնքվել են վերոհիշյալ երկու պայմանագրերը:

Միաժամանակ հայցադիմումում նշվել է, որ Ա.-ն, Բ.-ն, Գ.-ն և Գ.-ի ամուսինը գնացել են նոտարական գրասենյակ՝ իրենց բնակարանները փոխանակելու նպատակով համապատասխան պայմանագրեր կնքելու համար: Ա.-ն և Բ.-ն, վստահելով Գ.-ի ամուսնուն, ստորագրել են պայմանագրերը՝ առանց պայմանագրերը ընթերցելու, համոզված լինելով, որ փոխանակում են իրենց բնակարանները: Յետագայում պարզվել է, որ իրենք կնքել են բնակարանի առևձեռն պայմանագիր, որ Ա.-ն իբր իր բնակարանը 1800000 ՀՀ դրամով վաճառել է Բ.-ին, իսկ Բ.-ն 2100000 ՀՀ դրամով իր բնակարանը վաճառել է Գ.-ին և համասեփականությամբ կարգով Գ.-ի ամուսնուն<sup>94</sup>:

Մեր կարծիքով՝ սույն քաղաքացիական գործով գործարքները շինծու որակելու համար անհրաժեշտ կամքի ոչ բոլոր տարրերն են բացահայտվել: Գործարքների շինծու լինելու մասին հետևություն հանգելիս չի հաստատվել կնքված առևձեռն պայմանագրերով բոլոր կողմերի մոտայլ գործարք, մասնավորապես՝ փոխանակության պայմանագիրը քողարկելու կամքի առկայությունը, ավելին հաստատվել է հենց փոխանակության պայմանագիր, այլ ոչ թե առևձեռն պայմանագրեր կնքելու կողմերի մտադրությունը: Միաժամանակ պարզ է, թե ինչ պիսի թաքնված նպատակ են հետապնդել կողմերը

<sup>94</sup>Տե՛ս թիվ ՀՅՔԴ 2/0086/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. դեկտեմբերի 25-ի որոշումը:

փոխանակության պայմանագիրն առուվաճառքի պայմանագրերով քողարկելիս:

Յաշվի առնելով շինծու գործարքի դեպքում երկու գործարքի առկայության հանգամանքը՝ հարկ է պարզել, թե արդյոք շինծու գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու համար բավարար է միայն շինծու գործարքի կողմերի մոտայլ գործարք քողարկելու ընդհանուր կամքի (մտադրության) առկայությունը, թե շինծու գործարքի կողմերի ընդհանուր կամքը պետք է տարածվի նաև քողարկված գործարքի նկատմամբ:

Ա.Յու.Բեժեցկին այս կապակցությամբ նշում է, որ սուբյեկտիվ կողմի առումով գործարքի շինծու բնույթի ապացուցումը տարբերվում է գործարքի կեղծ բնույթի ապացուցման պրոցեսից, քանի որ գործարքը շինծու ճանաչելու համար պարտադիր չէ քողարկող գործարքի կնքման մեջ կողմերի ընդհանուր կամքի առկայությունը: Քողարկված գործարքի կնքման և բոլոր էական պայմաններին հասնելու ընդհանուր կամքի առկայության դեպքում քողարկող գործարքի կնքման կամքը կարող էլի նեղ միայն մեկ կողմի մոտ<sup>95</sup>: Կարծում ենք, որ այս տեսակետը վիճելի է ոչ միայն երկկողմ, այլ նաև միակողմ շինծու գործարքների պարագայում: Ծինծու գործարքի ինչպես օրենսդրական բնորոշումից, այնպես էլ էությունից բխում է, որ այն գործարքում արտահայտված փոխհամաձայնեցված կանխամտածված խաբեությունն է՝ հասնելու որոշակի արդյունքի, որը կողմերը չէին կարող ունենալ քողարկված գործարքը բացահայտ կնքելիս: Եթե խոսքը գնում է երկկողմ գործարքների մասին, ապա քողարկող գործարքի երկու կողմերի մոտ շինծու գործարք կնքելու ընդհանուր կամքի բացակայության դեպքում չի

<sup>95</sup>Տե՛ս **Бежецкий А. Ю.**, նշված ատենախոսություն, էջեր 98-99:

կարող առկա լինել շինծու գործարք (այդ դեպքում առկա են լինում գործարքի անվավերության այլ հիմքեր), իսկ միակողմ շինծու գործարքը թեև կնքվում է մեկ կողմի կամահայտնությամբ, սակայն այդ միակողմ գործարքով երկկողմ գործարքը քողարկելու կամքը պարտադիր առկա է լինում երկու կողմերի մոտ:

Այս հարցի կապակցությամբ կարելի է մեջբերել ՌԴ գերագույն դատարանի դիրքորոշումը: Մասնավորապես՝ վերջինս իր որոշումներինց մեկում նշել է. «Շինծու լինելու հիմքով անվավեր կարող է ճանաչվել միայն այն գործարքը, որն ուղղված է այլ իրավական հետևանքներ առաջացնելուն և քողարկում է գործարքի բոլոր մասնակիցների կամքը: Մասնակիցներից մեկի մոտ շինծու գործարք կնքելու մտադրության առկայությունը բավարար չէ: Կողմերը պետք է հետապնդեն ընդհանուր նպատակ և համաձայնության գան քողարկված գործարքի բոլոր էական պայմանների շուրջ»<sup>96</sup>: Ընդհանուր առմամբ համաձայնելով նշված որոշման հետ՝ միաժամանակ արտահայտենք անհամաձայնությունն առ այն, որ գործարքը շինծու որակելու համար պարտադիր չէ քողարկված գործարքի բոլոր էական պայմանների շուրջ համաձայնության գալը: Մեր կարծիքով, գործարքը շինծու որակելու համար բավարար է միայն այլ գործարք քողարկելու ընդհանուր կամքի առկայությունը, իսկ քողարկված գործարքի որևէ էական պայմանի շուրջ համաձայնության բացակայությունը ոչ թե կազդի գործարքը շինծու որակելու վրա, այլ կհանգեցնի քողարկված գործարքի կնքված չլինելուն (այս մասին խոսվում է 3-րդ գլխի 3.3-րդ պարագրաֆում):

<sup>96</sup>Տե՛ս Определение Верховного Суда РФ от 21.01.2002 № 18-В01-127 (հասանելի է <https://www.lawmix.ru/vas/148575> հղումով 22.12.2018թ. դրությամբ):

Այսպիսով, գտնում ենք, որ գործարքը շինծու որակելու համար անհրաժեշտ է ոչ միայն գործարքի բոլոր կողմերի մոտ տվյալ գործարքից բխող իրավական հետևանքները չառաջացնելու կամքի առկայությունը, այլ նաև այլ գործարք քողարկելու ընդհանուր կամքի առկայությունը, այսինքն՝ կողմերի ընդհանուր կամքը պետք է տարածվի նաև քողարկված գործարքի նկատմամբ: Կողմերի պայմանավորվածությունը պետք է վերաբերի ոչ միայն շինծու, այլ նաև քողարկված հարաբերություններին, քանի որ միայն այդ դեպքում շինծու գործարքը կծառայի իր նպատակին՝ առաջացնելու կողմերի կամ կողմի համար ցանկալի արդյունքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունամբ, ինչպես արդեն նշել էինք, որպես շինծու գործարքի տեսակ առանձնացվել է նաև այն գործարքը, որով քողարկվում է իրականում ոչ այն ստորագրած անձանց միջև կնքված գործարքը<sup>97</sup>, այսինքն՝ քողարկվում է գործարքի իրական կողմը: Այդ դեպքում քողարկող և քողարկված գործարքների սուբյեկտային կազմը չի համընկնում: Նման դեպքերում պետք է առկալի նի ինչպես գործարքի դեյուրե կողմերի, այնպես էլ դե ֆակտո կողմերի մտադրությունը՝ կնքելու շինծու գործարք և այդ գործարքով քողարկելու իրական կողմին □ իրական կողմի քողարկման նպատակով կնքված շինծու գործարքում կողմերի կամքի առանձնահատկություններին մասին խոսվում է նաև 2-րդ գլխի 2.2-րդ պարագրաֆում □:

Կատարված ուսումնասիրության արդյունքում առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կեղծ և շինծու գործարքների հասկացությունները

<sup>97</sup>Տե՛ս թիվ 3-89(S 7) և թիվ 3-35(Կ 7) քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. փետրվարի 1-ի որոշումները:



ձևակերպել հետևյալ կերպ՝ առաջարկվող օրենսդրական ձևակերպումները նախատեսելով որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր.

*«Կեղծ է այն գործարքը, որը գործարքի բոլոր կողմերի դիտավորողությամբ կնքվում է առանց տվյալ գործարքից բխող իրավական հետևանքներ առաջացնելու մտադրողության, և որը կնքելով՝ կողմերը կամ կողմը նպատակ են հետապնդում խոստովանելու որոշակի իրավական հետևանքներից կամ շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ կամ ստանալու որոշակի առավելություններ:*

*Շինծու է այն գործարքը, որը գործարքի բոլոր կողմերի դիտավորողությամբ կնքվում է մեկ այլ գործարք, այդ թվում՝ այլ պայմաններով գործարք, գործարքի որևէ պայման կամ գործարքի իրական կողմին քողարկելու նպատակով, և որը կնքելով՝ կողմերը կամ կողմը նպատակ են հետապնդում խոստովանելու որոշակի իրավական հետևանքներից կամ շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ կամ ստանալու որոշակի առավելություններ»:*

### **§1.3. Կեղծ և շինծու գործարքների իրավական Էությունը**

Կեղծ և շինծու գործարքների իրավական էություն պարզաբանումը ոչ միայն տեսական կարևորություն է ներկայացնում՝ նկատի ունենալով, որ ինչպես ներպետական, այնպես էլ օտարերկրյա հեղինակների կողմից կեղծ և շինծու գործարքների էությունն առանձին վերլուծության գրեթե չի ենթարկվել, այլ նաև

փորձ է գտնել ու գործնականում ծագած այն հարցի  
 լուծումը, թե արդյոք կարող է կեղծ կամ շինծու  
 գործարքի կնքման հետևանքով տուժած անձը  
 (գործարքի մասնակից չհանդիսացող անձը,  
 պետությունը, համայնքը կամ գործարքի կողմը)  
 պահանջել նման գործարքի կնքման հետևանքով  
 պատճառված վնասի հատուցում, եթե նման վնասի  
 հատուցման պահանջի իրավունք կեղծ և շինծու  
 գործարքների անվավերությունը կարգավորող  
 իրավադրույթներով սահմանված չէ: Օրինակ,  
 հռոմեական իրավունքում բացարձակ  
 սիմուլյացիան կողմերի միջև  
 հարաբերություններում որևէ հետևանք չէր  
 առաջացնում, սակայն կարող էր հանգեցնել երրորդ  
 անձանց առջև կողմերի համապարտ  
 պատասխանատվության առաջացման, եթե վերջիններս  
 սիմուլյացիոն ակտերի հետևանքով վնաս էին կրել:  
 Նման դեպքերում սիմուլյացիան կարող էր  
 համարվել դելիկտ<sup>98</sup>:

Նշված հարցի պարզաբանումը կփորձենք գտնել  
 անվավեր գործարքի էությունը բացահայտելու  
 միջոցով: Անվավեր գործարքի էության վերաբերյալ  
 գրականության մեջ արտահայտված տեսակետերը  
 բավականին շատ են և բազմազան: Անվավեր գործարքի  
 էությունը բացահայտում է, և անվավեր գործարքի  
 հասկացությունը տարբեր հեղինակների կողմից  
 ձևավորվում է՝ նախ հիմք ընդունելով գործարքի  
 օրենսդրական բնորոշումը: ՀՀ քաղաքացիական  
 օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝  
 «Գործարքները քաղաքացիների և իրավաբանական  
 անձանց այն գործողություններն են, որոնք  
 ուղղված են քաղաքացիական իրավունքներ և  
 պարտականություններ սահմանելու, փոփոխելու  
 կամ դրանց դադարեցնելու»: Գործարքի նշված

<sup>98</sup>Տե՛ս **Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна**, նշված աշխատությունը, էջ 223:

օրենսդրական սահմանումից նախնառաջ բխում է, որ գործարքը գործողություն է, իսկ այդ գործողության պարտադիր իրավաչափ լինելը հաստատվում է իրավաբանական գրականության մեջ առկա տեսակետներով<sup>99</sup>: Օրինակ, Ի. Ս. Պետերտերսկին նշել է, որ գործարքն օրենքով թույլատրված գործողություն է, և գործարքներ են համարվում միայն այն գործողությունները, որոնք նպատակ ունեն առաջացնելու օրենքով թույլատրվող իրավահարաբերություններ<sup>100</sup>: Յեղիսակիկարծիքով, գործողությունները, որոնք թեև առաջացնում են իրավական հետևանքներ, սակայն չեն օգտվում օրենքի պաշտպանությունից (օրինակ, պարտավորությունը չկատարելը կամ վնաս պատճառելը), գործարքներ չեն համարվում: Յավասարապես, եթե գործողությունն ունի գործարքի տեսք, սակայն ուղղված է օրենքին դեմ կամ օրենքը շրջանցելուն, ապա այն չի համարվում գործարք: Յետևաբար գործարքներ են համարվում միայն այն գործողությունները, որոնք նպատակ ունեն առաջացնելու օրենքով թույլատրված իրավահարաբերություններ<sup>101</sup>:

Բազմաթիվ հեղինակներ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործարքները բացառապես իրավաչափ գործողություններ են, անվավեր գործարքները դասում են ոչ իրավաչափ գործողությունների շարքին<sup>102</sup>, իսկ որոշ

<sup>99</sup>Տե՛ս **Агарков М. М.** "Понятие сделки по советскому гражданскому праву"//Советское государство и право, 1946, էջեր 48-49 (հասանելի է <https://www.twirpx.com/file/687965/grant/> հղումով 22.12.2018թ. դրությամբ): **Բարսեղյան Տ. Կ.:** Յայաստանի Յանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. (երրորդ հրատարակություն)-Երևանի պետ. Յամալս.-Եր.: Երևանի համալս. հրատ., 2006, էջ 206:

<sup>100</sup>Տե՛ս **Перетерский И. С.** (ред.) "Научный комментарий к Гражданскому кодексу РСФСР". "Сделки, Договоры". М.: Юридат, Вып. 5., 1929, էջ 6 (հասանելի է [https://zakon.ru/blog/2014/2/21/pereterskij\\_is\\_sdelki\\_dogovory\\_vypusk\\_v\\_1929\\_nauchnogo\\_kommentariya\\_k\\_gk\\_rfsr\\_pod\\_red\\_sm\\_prushicko](https://zakon.ru/blog/2014/2/21/pereterskij_is_sdelki_dogovory_vypusk_v_1929_nauchnogo_kommentariya_k_gk_rfsr_pod_red_sm_prushicko) հղումով 22.12.2018թ. դրությամբ):

<sup>101</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 6:

<sup>102</sup>Տե՛ս **Алексеев С. С.** "Гражданское право". Учебник под общей редакцией Алексеева С. С. 2-е издание. М., 2009, էջ 104: **Алексеев С. С.** "Проблемы теории права". Курс лекций. Т 1. Свердловск. 1972, էջեր 354-355

հեղինակներ անվավեր գործարքները դիտարկում են այլ հարթության վրա՝ ոչ իրավաչափ լինելն անվավեր գործարքի հատկանիշ չդիտարկելով<sup>103</sup>:

Առաջին խմբի հեղինակներից, օրինակ, Ֆ. Ս. Խեյֆեցը նշել է, որ անվավեր գործարքը չի համարվում գործարք, այլ համարվում է քաղաքացիական իրավախախտում<sup>104</sup>: Ի. Վ. Մատվեևը նշել է, որ բացառությամբ կամքի արատով որոշ գործարքների՝ անվավեր գործարքները համարվում են ոչ իրավաչափ գործողություններ<sup>105</sup>: Օ. Ա. Կրասավաչիկովը ոչ իրավաչափ գործողությունների շարքին է դասել վնասի պատճառումը, գործարքների անվավերությունը, իրավագործության խախտմամբ ընդունված վարչական ակտերը, պայմանագրային պարտավորությունների չկատարումը<sup>106</sup>: Ըստ Յ. Վ. Մելնիկովայի՝ կեղծ գործարքները հակաօրինական գործարքներ են<sup>107</sup>: Վ. Ս. Յեմը նշել է, որ առնչինչ գործարքը, լինելով ոչ իրավաչափ գործողություն, առաջացնում է միայն այն հետևանքները, որոնք օրենքով նախատեսված են այդ դեպքի համար՝ որպես իրավախախտման նկատմամբ ռեակցիա<sup>108</sup>: Ե. Ա. Կրաշեննիկովը, նշելով, որ վիճահարույց գործարքն իր մեջ ոչ իրավաչափ լինելու որևէ նշույլ անգամ չի պարունակում, առնչինչ

(հասանելի է <https://www.twirpx.com/file/648963/> հղումով 22.12.2018թ. դրությամբ):  
**Толстой Ю. К.** "Содержание и Гражданско-правовая защита права собственности в СССР" // Ю.К. Толстой; Отв. ред. О. С. Иоффе; Ленинградский государственный университет им. А. А. Жданова. - Л.: Изд-во ЛГУ, 1955, էջ 46: **Павлова И. Ю.** "Недействительность сделок в российском гражданском праве": Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук: Московская государственная юридическая академия - Москва - 2004, էջ 13:

<sup>103</sup>Տե՛ս **Тузов Д. О.** "Общие учения теории недействительных сделок и проблемы их восприятия в российской доктрине, законодательстве и судебной практике": Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук: 12 00.03 Томс. ун-т, Томск-2006, էջ 8: **Генкин Д.** "Недействительность сделок, совершенных с целью противной закону", Ученые записки ВИЮН. Вып. 5 - М.: Юрид. изд-во МЮ СССР, 1947, էջ 48-51:

<sup>104</sup>Տե՛ս **Хейфец Ф. С.** "Недействительность сделок по российскому гражданскому праву", Хейфец Ф. С. - 2-е изд., доп. - М.: Юрайт, 2000, էջ 12-38:

<sup>105</sup>Տե՛ս **Матвеев И. В.** "Правовая природа недействительных сделок". Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Государственный университет управления - Москва - 2002, էջ 8:

<sup>106</sup>Տե՛ս **Красавчиков О. А.** "Теория юридических фактов в советском гражданском праве". Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук / Свердловский юридический институт - Свердловск. 1950, էջ 14:

<sup>107</sup>Տե՛ս **Мельникова Ю. В.**, նշված հոդվածը, էջ 8:

<sup>108</sup>Տե՛ս **Ем В. С.** "Гражданское право". В 4 т. 1: Общая часть: - отв. ред. Е. А. Суханов. - 3-е изд., перераб. И доп. - М.: Волтерс Клувер, 2008. (Серия «Классический университетский учебник» Моск.), էջ 482-483:

գործարքները համարել է միանշանակ ոչ իրավաչափ գործողություններ <sup>109</sup>:

Երկրորդ խմբի հեղինակներից, օրինակ, Ռ. Վ. Ռաբինովիչն իրաշխատանքում գրում է, որ անվավեր գործարքի համար, ի տարբերություն իրավախախտման, բավարար է միայն օբյեկտիվ իրավունքի խախտումը, և պարտադիր չի պահանջվում վնասի պատճառում ու գործարքի կողմի մեղքի առկայություն: Անվավեր գործարքները, որոնք օրենքով թույլատրված չեն, իրենցից ներկայացնում են իրավունքի խախտում: Այնուամենայնիվ, դրանք չեն դադարում գործարքներ լինելուց և որպես իրավախախտում ընկալվել չեն կարող <sup>110</sup>: Դ.Մ.Գենկինն առաջ է քաշում այն միտքը, որ ի տարբերություն իրավախախտման (դելիկտի)՝ գործարքին, որպես իրավաբանական փաստի, բնորոշ է քաղաքացիական իրավահարաբերությունների առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու ուղղված գործողություն (կամքի) առկայությունը, իսկ դելիկտի դեպքում այն կատարած անձնամենևին չի ցանկանում այդ կամ այլ իրավական հետևանքների առաջացումը <sup>111</sup>: Յայրենական իրավական գրականության մեջ անվավեր գործարքի էությունն առանձին ուսումնասիրության է ենթարկվել Կ. Վ. Յամբարձովյանի կողմից թեկնածուականատենախոսության շրջանակներում: Վերջինս եկել է այն համոզման, որ անվավերությունը և հակաօրինականությունն իրար հետ միշտ չհամընկնող, իսկ որոշ դեպքերում նաև տարբեր հարթություններում գտնվող երևույթներ են, և

<sup>109</sup>Տե՛ս **Крашенинников Е. А.** "Последствия совершения порочных сделок // Проблемы понятийного аппарата наук гражданского и гражданского процессуального права". Ярославль, 1987, էջ 42:

<sup>110</sup>Տե՛ս **Рабинович Н. В.**, նշված աշխատությունը, էջ 13:

<sup>111</sup>Տե՛ս **Генкин Д.** "Недействительность сделок, совершенных с целью противной закону", Ученые записки ВЮОН. Вып. 5 - М.: Юрид. изд-во МЮ СССР, 1947, էջ 50:

հանդիսանում են գործողությանը իրավական գնահատական տալու տարբեր դրանակներ ուցույց են տալիս այդ գործողության և իրավակարգի հետ հարաբերակցությունը <sup>112</sup>:

Այսպիսով, գրականության մեջ անվավեր գործարքի էություն վերաբերյալ կարծիքները միանշանակ չեն, իսկ երբեմն էլ միանգամայն հակասական, ինչը, կարծում ենք, պայմանավորված է նաև գործարքների անվավերության հիմքերի բազմազանությամբ: Ինչ վերաբերում է կեղծ և շինծու գործարքներին, ապա նշենք, որ կեղծ և շինծու գործարքներն անվավեր գործարքների համակարգում ունեն միանշանակ տարբերվող առանձնահատկություններ: Նախ՝ կեղծ և շինծու գործարքները չունեն գործարքի համար նախատեսված իրավական արդյունքի հասնելուն ուղղվածությունը: Այստեղ հարկ է նկատել, որ այն հեղինակները, որոնք անվավեր գործարքները չեն դիտարկում իրավախախտում, հիմնականում հիմնվում են այն հանգամանքի վրա, որ անվավեր գործարքներն ըստ էության ունեն կամային ուղղվածություն՝ առաջացնելու համապատասխան իրավական հետևանքներ <sup>113</sup>, ինչը բացակայում է կեղծ և շինծու գործարքների դեպքում: Բացի այդ, կեղծ և շինծու գործարքները, որպես կանոն, անվավեր գործարքի և որևէ այլ ոչ իրավաչափ գործողության համակցություն են, այսինքն՝ կեղծ և շինծու գործարքները հիմնականում օժտված են որևէ բողարկված հակաիրավական նպատակով, կեղծ և շինծու գործարքները կամքի արատով գործարքներ

<sup>112</sup>Տե՛ս **Յամբարձումյան Կ. Վ.**, «Անվավեր գործարքների քաղաքացիաիրավական կարգավորումը ՀՀ օրենսդրությամբ», Երևանի պետական համալսարան, ի. գ. թ. գիտական աստիճանի հայցման տեղեկատվություն, Երևան - 2001, էջ 48:

<sup>113</sup>Տե՛ս **Афонина Е. И., Ширвис Ю. В.** "Развитие института недействительности сделок"//Вестник Федерального арбитражного суда Северо-Кавказского округа. - М.: Фонд "Правовая поддержка", 2005. № 5, էջ 76: **Шахматов В. П.** "Сделки, совершенные с целью, противной интересам государства и общества". Томский университет – Томск, 1966, էջ 26:

են, որտեղ գործարքի բոլոր կողմերի կամքը կանխամտածված կերպով չի համապատասխանում կամահայտնույթյանը, այս գործարքները կնքվում են գործարքի բոլոր կողմերի դիտավորություններ, բացի այդ՝ կեղծ և շինծու գործարքներն անվավեր գործարքների առանձնահատուկ տեսակ են նաև այն առումով, որ ունեն անվավերություն առանձնահատուկ հետևանքներ (երկկողմանի ռեստիտուցիան սովորաբար կիրառելի չէ նման գործարքների դեպքում<sup>114</sup>) □այս մասին առավել մանրամասն խոսվում է 3-րդ գլխի 3.3-րդ պարագրաֆում □: Այսպիսով՝ մեր կարծիքով, կեղծ և շինծու գործարքները վավեր գործարքի պատյանում քողարկված իրավական ձևացում են, որոնց նպատակը, որպես կանոն, գիտակցված հակաիրավական է՝ ի տարբերություն մյուս բոլոր անվավեր գործարքների:

Նշված առանձնահատկությունների ամփոփումն առաջ է քաշում տրամաբանական այն հարցադրումը, թե միթե կեղծ և շինծու գործարքները, որոնք կնքելու նպատակը, որպես կանոն, որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ չըջանցելն է կամ որոշակի իրավական առավելություններ ստանալը, մաքուր ոչ իրավաչափ գործողություններ չեն, քանի որ չունեն գործարքների բնորոշ համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու ուղղվածությունը, ունեն հակաիրավական նպատակ և կնքվում են բոլոր կողմերի դիտավորությամբ: Նշված հարցադրման պատասխանը գտնելու համար՝ անհրաժեշտ ենք համարում պարզել, թե արդյոք կեղծ և շինծու գործարքներն ունեն իրավախախտմանը բնորոշ բոլոր հատկանիշները:

<sup>114</sup>Տե՛ս, օրինակ, թիվ ԿԴ 1/0935/02/14 քաղաքացիական գործով ՅՅ վճռաբեկ դատարանի 2016թ. հունվարի 22-ի որոշումը:

Ը ն դ ու ն վ ա ծ դ ա ս ա կ ար գ մ ա ն ը հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն , ո Ր Ի  
 հ ի մ ք ե Ր ը դ Ր Վ Ե Լ Ե ն Ս ա վ ի ն յ ի ի կ ո ղ մ ի ց <sup>115</sup>, ի Ր ա վ ու ն ք ի  
 հ ա մ ար ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ու ն ե ց ո ղ ք ո լ ո Ր  
 Ե Ր Ա ու յ թ ն Ե Ր ը (ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն փ ա ս տ Ե Ր ը ) ք ա ժ ա ն վ ու մ  
 Ե ն ի Ր ա դ ար ձ ու թ յ ու ն ն Ե Ր ի և գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե Ր ի ,  
 ո Ր ո ն ք Ե Լ ի Ր Ե ն ց հ Ե Ր թ ի ն ք ա ժ ա ն վ ու մ Ե ն ի Ր ա վ ա չ ա փ և  
 ո չ ի Ր ա վ ա չ ա փ գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե Ր ի  
 (ի Ր ա վ ա խ ա խ տ ու մ ն Ե Ր ի ), ի ն չ ա Ե ս ն ա ն  
 գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե Ր ի , ո Ր ո ն ք ա ն մ ի ջ ա կ ա ն ո Ր Ե ն  
 ու ղ ղ վ ա ծ Ե ն ի Ր ա վ ա կ ա ն ար դ յ ու ն ք ի հ ա ս ն Ե Լ ու ն (ա յ դ  
 թ վ ու մ ` գ ո Ր ծ ար ք ն Ե Ր ը ), և ա ն մ ի ջ ա կ ա ն ո Ր Ե ն ի Ր ա վ ա կ ա ն  
 ար դ յ ու ն ք ի հ ա ս ն Ե Լ ու ն չ ու ղ ղ վ ա ծ  
 գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե Ր ի : Վ Ե Ր ջ ի ն դ ա ս ա կ ար գ ու մ ն  
 ը ն դ ու ն վ ա ծ Ե տ ար ա ծ Ե Լ մ ի ա յ ն ի Ր ա վ ա չ ա փ  
 գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե Ր ի վ Ր ա , ո Ր ո ն ց շ Ր ջ ա ն ա կ ու մ  
 տ ար ք Ե Ր ա կ վ ու մ Ե ն ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն ա կ տ Ե Ր ն ու  
 ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն ար ար ք ն Ե Ր ը , և առ ա ջ ի ն ն Ե Ր ի շ ար ք ի ն  
 դ ա ս վ ու մ Ե ն գ ո Ր ծ ար ք ն Ե Ր ն ու ո Ր ո շ ա յ Լ ա կ տ Ե Ր <sup>116</sup>:  
 Ա յ ս ա ի ս ո վ , գ ո Ր ծ ար ք ն Ե Ր ը դ ա ս վ ու մ Ե ն ի Ր ա վ ա չ ա փ  
 գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե Ր ի , մ ա ս ն ա վ ո Ր ա պ Ե ս `  
 ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն ա կ տ Ե Ր ի շ ար ք ի ն , ի ս կ ո չ ի Ր ա վ ա չ ա փ  
 գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե Ր ն Ե Լ ն ու յ ն ա ց վ ու մ Ե ն  
 ի Ր ա վ ա խ ա խ տ ու մ ն Ե Ր ի հ Ե տ : Ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն ա կ տ Ե Ր ն  
 ա յ ն ա ի ս ի ի Ր ա վ ա չ ա փ գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե Ր Ե ն , ո Ր ո ն ք  
 մ ար դ կ ա ն ց կ ո ղ մ ի ց հ ա տ ու կ կ ա տ ար վ ու մ Ե ն ` ո Ր ո շ ա կ ի  
 ի Ր ա վ ա հ ար ա ք Ե Ր ու թ յ ա ն մ Ե ջ մ տ ն Ե Լ ու ն ա պ ա տ ա կ ո վ <sup>117</sup>: (...)  
 Ի Ր ա վ ու ն ք ի ք ո լ ո Ր ս ու Լ ք յ Ե կ տ ն Ե Ր ի  
 գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե Ր ը ի Ր ա վ ա չ ա փ Ե ն ա յ ն դ Ե պ ք ու մ ,  
 Ե Ր ք ն Ր ա ն ք հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու մ Ե ն ի Ր ա վ ու ն ք ի  
 ն ո Ր մ ո վ ս ա հ մ ա ն վ ա ծ թ ու յ Լ ա տ Ր Ե Լ ի ի ն և պ ար տ ա դ ի Ր ի ն  
 (ս ու Լ ք յ Ե կ տ ի վ ի Ր ա վ ու ն ք ն Ե Ր ի ն և

<sup>115</sup>Տ Ե ՛ս **Тузов Д. О.** "Теория недействительности сделок: опыт российского права в контексте европейской правовой традиции". Статут, 2007, Москва, Է ջ 7:

<sup>116</sup>Տ Ե ՛ս ն ու յ ն տ Ե ղ ու մ , Է ջ 7:

<sup>117</sup>Տ Ե ՛ս **Խրոպանյուկ Վ.Ն.**: Պ Ե տ ու թ յ ա ն և ի Ր ա վ ու ն ք ի տ Ե ս ու թ յ ու ն ն  
 (2-ր դ ի Ր ա տ ար ա կ ու թ յ ու ն , Լ Ր ա ց ու մ ն Ե Ր ո վ , ու ղ ղ ու մ ն Ե Ր ո վ ), թ ար գ .  
 Խ ա չ ի կ Յ ար ու թ յ ու ն յ ա ն ի , Ե Ր Ա ա ն , 1997, Է ջ Ե Ր 376-377:



պարտականություններին)<sup>118</sup>: Իսկ իրավախախտումն իրավագործունակ անհատի մեղավոր վարքագիծն է, որը հակասում է իրավունքի նորմերի կարգադրադրերին, այլ անձանց վնաս է պատճառում և հանգեցնում իրավաբանական պատասխանատվության<sup>119</sup>:

Կեղծ և շինծու գործարքների օրենսդրական բնորոշումից բխում է, որ օրենսդիրը քննարկման առարկա իրավական երևույթի համար օգտագործել է հենց «գործարք» տերմինը: Ընդ որում, կեղծ գործարքը բնորոշել է որպես առերևույթ գործարք, որը կնքվում է առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրությամբ, իսկ շինծու գործարքն էլ կնքվում է՝ մեկ այլ գործարք բողարկելու նպատակով: Եթե նշված գործարքների բնույթը բացահայտելիս հիմք ընդունենք այս իրավական երևույթի առանձնահատկությունները, ապա այստեղ գայթակղությունը մեծ է՝ հանգեցնում հետևություն, որ կեղծ և շինծու գործարքները ոչ թե պատկանում են գործարք կատեգորիայի, այլ իրավախախտում իրավաբանական փաստերի շարքին: Մասնավորապես՝ կեղծ և շինծու գործարքները կարող ենք դիտարկել ոչ իրավաչափ գործողություններ (իրավախախտումներ), քանի որ չեն համապատասխանում գործարքի վավերականությանը ներկայացվող պահանջներին, չեն համապատասխանում իրավունքի նորմով սահմանված թույլատրելիին և պարտադիրին, գործարքի բոլոր կողմերի մեղավոր վարքագծի արդյունք են, սովորաբար կնքվում են՝ այլ անձանց վնաս պատճառելու կամ այլ հակաիրավական արդյունքի հասնելու նպատակով, և իրավաբանական պատասխանատվությունն էլ կարող է արտահայտվել

<sup>118</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 386:  
<sup>119</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 388:

այդ գործարքների անվավերության համապատասխան  
իրավական հետևանքներով: Մինչդեռ, մեր կարծիքով,  
նշված հատկանիշները բավարար չեն այս իրավական  
երևույթի էությանը ճիշտ իրավաբանական  
գնահատական տալու համար: Կարծում ենք, կեղծ և  
շինծու գործարքի իրավական բնույթը պետք է  
բացահայտել ոչ թե օրենսդրի կողմից տրված նեղ  
բնորոշմանը համապատասխան, այլ գործնականում  
այս երևույթի ամբողջական դրսևորումները հաշվի  
առնելով:

Ինչպես արդեն նշել էինք, կեղծ և շինծու  
գործարքի կողմերը չեն սահմանափակվում  
պարզապես առանց համապատասխան իրավական  
հետևանքներ առաջացնելու մտադրության որոշակի  
գործարք կնքելով: Կրկին նշենք, որ թե գործարքը  
պարզապես կնքվել է առանց համապատասխան  
իրավական հետևանքներ առաջացնելու  
մտադրության, ապա այստեղ մենք գործունենք ոչ թե  
կեղծ կամ շինծու գործարքի, այլ կամքի արատով այլ  
գործարքի հետ: Գտնում ենք, որ կեղծ և շինծու  
գործարքներն իրավական ձևացման մի ամբողջական  
գործընթացի որոշակի մաս են կազմում, որտեղ  
կնքված գործարքը ծառայում է որպես գործիք,  
միջոց՝ իրավական առումով քողարկելու, որպես  
կանոն, որոշակի հակաիրավական  
գործողություններ, որպիսիք կարող են լինել  
պարտատերերից գույք  փախցնելը , հարկերից  
խուսափելը, ընդհանուր սեփականության  
իրավունքում մասնակցի գնելու նախապատվության  
իրավունքը շրջանցելը և այլն: Ընդ որում, այդ  
գործողությունները նշված դեպքերում կազմում  
են կեղծ և շինծու գործարքների անբաժանելի մասը:  
Պատահական չէ, որ մի շարք երկրներում, ինչպես  
արդեն նշել էինք, «կեղծ կամ շինծու գործարք»  
տերմինի փոխարեն օգտագործվում է «սիմուլյացիա»

տե՛րմի՛նը <sup>120</sup>, որը հնարավորություն է տալիս նշված երևույթի բնորոշումը չսահմանափակել միայն գործարք հասկացությունը: Մասնավորապես, ֆիկտիվ (կեղծ, շինծո՛ւ) գործարքի տեսությունը (the sham transaction doctrine) մի շարք երկրներում հայտնի է որպես սիմուլյացիա (ձևացում, կեղծում) (simulation), իսկ որոշ երկրներում՝ որպես իրավունքի չարաշահում (abuse of rights), իրավունքից խուսափում (avoidance of the law)<sup>121</sup>: Օրինակ՝ «սիմուլյացիա» (simulation) տե՛րմի՛նն օգտագործվում է ԱՄՆ Լոուիզիանա նահանգի քաղաքացիական օրենսգրքով (1849-րդ, 2025-2027-րդ, 2480-րդ հոդվածներ)<sup>122</sup>, Իտալիայի քաղաքացիական օրենսգրքով (1414-1417-րդ հոդվածներ)<sup>123</sup>, Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքով (18-րդ հոդվածի 2-րդ կետ)<sup>124</sup> և այլն:

Կեղծ և շինծո՛ւ գործարքների կնքմամբ հնարավոր վնասի գոյությունն ուղղակիորեն պայմանավորված է ոչ թե կեղծ կամ շինծո՛ւ գործարք կնքելով, այլ այդ գործարքների միջոցով բավականին հաճախ իրականացվող հակաիրավական գործողություններով: Մեր կարծիքով, եթե կեղծ կամ շինծո՛ւ գործարքը դիտարկվի որպես հակաօրինական գործողություն, որում առկա է գործարքի բոլոր կողմերի դիտավորությունը՝ նման գործարքներ կնքելու միջոցով խուսափելու որոշակի օրենսդրական արգելքներից կամ

<sup>120</sup>Շուտ **Յ. Ա. Ասմանգո՛ւլյանի** և **Մ. Ի. Յովհաննիսյանի** համահեղինակությամբ հրատարակված անգլերեն-հայերեն բառարանի («Յայաստան» հրատարակչություն, Երևան, 1984, էջ 874)՝ simulation - սիմուլյացիա, կեղծում, կեղծագործում, ձևացում, simulate - ձևացնել, կեղծել .2) նմանվել, նմանլինել (որևէ բանի):

<sup>121</sup>Տե՛ս **Victor Thuronyi** (Senior Counsel (Taxation), International Monetary Fund): "Rules in OECD Countries to Prevent Avoidance of Corporate Income Tax" էջ 2 (հասանելի է <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/APCITY/UNPAN017808.pdf> հղումով 22.12.2018թ. դրությամբ):

<sup>122</sup>Տե՛ս Louisiana civil code: Louisiana State Legislature - Legislative Law: Updated for the 2016 Regular Session (հասանելի է [https://legis.la.gov/legis/Laws\\_Toc.aspx?folder=67&level=Parent](https://legis.la.gov/legis/Laws_Toc.aspx?folder=67&level=Parent) հղումով 22.12.2018թ. դրությամբ):

<sup>123</sup>Տե՛ս **Luisa Antonioli, Anna Venezian**, նշված աշխատությունը, էջեր 284-285:

<sup>124</sup>Տե՛ս Federal Act on the Amendment of the Swiss Civil Code (Part Five: The Code of Obligations) of 30 March 1911 (Status as of 1 July 2016) (հասանելի է <https://www.admin.ch/opc/en/classified-compilation/19110009/201701010000/220.pdf> հղումով 22.12.2018թ. դրությամբ):

սահմանափակումները կամ ստանալու որոշակի  
իրավական առավելություններ, ապա պատճառված  
վնասի համար պետք է առաջանա համապարտ  
պատասխանատվություն (ՅՅ քաղաքացիական  
օրենսգրքի 1073-րդ հոդված): Բանն այն է, որ կեղծ և  
շինծու գործարքներում քողարկված  
հակաիրավական գործողությունը սովորաբար  
իրականացնում է գործարքի կողմերից մեկը, թեև  
գործարքը կնքվում է բոլոր կողմերի ընդհանուր  
համաձայնեցված կամքով:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ  
սիմուլյացիայի դեպքում կեղծ կամ շինծու  
գործարքն ինքնին իրավախախտում դիտարկվել չի  
կարող այն պարզ պատճառով, որ չունի  
իրավախախտմանը բնորոշ բոլոր հատկանիշները:  
Յամաձայնելով բոլոր այն հեղինակների հետ,  
ովքեր չեն նույնացնում անվավեր գործարքն ու  
իրավախախտումը և գործարքի անվավերությունը  
հակաօրինականությունը դիտարկում են որպես  
տարբեր երևույթներ, նշենք, որ կեղծ և շինծու  
գործարքներն անվավեր գործարքների տեսակներ են,  
որոնք օրենսդիրը հրաժարվում է ճանաչել որպես  
իրավական երևույթներ՝ չտալով դրանց  
իրավաբանական ուժ, քանի որ դրանք ինքնին ունակ  
չեն գործարքին բնորոշ բոլոր հետևանքներն  
առաջացնելու: Բացի այդ, գործարքների  
անվավերությունը կարգավորող նորմերի  
գործառույթներից է նաև պաշտպանել  
քաղաքացիական շրջանառությունը իր  
սուբյեկտների իրավունքներն ու օրինական  
շահերը խախտող հակաօրինական  
գործողություններից: Այդ նպատակով է նաև, որ  
կեղծ և շինծու գործարքները դիտարկվում են որպես  
անվավեր գործարքներ՝ շահագրգիռ անձանց  
շնորհելով իրենց իրավունքների

պաշտպանու թյուր ներառականացնելու գործիքով, այն է՝ անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով դատարան դիմելու իրավունքով (ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 4-րդ կետ):

Այսպիսով, թեև կեղծ և շինծու գործարքները չունեն վավեր գործարքների և մյուս առնչինչ գործարքների բնորոշ կամային ուղղվածությունը՝ առաջացնելու այդ գործարքին բնորոշ իրավական հետևանքներ, այնուամենայնիվ, կարծում ենք, չեն կարող համարվել իրավախախտումներ: Կեղծ և շինծու գործարքներն այն իրավաբանական ակտերն են, որոնք իրավաբանական ուժ չունեն՝ գործարքի վավերականությանը ներկայացվող պահանջների չպահպանման հետևանքով: Սակայն կեղծ և շինծու գործարքները կազմում են իրավական ձևացման միամբողջական գործընթացի՝ սիմուլյացիայի բաղկացուցիչ տարր, որի դեպքում անվավեր գործարքը, որպես կանոն, ուղեկցվում է հակաիրավական գործողություններով կամ դեռևս գործողություն չվերածված հակաիրավական նպատակներով: Նշվածն էլ տեղիք է տալիս այս գործարքները իրավախախտում դիտարկելու ոչ հիմնավոր մոտեցման ձևավորմանը: Մինչդեռ իրավախախտում կարող է համարվել ոչ թե ինքնին կնքված գործարքը, որը գոյություն չունի իրավական և փաստացի առումներով, այլ այդ գործարքի քողի ներքո իրականացված ոչ իրավաչափ գործողությունը: Վերջինս էլ հակաիրավական է համարվում, քանի որ դրա իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքը, այն է՝ վավեր գործարքը բացակայում է:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ նշենք, որ կեղծ և շինծու գործարքների՝ իրավախախտում չլինելու հանգամանքը գործող իրավակարգավորման

պայմաններում ինքնին բացառում է այս գործարքների կնքման հետևանքով գործարքի մասնակից չհանդիսացող անձանց, պետությունը կամ համայնքներին պատճառված վնասի հատուցման հնարավորությունը: Մինչդեռ, հաշվի առնելով կեղծ կամ շինծու գործարքի՝ որպես հիմնականում հակահրավակալ բնույթի գործողություններով ուղեկցվող և ըստ այդմ՝ հրավակալ ձևացման մեկամբողջական գործընթացի բաղկացուցիչ մաս էլ ինչու է հանգամանքը՝ գտնում ենք, որ կեղծ և շինծու գործարքների անվավերությունը կարգավորող իրավադրույթներով գործարքի մասնակից չհանդիսացող անձանց, պետության և համայնքների համար հատուկ պետք է սահմանվի վնասի հատուցման իրավունքը □ այս մասին խոսվում է նաև աշխատանքի 3-րդ գլխի 3.3-րդ և 3.4-րդ պարագրաֆներում □:

#### **§ 1.4. Կեղծ և շինծու գործարքների անվավերության տեսակը**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կեղծ և շինծու գործարքները դասվում են առնչինչ գործարքների շարքը, ինչը նշանակում է, որ կեղծ և շինծու գործարքներն անվավեր են անկախ դատարանի կողմից նման ճանաչումից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մաս): Արդյո՞ք նշված մոտեցումը գործնականում բնորոշ է կեղծ և շինծու գործարքներին, ու որքանով է արդարացված և հիմնավորված ՀՀ քաղաքացիական օրենսգրքով առնչինչ և վիճահարուց գործարքների տարբերակման համակարգում այս գործարքներն առնչինչ գործարքների շարքը դասելը:

Անվավեր գործարքների բաժանումն առնչինչ և վիճահարույց գործարքների գալիս է հռոմեական իրավունքից՝ պահպանվելով նաև մեր ժամանակներում: Հին Հռոմում գործարքերը կա՛մ անվավեր էին ցիվիլ իրավունքին հակասելու հիմքով՝ այդպիսի գործարքներն առնչինչ էին, կա՛մ էլ դադարում էին գործել պրետորական յուրիսդիկցիայի հիմքով՝ դիտարկվելով որպես վիճահարույց: Այդ բաժանումն ուժը պահպանեց, երբ ցիվիլ և պրետորական իրավունքների միջև տարբերությունը վերացավ<sup>125</sup>: Ներկայումս գրականության մեջ բավականին շատ է քննարկվում նման բաժանման պահպանման նպատակահարմարությունն հարցը, ինչպես նաև տարակարծիք մեկնաբանություններ են առկա առնչինչ և վիճահարույց գործարքների տարանջատման հիմքում դրված չափանիշների վերաբերյալ<sup>126</sup>: Մինչդեռ նշված հարցերը սույն աշխատանքի շրջանակներում համապարփակ ուսումնասիրության չեն կարող ենթարկվել և, մեր կարծիքով, պետք է լինեն առանձին գիտական ուսումնասիրության առարկա:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կեղծ և շինծու գործարքների անվավերության տեսակի հարցը քննարկման առարկա կդարձնենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքով առնչինչ և վիճահարույց գործարքների դասակարգման տրամաբանության համատեքստում՝ չանդրադառնալով նման դասակարգման հիմքում դրված չափանիշների ընտրության նպատակահարմարության և հիմնավորվածության հարցերին:

<sup>125</sup>Տե՛ս **Дернбург Г.** "Пандекты, Общая часть", Том I, Университетская типография, Москва, 1906թ., էջ 331 (հասանելի է <https://www.twirpx.com/file/1172646/> հղումով 22.12.2018թ. դրությամբ):

<sup>126</sup>Նշված հարցերը բազմաթիվ հեղինակների կարծիքների վկայակոչմամբ համակողմանի քննարկվել են Դ. Օ. Տուզովի կողմից (տե՛ս **Тузов Д. О.** "Ничтожность и оспоримость юридической сделки: пандектное учение и современное право". - М.: Статут, 2006):

Այսպես, գրականության մեջ առավել հաճախ առանձնացնում են առնչիևչ և վիճահարույց գործարքների տարբերակման \$որմալ և նյութական չափանիշներ<sup>127</sup>:

Նախ փորձենք հասկանալ, թե որքանով են կիրառելի այս չափանիշները կեղծ և շինծու գործարքների՝ որպես առնչիևչ գործարքների նկատմամբ, այնուհետև փորձենք պարզել, թե ՀՀ օրենսդրի կողմից որ չափանիշներն են ընտրվել կեղծ և շինծու գործարքներն առնչիևչ գործարքներ դիտարկելիս:

Առնչիևչ և վիճահարույց գործարքների տարբերակման՝ գրականության մեջ առավել տարածված նյութական չափանիշ է համարվում հասարակական հարաբերությունների այն բնույթը, այն շահը (հանրային կամ մասնավոր), որը կարող է խախտվել համապատասխան գործարքի կնքմամբ: Օրինակ, Ի.Բ.Նովիցկու կարծիքով, պետությունը մեկ խմբում է միավորում առավել կարևոր դեպքերը, երբ գործարքն անընդունելի է պետության շահերի տեսանկյունից (օրինակ, գործարք, որն ուղղված է պետությանն ակնհայտ վնաս պատճառելուն), և մյուս խմբում է դասակարգում այն դեպքերը, որոնք պետության կողմից ճանաչվում են որպես նվազ կարևորություն ունեցող՝ հասարակության շահերի տեսանկյունից (օրինակ, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքներ): Առաջին խմբի դեպքերում գործարքն անվավեր է ճանաչվում անկախ մասնակիցների կամ այլ անձանց խնդրանքից, երկրորդ խմբի դեպքերում գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն, եթե նման պահանջ

<sup>127</sup>Տե՛ս Գутников О. В. "Недействительные сделки в гражданском праве", М.: Бератор-Пресс, 2003, էջեր 160-217: Тузов Д. О. "Ничтожность и оспоримость юридической сделки: пандектное учение и современное право", М.: Статут, 2006, էջեր 148-160:



ն երկայացվի<sup>128</sup>: Նույն հիմքերի վրա է հիմնվել նաև Ռ. Օ. Խալֆինան՝ նշելով, որ (...) առնչինչ են համարվում այն գործարքները, որոնց կնքումն ու կատարումը կոպիտ կերպով խախտում է հասարակության շահերը, հակասում վերջինիս սկզբունքներին և արժեքային համակարգին<sup>129</sup>: Ն. Ռաստերյանը նշել է, որ առնչինչ և վիճարկելի գործարքների տարբերակման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները. եթե գործարքը խախտում է այն նորմերը, որոնք պահպանում են անձանց իրավունքները և արգելում են հայտնի գործողությունները՝ հասարակական կամ պետական շահերից ելնելով, այսինքն՝ խախտում է հանրային իրավունքները, ապա այդ նորմերի խախտումը հանգեցնում է գործարքի առնչնչության, եթե գործարքները խախտում են մասնավոր անձանց շահերը պաշտպանող նորմերը, այսինքն՝ մասնավոր իրավունքը, գործարքն անվավեր ճանաչելի են արվոր է միայն տուժող կողմի պահանջով<sup>130</sup>: Վ. Պ. Շախմատովը ևս գործարքն առնչինչ դիտարկելու հիմքում դնում է հասարակական հարաբերություններին բնույթն ու նշանակությունը, որոնք խախտվում են առնչինչ գործարքներով<sup>131</sup>:

Այստեղ համաձայն ենք Վ. Ի. Սինայսկու կարծիքի հետ, ըստ որի՝ նշված չափանիշն ընդհանուր առմամբ օգտակար է առնչնչության և վիճարկելիության տարբերակման համար, սակայն դրա թերությունն այն է, որ հանրային և մասնավոր շահը գործնականում տարբերակելն ինքնին չափազանց

<sup>128</sup>Տե՛ս **Новицкий И. Б.** "Сделки. Исковая давность". - М.: «Госюриздат», 1954, էջ 69 (հասանելի է <https://naukaprava.ru/catalog/297/5226/31909?view=1> հղումով 22.12.2018թ. դրականությամբ):

<sup>129</sup>Տե՛ս **Абова Т. Е., Кабакин А. Ю., Мозолин В. П.** (Օ տ. ред.) "Гражданский кодекс Российской Федерации". Часть первая: Научно-практический комментарий / М.: Бек, 1996, էջ 288:

<sup>130</sup>Տե՛ս **Растеряев Н.** "Недействительность юридических сделок по русскому праву". Часть Общая и часть Особенная: догматическое исследование. Ленинград. Типография Товарищества «Общественная Польза», 1900, էջեր 18-19:

<sup>131</sup>Տե՛ս **Шахматов В. П.** "Составы противоправных сделок и обусловленные ими последствия" - Томск: 1967, Изд-во Том. ун-та, էջ 148:

դժվար է<sup>132</sup>: Կեղծ և շինծու գործարքներն այնպիսի առնչինչ գործարքներ են, որոնց կնքումն անմիջականորեն կարող է սպառնալ ինչպես պետության, այնպես էլ մասնավոր անձանց շահերին: Օրինակ՝ կեղծ կամ շինծու գործարք կարող է կնքվել ինչպես հարկերի վճարումից խուսափելու, վաշխառությունը թաքցնելու, այնպես էլ պարտատերերից գույք «փախցնելու», գնելու նախապատվություն իրավունքը շրջանցելու և մի շարք այլ նպատակներով: Յետևաբար, պայմանավորված կեղծ և շինծու գործարքների բազմատեսակությամբ, դժվար թե կարելի է հստակ նշել, թե ինչպիսի շահի պաշտպանությունն է անմիջականորեն ուղղված այս գործարքների անվավերությունը: Առավել ևս, երբեմն կեղծ կամ շինծու գործարքն առնչինչ ճանաչելը կարող է մի կողմից բացասաբար անդրադառնալ քաղաքացիական շրջանառության այն բարեխիղճ մասնակիցների շահերի վրա, ովքեր հիմք են ընդունել այդ գործարքի վավերականության կանխավարկածը, իսկ մյուս կողմից պաշտպանել այն բարեխիղճ անձանց շահերը, որոնց իրավունքը խախտվել է հենց նման գործարքի կնքմամբ: Ուստի, մեր կարծիքով, միանշանակ չի կարելի փաստել, որ այս գործարքների առնչնչությունն ի վերջո հանգեցնում է հասարակական շահի պաշտպանությանը, օրինակ, քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը կամ առհասարակ բարեխիղճ մասնակիցների շահերի պաշտպանությանը:

Երբեմն վիճահարույց և առնչինչ գործարքների տարբերակումն իրականացվում է վերացվող և չվերացվող թերությունների չափանիշով, ընդ

<sup>132</sup>Տե՛ս **Синайский В. И.** "Русское гражданское право". Общая часть и вещное право. Вып. 1 / Синайский В. И. - Киев: Изд. Т. А. Касперского, էջ 164:

որո՞ւմ վերացվող թերություններ են համարվում (որոնք ենթադրում են գործարքի վիճարկելիություն) միայն կամքի արատը՝ կապված ձևավորման ազատության հետ, և իրավագործական համաձայնության առկայությունը<sup>133</sup>: Միաժամանակ գրականության մեջ արտահայտված է նաև հակառակ տեսակետ, ըստ որի՝ գործարքի անվավերության դեպքում բոլոր հատկանիշները հաշվի են առնվում գործարքի կնքման պահին, իսկ կամքի արատը, որպես այդպիսին, վերացվել չի կարող<sup>134</sup>: Կարծում ենք, որ նման չափանիշը չենք կարող կիրառել կեղծ և շինծու գործարքների նկատմամբ, քանի որ թեև այս գործարքներն առնչինչ գործարքներ են, սակայն կողմերի մտադրությունների փոփոխության արդյունքում կամքի արատը կարող է վերանալ, գործարքն ամբողջությամբ կատարվել, ինչի արդյունքում գրեթե անհնարին կլինի ապացուցել գործարքի կնքման պահին կամքի արատի առկայությունը:

Ֆորմալ չափանիշներն ամրագրված են գործարքների առնչնչության և վիճարկելիության նկատմամբ կիրառելի օրենսդրությամբ: Այդ չափանիշներին սովորաբար դասվում են անվավերության հաստատման կարգի առանձնահատկությունները (բացառապես դատական կարգով կամ անկախ դատական հաստատումից), գործարքը վիճարկելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներ կայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի ու հայցային վաղեմության ժամկետի առանձնահատկությունները և այլն<sup>135</sup>:

Կեղծ և շինծու գործարքների նկատմամբ առնչինչ գործարքների նկատմամբ Ֆորմալ

<sup>133</sup>Տե՛ս **Мындя Д. И.**, նշված առե նախոս., էջ 136:

<sup>134</sup>Տե՛ս **Козяр Н. В.**, նշված առե նախոս., էջ 73:

<sup>135</sup>Տե՛ս **Козяр Н. В.**, նշված առե նախոս., էջ 71:

հատկանիշներն են գործնականում կիրառելի: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է կեղծ և շինծոն գործարքների անվավերության հաստատման կարգի առանձնահատկություններին: Ա. Պ. Սերգեևի կարծիքով՝ այն մոտեցման հիմքում, ըստ որի՝ առոչինչ գործարքի անվավերությունը հաստատվում է անկախ դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելուց, ըստ երևույթին, ընկած է այն հանգամանքը, որ առոչինչ գործարքի անվավերությունն այնքան ակնհայտ է, որ հատուկ ապացուցման կարիք չունի: Մի շարք դեպքերում գործարքի թերությունը, ընդ որում, որպես կանոն, չվերացվող, գտնվում է մակերևույթին: Այդպիսիք են, մասնավորապես, անգործունակ անձանց կողմից կնքված, ձևի արատով կնքված, օրենքով սահմանված արգելքներն ուղղակիորեն խախտող և այլ գործարքները<sup>136</sup>: Ըստ Օ. Ս. Իոֆֆեի՝ առոչինչ գործարքի անվավերության պայմաններն ակնհայտ են և ապացույցներ չեն պահանջում, հակառակը, վիճահարույց գործարքների արատները դժվար ճանաչելի են և ապացույցների կարիք ունեն, հենց այդ պատճառով նման գործարքների անվավերությունն չի առաջանում ինքնին<sup>137</sup>: Այս կապակցությամբ Ա.Մ.Գուլևը նշել է, որ եթե ակտի առոչինչ լինելն ակնհայտ է ցանկացած անձի համար, ապավիճարկելիության դեպքում խախտումն աչքի չի ընկնում, այդ խախտումների առկայությունը պետք է ցույց տալ և ապացուցել<sup>138</sup>:

ՀՀ օրենսդրի կողմից, կարծես թե, որպես առոչինչ և վիճահարույց գործարքների տարբերակման

<sup>136</sup>Տե՛ս **Сергеев А. П.** "Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации". Часть первая: учеб. - практич. комментарий (постатейный) / Е.Н. Абрамова, И. Н. Аверченко, Ю. В. Байгушева и др.; под ред. А. П. Сергеева. М.: Проспект. 2010, էջ 37:

<sup>137</sup>Տե՛ս **Иоффе О. С.**, նշված աշխատությունը, էջ 297:

<sup>138</sup>Տե՛ս **Гулев А. М.** "Русское гражданское право". Обзор действующего законодательства и проекта Гражданского уложения: Пособие к лекциям. - Киев, 1907, էջ 79 (հասանելի է <https://www.twirpx.com/file/2048808/grant/> հղումով 22.12.2018թ. դրությամբ):

գլխավոր չափանիշ ընտրվել է հենց անվավերության հաստատման կարգը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասով առնչինչ և վիճահարույց գործարքներին տրված բնորոշման տառացի մեկնաբանությունից հետևում է, որ առնչինչ գործարքին պետք է վերաբերվել որպես անվավեր գործարքի՝ անկախ դատարանի կողմից անվավեր ճանաչելուց: Նշվածը, կարծում ենք, կիրառելի է այն դեպքում, երբ անվավեր գործարքի արատն այնքան ակնհայտ է, որ դատական քննության անհրաժեշտությունն առկա է՝ դատական կարգով գործարքում առկա արտի հաստատման համար: Օրինակ՝ դատական կարգով գործարքի անվավեր լինելու ապացուցման անհրաժեշտությունն առկա է այնպիսի առնչինչ գործարքներին դեպքում, ինչպիսիք են անգործունակ ճանաչված անձի կամ տասնչորս տարեկան չդարձած անչափահասի կողմից կնքված գործարքները (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 307-րդ և 309-րդ հոդվածներ): Մինչդեռ կեղծ և շինծու գործարքներին նկատմամբ գործնականում նման մոտեցումը ճնշող մեծամասնությամբ կիրառելի է: Բանն այն է, որ կեղծ և շինծու գործարքները կամքի արատով գործարքներ են, իսկ կամքի արատով գործարքները, որպես կանոն, համարվում են վիճարկելի: Կեղծ և շինծու գործարքներում կողմերի արտահայտած կամահայտնության անհամապատասխանությունը կողմերի կամքին ակնհայտ փաստ է, որը պետք է հաստատվի հիմնավոր ապացույցներով: Որևէ պետական մարմին, պաշտոնատար, ֆիզիկական կամ իրավաբանական անձ չի կարող վկայակոչել գործարքի կեղծ կամ շինծու լինելը, քանի դեռ քաղաքացիական է այդ փաստը հաստատող համապատասխան դատական ակտը: Ընդ որում, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նույնիսկ

այդ դեպքերում, երբ դատարանին ներկայացվում է կեղծ կամ շինծու գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու խնդրանք (պահանջ), նախ շահագրիգիռ անձը հիմնավոր ապացույցների համակցությամբ, որոնք հիմնականում անուղղակի ապացույցներ են, ապացուցում է գործարքի կեղծ կամ շինծու լինելը, որին միայն հաջորդում է դատարանի կողմից համապատասխան անվավերության հետևանքների կիրառումը: Գործարքի կեղծ կամ շինծու լինելը բավականին հանգամանալից կերպով քողարկվում է, նույնիսկ շատ հաճախ գործարքը ձևականորեն կատարվում է, ինչի հետևանքով բավականին բարդանում է ապացուցման գործընթացը՝ երբեմն նույնիսկ դառնալով անհնարին, քանի որ այստեղ խոսքը գնում է սուբյեկտների ներքին կամքի մասին:

Համաձայն ենք Ա. Յու. Բեժեցկու տեսակետի հետ՝ այն մասին, որ որոշ առնչինչ գործարքներ վավեր են համարվում նախքան դրանց նկատմամբ համապատասխան իրավական հետևանքների կիրառումը: Առանց դատական կարգով գործարքը կեղծ կամ շինծու ճանաչելու նման գործարքին որպես «իրավական ոչնչություն» վերաբերվել հնարավոր չէ՝ գործարքը կեղծ կամ շինծու ինքնուրույն (արտադատական կարգով) որակելու անհնարինությունը պատճառով: Փաստացի կեղծ և շինծու գործարքը վավեր է համարվում նախքան դատական կարգով ոչնչացնելը<sup>139</sup>:

Գու՞ց եօրենսդիրը կեղծ և շինծու գործարքները դասել է առնչինչ գործարքների շարքը՝ ելնելով նրանից, որ գործարքի կեղծ կամ շինծու բնույթը պետք է այնքան ակնհայտ լինի, որ ապացուցման կարիք չլինի: Մինչդեռ այս վարկածը, մեր կարծիքով,

<sup>139</sup>Տե՛ս **Бежецкий А. Ю.**, նշված առեն ախոս., էջ 20:

գործնականում չի կարող արդյունավետ կիրառվել, քանի որ ներկայումս դատական պրակտիկայում հանդիպող կեղծ և շինծու գործարքների մեծամասնությունը պահանջում է ապացուցման գործընթաց, իսկ հաճախ՝ բավականին բարդ գործընթաց: Եթե դատարաններն առաջնորդվեին այդ տրամաբանությամբ, ապա կեղծ և շինծու գործարքների վերաբերյալ հայցերի մեծ մասը կմերժվեր: Մինչդեռ ներկայումս ապացուցման գործընթացը պրակտիկայում բախվում է լուրջ դժվարությունների՝ կեղծ և շինծու գործարքների առկայության մասին վկայող օրենսդրական հստակ և որոշակի հատկանիշների բացակայության հետևանքով: Ավելին, սույն գլխում ներկայացված կեղծ և շինծու գործարքների հատկանիշները մեր կողմից մշակվել են՝ նպատակ ունենալով լուծելու դատական պրակտիկայում կեղծ և շինծու գործարքների ապացուցման գործընթացում ծագող դժվարությունները, իսկ այդ հատկանիշների ներդրման գործնական անհրաժեշտությունը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ գործարքը կեղծ կամ շինծու որակելու համար հիմնականում պահանջվում է ապացուցման գործընթաց: Ներկայիս իրավակարգավորման պայմաններում, երբ շահագրգիռ անձը ներկայացնում է կեղծ կամ շինծու գործարքի անվավերություն հետևանքների կիրառման պահանջ, դատարանը նախքան անվավերության հետևանքների կիրառումը քննարկում է գործարքի կեղծ կամ շինծու լինելու հանգամանքը և բավարար ապացույցների առկայության դեպքում գործարքը փաստացի ճանաչում կեղծ կամ շինծու, թեև տառացի «ճանաչել գործարքը կեղծ /շինծու» բառերը չի օգտագործում:

Բացի այն հանգամանքից, որ գործարքի կեղծ կամ շինծու լինելն ակնհայտ փաստ չէ և չի կարող

հաստատվել առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի, այստեղ գործում է նաև գործարքի օրինականության կանխավարկածը: Ինչպես նշում է Դ. Մ. Շեկինը, քանի դեռ այլ բան ապացուցված չէ, քաղաքացիներին և իրավաբանական անձանց գործողությունները՝ ուղղված քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, դադարեցնելու, պետք է դիտարկվեն որպես օրենսդրությանը համապատասխանող (...): Եթե օրենսդրությանը հակասությունն ապացուցված չէ, գործարքը պետք է դիտարկվի վավեր <sup>140</sup>:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված մյուս \$որմալ չափանիշը գործարքը վիճարկելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներ կայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակն է: Կեղծ և շինծու գործարքների դեպքում նման իրավունք իրավացիորեն վերապահված է ցանկացած շահագրգիռ անձի, քանի որ նման գործարքներն առավել հաճախ խախտում են գործարքի մասնակից չհանդիսացող անձանց իրավունքներն ու օրինական շահերը, իսկ այդ անձանց շրջանակը օրենսդրությանմբ կանխորոշելիս արավոր չէ:

Այսպիսով՝ կեղծ և շինծու գործարքների առոչինչ գործարք լինելու հանգամանքը չհիմնավորվեց նյութական չափանիշներով:

Անդրադառնալով \$որմալ չափանիշներին՝ գտնում ենք, որ օրենսդրի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասով որպես առոչինչ և վիճահարույց գործարքների գլխավոր չափանիշ ընտրված անվավերության հաստատման կարգը և ս չհիմնավորեց կեղծ և շինծու գործարքների

<sup>140</sup>Տե՛ս Շեкин Д. М. "Налоговые последствия недействительных сделок // Ваш налоговый адвокат". Консультации, рекомендации. Вып. 2(8). М: ИД ФБК-ПРЕСС, 1999, էջ 10:



առ ո չ ի ն չ գ ո թ ար ք լ ի ն ե լ ու հ ա ն գ ա մ ա ն ք ը : Ֆ ո թ մ ա լ չ ա փ ա ն ի շ ն ե թ ի ց փ ա ս տ ա ց ի մ ի ա յ ն ա ն վ ա վ ե թ ու թ յ ա ն հ ե տ ն ա ն ք ն ե թ ի կ ի թ առ մ ա ն պ ա հ ա ն ջ ն ե թ կ ա յ ա ց ն ե լ ու ի թ ա վ ու ն ք ու ն ե ց ո ղ ա ն ձ ա ն ց շ թ ջ ա ն ա կ ի ն վ ե թ ա ք ե թ ո ղ չ ա փ ա ն ի շ ն ե կ ի թ առ ե լ ի կ ե ո ծ և շ ի ն ծ ու գ ո թ ար ք ն ե թ ի ն կ ա տ մ ա մ ք : Մ ա ս ն ա վ ո թ ա պ ե ս ` ե թ ե Յ Յ ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ թ ե ն ս գ թ թ ի 303-ր ղ հ ո ղ վ ա ծ ի 2-ր ղ մ ա ս ի ն հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն վ ի ճ ա հ ա թ ու յ ց գ ո թ ար ք ն ա ն վ ա վ ե թ ճ ա ն ա չ ե լ ու պ ա հ ա ն ջ ը կ ա թ ո ղ ե ն ն ե թ կ ա յ ա ց ն ե լ մ ի ա յ ն Յ Յ ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ թ ե ն ս գ թ թ ու մ ն շ վ ա ծ ա ն ձ ի ն ք , ա պ ա ն ու յ ն հ ո ղ վ ա ծ ի 3-ր ղ մ ա ս ի ն հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ` առ ո չ ի ն չ գ ո թ ար ք ի ա ն վ ա վ ե թ ու թ յ ա ն հ ե տ ն ա ն ք ն ե թ ի կ ի թ առ մ ա ն մ ա ս ի ն պ ա հ ա ն ջ կ ա թ ո ղ է ն ե թ կ ա յ ա ց ն ե լ ց ա ն կ ա ց ա ծ շ ա հ ա գ թ գ ի ռ ա ն ձ : Ը ն ղ ո թ ու մ , ն շ վ ա ծ ֆ ո թ մ ա լ չ ա փ ա ն ի շ ը , կ ա թ ծ ե ս թ ե , Յ Յ օ թ ե ն ս գ թ թ ի կ ո ղ մ ի ց ը ն տ թ վ ե լ է ո թ պ ե ս առ ո չ ի ն չ և վ ի ճ ա հ ա թ ու յ ց գ ո թ ար ք ն ե թ ի տ ա թ ք ե թ ա կ մ ա ն լ թ ա ց ու ց ի չ չ ա փ ա ն ի շ , ք ա ն ի ո թ , օ թ ի ն ա կ , Յ Յ ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ թ ե ն ս գ թ թ ի 311-ր ղ հ ո ղ վ ա ծ ի 1-ի ն մ ա ս ո վ ի թ գ ո թ ծ ո ղ ու թ յ ու ն ն ե թ ի ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ը հ ա ս կ ա ն ա լ ու կ ա մ դ թ ա ն ք ղ ե կ ա վ ա թ ե լ ու ա ն ը ն դ ու ն ա կ ք ա ղ ա ք ա ց ու կ ն ք ա ծ գ ո թ ար ք ն ա ն վ ա վ ե թ ճ ա ն ա չ ե լ ու պ ա հ ա ն ջ ն ե թ կ ա յ ա ց ն ե լ ու ի թ ա վ ու ն ք վ ե թ ա պ ա հ վ ա ծ է ն ա ն ա յ ն ա ն ձ ա ն ց , ո թ ո ն ց ի թ ա վ ու ն ք ն ե թ ը և օ թ ե ն ք ո վ պ ա շ տ պ ա ն վ ո ղ շ ա հ ե թ ը խ ա խ տ վ ե լ ե ն ա յ դ գ ո թ ար ք ը կ ն ք ե լ ու հ ե տ ն ա ն ք ո վ : Մ ի ա ժ ա մ ա ն ա կ հ ա թ կ է ն կ ա տ ե լ , ո թ ա ն վ ա վ ե թ ու թ յ ա ն ք ո լ ո թ հ ա յ ց ե թ ո վ ա մ ե ն դ ե պ ք ու մ դ ա տ ա թ ա ն ն ե թ ը ք ն ն ա թ կ մ ա ն առ ա թ կ ա ե ն դ ա թ ձ ն ու մ հ ա յ ց վ ո թ ի շ ա հ ա գ թ գ ի ռ ա ն ձ լ ի ն ե լ ու հ ա ն գ ա մ ա ն ք ը :

Ա յ ս պ ի ս ո վ ` կ ե ո ծ և շ ի ն ծ ու գ ո թ ար ք ն ե թ ն ա յ ն ա ն վ ա վ ե թ գ ո թ ար ք ն ե թ ն ե ն , ո թ ո ն ք , մ ե թ կ ա թ ծ ի ք ո վ , գ տ ն վ ու մ ե ն առ ո չ ի ն չ և վ ի ճ ա հ ա թ ու յ ց գ ո թ ար ք ն ե թ ի մ ի ջ ա ն կ յ ա լ օ ղ ա կ ու մ : Ա յ ս գ ո թ ար ք ն ե թ ու մ առ կ ա կ ա մ ք ի ա թ ա տ ն ա կ ն հ ա յ տ չ է , ո թ ե ն թ ա դ թ ի ա ն վ ա վ ե թ ու թ յ ու ն առ ա ն ց դ ա տ ա թ ա ն ի կ ո ղ մ ի ց ն մ ա ն

ճանաչման, և միաժամանակ այս գործարքներն այնպիսի անվավեր գործարքներ են, որոնք կարող են խախտել անորոշ շրջանակի անձանց իրավունքներ և օրինական շահեր, հետևաբար գործարքի վիճարկման իրավունք ունեցող անձանց շրջանակն օրենսդրորեն կանխորոշել հնարավոր է, և նման իրավունք պետք է ունենա ցանկացած շահագրգիռ անձ:

Հիշարժան է Դ.Օ.Տ ու գովի այն միտքը, որ (...) օրենքը նշված դեպքերի շարքին կարող է նախատեսել ինչպես հարաբերական առնչն չնույնը, որին կարող են հղում կատարել միայն որոշակի իրավագործանք, այնպես էլ բացարձակ վիճարկելի ու չնույնը, որի դեպքում ցանկացած անձ, ով դրանում շահ ունի, կարող է անվավեր ու թյան հայց ներկայացնել<sup>141</sup>: Հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված իր գործող ու չնույնը նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու անընդունակ քաղաքացու կնքած գործարքի անվավեր ու թյանը հենց բացարձակ վիճարկելի ու թյան վառ ապացույցն է:

Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունը՝ առաջարկում ենք, առնչինչ և վիճահարույց գործարքների տարբերակման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված համակարգի անհակասական ու չնույնը նապահովելու համար, կեղծ և շինծու գործարքները դասել վիճահարույց գործարքների շարքը, սակայն դիտարկել դրանք որպես *բացարձակ վիճահարույց գործարքներ*՝ նկատի ունենալով, որ օրենսդրի կողմից առնչինչ և վիճահարույց գործարքների տարբերակման հիմքում դրված գլխավոր չափանիշը, այն է՝ անվավեր ու թյանը առանց դատարանի կողմից

<sup>141</sup>Տե՛ս **Тузов Д. О.** "Ничтожность и оспоримость юридической сделки: пандектное учение и современное право". – М.: Статут, 2006, էջեր 143-144:

անվավեր ճանաչման, չի տարածվում կեղծ և շինծու գործարքների նկատմամբ, քանի որ դրանցում առկա կամքի արատի ոչ պակաս լիակատար հետևանքով այդ գործարքներին առանց դատական ակտի որպես իրավական ոչ նշանակություն վերաբերվել չենք կարող: Միաժամանակ գտնում ենք, որ պետք է պահպանել կեղծ և շինծու գործարքները վիճարկելու ցանկացած շահագրգիռ անձի իրավունքը: Մասնավորապես՝ առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել հետևյալ ձևակերպումը՝ «*Կեղծ և շինծու գործարքները դատարանով կարող են անվավեր ճանաչվել ցանկացած շահագրգիռ անձի պահանջով*»:

**Գ Լ Ո Ւ Խ 2. Կ Ե Ղ Ց Ե Վ Շ Ի Ն Ց Ո Ւ Գ Ո Ր Ց Ա Ր Ք Ն Ե Ր Ի  
Տ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ո Ւ Մ Ը Հ Ա Ր Ա Կ Ի Ց Ի Ր Ա Վ Ա Կ Ա Ն  
Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ւ Տ Ն Ե Ր Ի Ց**

**§ 2.1. Կ Ե Ղ Ց Կ Ա Մ Հ Ի Ն Ց Ո Լ և Կ Ա Ս Կ Ա Ց Ե Լ Ի Գ Ո Ր Ց Ա Ր Ք Ն Ե Ր Ի  
Ի Ա Ր Ա Ք Ե Ր Ա Կ Գ Ո Լ Ք Յ Ա Ն Խ Ն Պ Ի Ր Ո Ս Ն Ա Ն Կ Ո Լ Ք Յ Ա Ն  
Վ Ա Ր Ո Լ Յ Ք Ի Հ Ր Ջ Ա Ն Ա Կ Ն Ե Ր Ո Լ Մ**

Ք աղ աք աց ի ա կ ա ն ի Ր ա վ ա հ ա Ր ա Ք Ե Ր Ո Լ Ք Յ Ո Լ Ն Ն Ե Ր Ի  
ս ո ւ թ Յ Ե կ տ ն Ե Ր Ո Ղ , հ ի մ ն վ Ե Լ ո վ կ ա մ ք ի  
ի ն ք ն ա վ ա Ր Ո Լ Ք Յ Ա Ն և պ ա յ մ ա ն ա գ Ր Ի ա գ ա տ ո ւ Ք Յ Ա Ն  
ս կ գ Ք Ո Լ Ն ք ն Ե Ր Ի վ Ր ա , ի Ր Ե Ն ց հ ա յ Ե ց ո Ղ Ո Լ Ք Յ Ա մ ք Ե Ն  
ո Ր Ո Հ Ո Լ մ պ ա յ մ ա ն ա գ Ր Ի պ ա յ մ ա ն Ն Ե Ր Ո Ղ , ա յ դ թ վ ո Լ մ  
պ ա յ մ ա ն ա գ Ր Ի գ ի ն Ո Ղ ( Հ Հ Ք աղ աք աց ի ա կ ա ն օ Ր Ե Ն ս գ Ր Ք Ի 3-  
ր դ հ ո Ղ վ ա Ց Ի 1-ի ն մ ա ս , 437-ր դ հ ո Ղ վ ա Ց Ի 4-ր դ մ ա ս , 440-ր դ  
հ ո Ղ վ ա Ց Ի 1-ի ն մ ա ս ) : Մ ի ն չ դ Ե ռ պ ա յ մ ա ն ա գ Ր Ի  
ա գ ա տ ո ւ Ք Յ Ա Ն ս կ գ Ք Ո Լ Ն ք Ո Ղ ք ա ց ա Ր Ճ ա կ չ Ե և կ ա Ր Ո Ղ Ե  
Ե Ն թ ա Ր կ վ Ե Լ ո Ր Ո Հ ա կ ի ս ա հ մ ա ն ա փ ա կ ո Լ մ Ն Ե Ր Ի : Ի ն չ պ Ե ս  
ա Ր դ Ե Ն Ն շ Ե Լ Ե ի ն ք , պ ա յ մ ա ն ա գ Ր Ի ա գ ա տ ո ւ Ք Յ Ա Ն  
ս կ գ Ք Ո Լ Ն ք Ի ս ա հ մ ա ն ա փ ա կ մ ա ն դ Ր ս և ո Ր Ո Լ մ Ն Ե Ր Ի ց Ե  
ա յ Ն պ Ի ս Ի գ Ո Ր Ց Ա Ր Ք Ն Ե Ր Ի կ ն ք մ ա ն  
ա ն թ ո Լ Յ Լ ա տ Ր Ե Լ ի Ո Լ Ք Յ Ո Լ Ն Ո Ղ , ո Ր Ո Ն ց Ն պ ա տ ա կ Ն Ե  
պ ա Ր տ ա վ ո Ր Ո Լ Ք Յ Ո Լ Ն Ն Ե Ր Ի կ ա տ ա Ր Ո Լ մ Ի ց Խ ո Լ ս ա փ Ե Լ Ո Ղ ,  
պ ա Ր տ ա տ Ե Ր Ե Ր Ի Հ ա հ Ե Ր Ի Ն վ ն ա ս Ե Լ Ո Ղ , գ ո Լ Յ ք  
« փ ա խ ց Ն Ե Լ Ո Ղ »<sup>142</sup>:

Ք աղ աք աց ի ա կ ա ն Հ Ր Ջ Ա Ն ա Ռ Ո Լ Ք Յ Ա Ն ս ո ւ թ Յ Ե կ տ ն Ե Ր Ո Ղ  
Ն մ ա ն մ ի ջ ո ց ն Ե Ր Ի հ ա ճ ա խ դ ի մ ո Լ մ Ե Ն ս ն ա ն կ Ո Լ Ք Յ Ա Ն Ո Ղ  
Ն ա խ ո Ր դ ո Ղ ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա Ց Ո Լ մ : Բ ա ն Ն ա յ Ն Ե , ո Ր  
պ ա Ր տ ա պ ա ն Ո Ղ կ ա Ր Ո Ղ Ե ս ն ա ն կ ճ ա ն ա չ վ Ե Լ ա յ Ն պ ա հ ի ց  
Ե Ր կ ա Ր ժ ա մ ա ն ա կ ա ն ց , Ե Ր ք վ Ե Ր ջ ի ն ի ս հ ա մ ա Ր  
կ ա ն խ ա տ Ե ս Ե Լ ի կ Լ ի ն ի ն մ ա ն ա Ր դ Յ Ո Լ Ն ք Ի  
ա ն խ ո Լ ս ա փ Ե Լ ի Ո Լ Ք Յ Ո Լ Ն Ո Ղ : Հ Ե Ն ց ա յ դ մ ի ջ ա ն կ Յ ա Լ  
ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա Ց Ի ը ն թ ա ց ք Ո Լ մ Ե , ո Ր պ ա Ր տ ա պ ա ն Ո Ղ ,  
կ ն ք Ե Լ ո վ մ ի Հ ա Ր ք ա Ռ Ե Ր և Ո Լ Յ օ Ր ի ն ա կ ա ն

<sup>142</sup>Տ Ե ՛ս , օ Ր ի ն ա կ , Кратенко М. В., ն շ վ ա Ց ա շ խ ա տ ո ւ Ք Յ Ո Լ Ն Ո Ղ , Ե ջ 18:

գործարքներ, փորձում է պարտատերերից թաքցնել իր ակտիվները, ստանձնել արհեստական պարտավորություններ, կատարել նվիրատվություններ կամ պարզապես կատարել վճարումներ որևէ պարտատիրոջ՝ ի վնաս մյուսներին<sup>143</sup>: նման հակաօրինական գործողությունների հետևանքով ոտնահարվում են սնանկ ճանաչված անձի մյուս բոլոր պարտատերերի իրավունքները: Սնանկությունը նախորդող ժամանակահատվածում ակտիվների մտադրված արտահոսքն իրականացվում է նաև կեղծ և շինծու գործարքներ կնքելու միջոցով: Հետևաբար սնանկության վարույթում պարտապանի գույքը հավաքագրելու իրավական հիմքերից է նաև պարտապանի կողմից կնքված կեղծ և շինծու գործարքների անվավերություն հետևանքների կիրառման պահանջներ կայացնելը:

Մի ժամանակ հարկ է նկատել, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով, պարտապանի կողմից կատարված փոխանցումները վերադարձնելու նպատակով, կառավարչին վերապահված են հատուկ լիազորություններ:

Այսպես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետստանալ՝

ա) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները (այդ թվում՝ ոչ դրամային) պարտապանի հետ փոխկապակցված անձանց, որոնք

<sup>143</sup>Տե՛ս ЮНСИТРАЛ, Комиссия организации объединенных наций по праву международной торговли "Руководство для законодательных органов по вопросам законодательства о несостоятельности", էջ 161 (հասանելի է [http://www.uncitral.org/pdf/russian/texts/insolven/05-80724\\_Ebook.pdf](http://www.uncitral.org/pdf/russian/texts/insolven/05-80724_Ebook.pdf) հղումով 22.12.2018թ. դրությամբ):

կատարվել են պարտապանին սնանկ ճանաչելու և նախորդող հինգ տարվա ընթացքում .

բ) պարտապանի կատարած անհատույց փոխանցումները ցանկացած երրորդ անձանց , որոնք կատարվել են սնանկության վերաբերյալ դիմում ներկայացնելու և նախորդող երեք տարվա ընթացքում .

գ) սնանկության դիմում ներկայացնելու և նախորդած 90 օրվա ընթացքում (մեկ տարվա ընթացքում , եթե փոխանցումը կատարվել է փոխկապակցված անձին) պարտապանի` պարտատիրոջը կամ վերջինիս օգտին նախկինում ստանձնած պարտավորության դիմաց կատարած ցանկացած փոխանցում (այդ թվում` ոչ դրամային) , որը կատարելու պահին պարտապանը անվճարունակ էր , և պարտատերը ստացել է էապես ավելին , քան կստանար սնանկության վարույթում` պարտապանի լուծարման դեպքում .

դ) պարտապանին սնանկ ճանաչելու և նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքների , փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասը , որը հետևանք է գույքի , ծառայության , աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրույթում դրա շուկայական արժեքի տարբերության , բացառությամբ եթե գործարքը կնքվել է հրապարակային սակարկության հիման վրա .

ե) պարտապանի և պարտատիրոջ միջև գուտացման համաձայնության և (կամ) ապահովության պայմանագրերի համաձայն բռնագանձված ապահովության առարկան , եթե միաժամանակ բավարարվել են հետևյալ պայմանները .(..):

Թեև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված են պարտապանի գույքի

կազմը վերականգնելու հատուկ հիմքեր, սակայն նախատեսված չէ մեխանիզմ, որով պետք է իրականացվի գույքի կազմի վերականգնումը: Այդ փաստն արձանագրվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից<sup>144</sup>: ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է, որ «պարտապանի կատարած անհատույց փոխանցումները հետստանալու լիազորությունն իրականացնելիս կառավարիչը պարտապանի գույքը վերադարձնելու նպատակով պետք է գործարքն անվավեր ճանաչելու հայցապահանջով դիմի դատարան (...)»<sup>145</sup>:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով պարտապանի գույքի կազմը վերականգնելու մեխանիզմների բացակայությունը գործնականում առաջացնում է իրավական անորոշություն, ինչի հետևանքով էլ բավականին հաճախ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի նշված հոդվածով սահմանված հիմքերով կառավարչի կողմից պարտապանի գույքի համալրում իրականացնելիս բարձրացվում է կնքված գործարքների կեղծ կամ շինծու լինելու հանգամանքն ապացուցելու հարցը<sup>146</sup>:

Նախ անհրաժեշտ ենք համարում նշել, որ մրցակցային իրավունքում գործարքների

---

<sup>144</sup>ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արձանագրել է. «(...) առկա է օրենսդրական բաց, քանի որ ստացվում է մի իրավիճակ, երբ օրենքով նախատեսվում է որոշակի փաստերի վրա հասնելու ուժով անշարժ գույքի վերաբերյալ կատարված փոխանցումները հետստանալու իրավունքը, սակայն այդ իրավունքի իրականացման մեխանիզմները բացակայում են: Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անշարժ գույքը հետստանալը դրա վերաբերյալ կնքված գործարքի անվավերության հետևանք է, հետևաբար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անշարժ գույքը հետստանալու իրավունքը կարող է իրականացվել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու միջոցով» (տե՛ս թիվ ԵՊԴ/1165/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. հոկտեմբերի 19-ի որոշումը):

<sup>145</sup>Տե՛ս թիվ ԵՊԴ/1165/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. հոկտեմբերի 19-ի որոշումը:

<sup>146</sup>Տե՛ս, օրինակ, թիվ ԵԱՆԴ/1684/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2017թ. մարտի 13-ի որոշումը:

անվավերության ինստիտուտի սկզբը դրվել է հռոմեական մասնավոր իրավունքում: Պատմականորեն այդ ինստիտուտի ծագումն ու զարգացումը պայմանավորված է եղել անվճարունակ պարտապանի պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Ներկայումս բացի նշված գործառնությանց այս ինստիտուտը նաև ապահովում է պարտապանի շահերի պաշտպանությունը, քանի որ համարվում է քաղաքացիաիրավական արդյունավետ միջոց, որի արդյունքում հնարավոր է վերականգնել վճարունակությունը<sup>147</sup>:

Իրավական դոկտրինան մշակել է երկու տեսություններ, որոնք ընկած են գործարքների վիճարկման հիմքում՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ: Սուբյեկտիվ տեսությունը ծագել է հռոմեական *Actio Pauliana*-ից (Պաուլիանայի հայց): Վերջինիս էությունն այն է, որ անվավեր կարող են ճանաչվել միայն այն գործարքները, որոնցում պարտապանի գործողություններն ուղղված են եղել պարտատերերին վնաս պատճառելուն: Օբյեկտիվ տեսությունը գործարքներն անվավեր ճանաչելու հնարավորությունը կապում է որոշակի օբյեկտիվ հանգամանքների հետ, օրինակ, որոշակի ժամանակահատվածի հետ, որի ընթացքում գործարքը կնքվել է, գործարքի տեսակի հետևյալն<sup>148</sup>: Նշված տեսություններն սկզբունքային տարբերությունը հանգում է պարտապանի գործարքներն անվավեր ճանաչելու հավանականության աստիճանին: Գործարքների վիճարկումը կարգավորող իրավական նորմերը մշակելիս և ամրագրելիս օբյեկտիվ տեսության օգտագործումը հեշտացնում է գործարքի

<sup>147</sup>Տե՛ս **Кораев К. Б.** "Правовой статус конкурсных кредиторов в деле о банкротстве": - М.: Волтерс Клувер, 2010, է 261:

<sup>148</sup>Տե՛ս նույն տեղում, է 261:



անվավերությունն ապացուցման գործընթացը :  
Սուբյեկտիվ մոտեցումը, հակառակը, դժվարացնում է գործարքի վիճարկելի բնույթի ապացուցման գործընթացը և հետևաբար իջեցնում է դատարանի կողմից պարտապանի գործարքն անվավեր ճանաչելու հավանականությունը <sup>149</sup>:

Օրենսդրի կողմից օբյեկտիվ մոտեցման կիրառումը մեծամասամբ համապատասխանում է պարտատերերի գույքային շահերին, քանի որ նրանց համար հեշտացնում է գործարքներն անվավեր ճանաչելու գործընթացը, սակայն առավել քիչ ապահովում է քաղաքացիական շրջանառության կայունությունը: Օրենսդրությունամբ սուբյեկտիվ մոտեցման կիրառումը, ընդհակառակը, առավել քիչ ապահովում է պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, սակայն առավել նպաստում է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը <sup>150</sup>:

Ինչպես նկատում ենք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված կարգավորումներից, օրենսդիրը պարտապանի գույքի կազմը վերականգնելու հիմքերը մշակելիս հիմնվել է առավելապես օբյեկտիվ տեսության վրա <sup>151</sup>: Նշվածը, մեր կարծիքով, ենթադրում է օրենսդրի մտադրությունը՝ հեշտացնելու պարտապանի գույքի կազմը վերականգնելու գործընթացը՝ դրանով իսկ առաջնայնություն

<sup>149</sup>Տե՛ս նույն տեղում, էջեր 61-62:

<sup>150</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 62:

<sup>151</sup>2016թ. կատարված փոփոխությունների արդյունքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի 3-րդ ենթակետով օգտագործվել է նաև սուբյեկտիվ չափանիշ («...հետապնդում էր բացառապես ակտիվները սնանկության գործընթացից դուրս բերելու նպատակ» (տե՛ս «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների արդյունքում և փոփոխությունների կատարելու մասին» 2016թ. հոկտեմբերի 27-ի ՀՀ Ռ-192-Ն օրենքը):

տալ ով պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Նախքան սնանկություն վարույթի շրջանակներում կեղծ ու շինծու և կասկածելի գործարքների հարաբերակցությանն անդրադառնալը փորձենք պարզել, թե ինչ ենք հասկանում կասկածելի գործարքասելով, և որևէ կասկածելի գործարքների նպատակային նշանակությունը:

Կասկածելի գործարքների էությունը բացահայտելու նպատակով՝ հարկ է նշել, որ անվճարունակություն մասին մի շարք երկրների օրենքներում պարունակվում են դրույթներ, որոնք գործում են հետադարձ կարգով՝ անցյալի որոշակի պահից (օրինակ՝ սնանկություն վարույթ սկսելու մասին դիմումը ներկայացնելու կամ այդ վարույթը հարուցելու ամսաթվից) որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Այդ ժամանակահատվածն առավել հաճախ անվանվում է «կասկածելի» ժամանակահատված: Այդ իրավադրույթներն ուղղված են այն առավել վաղ կնքված գործարքների դադարեցմանը, որոնց կողմ է եղել անվճարունակ պարտապանը կամ որոնք կնքվել են պարտապանի ակտիվներով, և եթե նման գործարքները հանգեցրել են որոշակի հետևանքների<sup>152</sup>: Նման հետևանքները ներառում են պարտապանի ակտիվների ընդհանուր արժեքի կրճատումը (օրինակ, եթե ակտիվները նվիրաբերվում են, զիջվում են կամ վաճառվում են շուկայական արժեքից ցածր գնով) կամ նույն հերթի պարտատերերի միջև վճարների հավասար բաշխման սկզբունքի խախտումը (օրինակ, որևէ չապահովված

<sup>152</sup>Տե՛ս ЮНСИТРАЛ, Комиссия организации объединенных наций по праву международной торговли "Руководство для законодательных органов по вопросам законодательства о несостоятельности", կետ 150 (հասկանելի է [http://www.uncitral.org/pdf/russian/texts/insolven/05-80724\\_Ebook.pdf](http://www.uncitral.org/pdf/russian/texts/insolven/05-80724_Ebook.pdf) հղումով 22.12.2018թ. դրությամբ):

պարտատիրոջ պարտքի վճարումը կամ ապահովված շահի տրամադրումը այն պարտատիրոջը, ով հակառակ դեպքում կլինեի չապահովված պարտատեր այն պայմաններում, երբ մյուս չապահովված պարտատերերին վճարումներ չեն կատարվում, և նրանք շարունակում են մնալ չապահովված պարտատերեր)<sup>153</sup>: Կասկածելի ժամանակահատվածում կնքված գործարքներն էլ անվանվում են կասկածելի գործարքներ <sup>154</sup>:

Այսպիսով, կասկածելի գործարքները, որոնց կողմ է պարտապանը կամ որոնք կնքվել են պարտապանի ակտիվներով, նախատեսվում են սնանկության հարաբերությունները կարգավորող հատուկ նորմերով, կնքվում են սնանկության վարույթին նախորդող օրենքով սահմանված որոշակի ժամանակահատվածի ընթացքում, այն է՝ կասկածելի ժամանակահատվածի ընթացքում, և հանգեցնում են պարտապանի ակտիվների ընդհանուր արժեքի կրճատմանը կամ նույն հերթի պարտատերերի միջև վճարների հավասար բաշխման սկզբունքի խախտմանը:

Թեև «Սնանկության մասին» ՀՀ օրենքով կասկածելի գործարքների վիճարկման հնարավորություն ուղղակիորեն նախատեսված չէ, սակայն, գտնում ենք, որ նույն օրենքի 54-րդ հոդվածում նախատեսված օբյեկտիվ չափանիշները, այդ թվում՝ նաև կասկածելի ժամանակահատվածի նախատեսումն արդեն իսկ վկայում են պարտապանի կողմից կատարված փոխանցումների հիմքում ընկած գործարքների կասկածելի բնույթի մասին: Ուստի, այսուհետ նպատակահարմար ենք գտնում այդ փոխանցումների հիմքում ընկած գործարքներն

<sup>153</sup>Տե՛ս նույն տեղում, կետ 150:

<sup>154</sup>Տե՛ս, օրինակ, Федеральный закон РФ "О несостоятельности (банкротстве)" от 26.10.2002 N 127-ФЗ հոդված 61.2 (իսսանելի է [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_39331/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39331/) հղումով 22.12.2018թ. դրո՞ւթյամբ):

անվանել կասկածելի գործարքներ: Ընդ որում, մեր կողմից կասկածելի գործարքների առանձնացումը նպատակ է հետապնդում հստակ տարանջատել այդ գործարքները կեղծ և շինծու գործարքներից:

Նկատի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է կեղծ գործարքի առնչվածության հետևանքներ կիրառելու և սնանկության գործով կառավարչի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիման վրա անհատույց փոխանցումները հետ պահանջելու կարգավորումների միջև տարբերություններին<sup>155</sup>, քննարկման առարկա կդարձնենք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված հիմքով պարտապանի գույքը համալրելու հարցը, իսկ պարտապանի կողմից կատարված փոխանցման հիմքում ընկած գործարքն էլ կանվանենք կասկածելի գործարք:

Ինչպես արդեն նշեցինք, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ «Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետստանալ` (...) դ) պարտապանին սնանկ ճանաչելու նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքների, փոխանցումների և գույքի օտարումների հետևանքով պարտապանին պատճառված վնասը, որը հետևանք է գույքի, ծառայությունների, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրույթում դրա շուկայական արժեքի տարբերության, բացառությամբ եթե գործարքը

<sup>155</sup>Տե՛ս թիվ ԵԱՆԴ/1684/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2017թ. մարտի 13-ի որոշումը:

կնքվել է հրապարակային սակարկության հիման վրա.(...)»:

Այսպիսով, պարտապանի գույքը սնանկության վարույթի շրջանակներից դուրս հանելու միջոցներից է այնպիսի գործարքների կնքումը, որոնց գինը պակաս կամ ավելի է համապատասխան գույքի, ծառայության, աշխատանքի իրացման շուկայական արժեքից: Նշվածով պայմանավորված՝ հարց է առաջանում, թե պարտապանի գույքը հավաքագրելու նպատակով՝ կնքված գործարքի գնի և շուկայական գնի տարբերությունն ինչ իրավական հիմքերով կարող է վերադարձվել:

ՀՀ քաղաքացիական օրենսդրության և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը վկայում է, որ պարտապանի կողմից կնքված գործարքի գնի և շուկայական արժեքի տարբերությունը վերադարձնել կարելի է երկու հիմքով՝ կա՛մ կնքված գործարքը կեղծ կամ շինծու որակելու և համապատասխան անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներ կայացնելու, կա՛մ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի հիման վրա պատճառված վնասի հատուցում պահանջելու միջոցով:

Նախանդրառնանք պարտապանի կողմից կնքված գործարքի գնի և համապատասխան գույքի, ծառայության, աշխատանքի իրացման շուկայական արժեքի տարբերության հետևանքով պարտապանի գույքի նվազմանը հանգեցնող գործարքների հնարավոր տարբերակներին: Այսպես, պարտապանի գույքը կարող է նվազել.

- երբ պարտապանն իր կողմից մատուցված ծառայության, կատարված աշխատանքի կամ վաճառված գույքի դիմաց դեյուրե ստացել է պակաս գումար, քան գործարքի կնքման պահին համապատասխան

ծառայություն, աշխատանքի կամ գույքի իրացման շուկայական արժեքներ:

- երբ պարտապանը ձեռք բերված ծառայություն, աշխատանքի կամ իրեն փոխանցված գույքի դիմաց դեյունը վճարել է ավելի գումար, քան գործարքի կնքման պահին համապատասխան ծառայություն, աշխատանքի կամ գույքի իրացման շուկայական արժեքներ:

Ընդ որում, պարտապանի կողմից կնքված գործարքի ու շուկայական գնի տարբերությունը կարող է լինել էական նշանակություն, պարտապանը նշված գործարքները կարող է կնքել դիտավորյալ՝ գույքը սնանկության վարույթի շրջանակներից դուրս բերելու նպատակով կամ բարեխղճորեն՝ առանց նման նպատակ հետապնդելու:

Պարտապանի գույքը դիտավորյալ նվազեցնող վերը նշված գործարքները կարող են որակվել, օրինակ, կեղծ գործարքներ, երբ իրականում գործարքն իրավական հետևանքներ չի առաջացրել, կողմերի փաստացի հարաբերություններում փոփոխություն չի կատարվել (օրինակ՝ պարտապանի կողմից 100.000 ՀՀ դրամով վաճառվել է 1.000.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող մեքենան, սակայն պարտապանը շարունակել է տվյալ մեքենան օգտագործել որպես սեփական միջոց): Ընդ որում, այդ գործարքը կեղծ որակելու համար այն պետք է կնքված լինի կողմերի դիտավորյալ՝ պարտապանի գույքը «փախցնելու» կամ պարտատերերի շահերին վնասելու նպատակով<sup>156</sup>: Նշված հանգամանքների ապացուցված լինելու պայմաններում պարտապանի գույքը կարող է վերականգնվել կեղծ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու միջոցով:

<sup>156</sup>Տե՛ս, օրինակ, թիվ ԿԴ 1/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. հունիսի 22-ի որոշումը:

Պարտապանի գույքը նվազեցնող նշված գործարքները, մեր կարծիքով, կարող են որակվել նաև որպես շինծու գործարքներ, երբ իրականում գործարքը կատարվել է, սակայն կողմերի համաձայնությամբ կատարվել է ոչ այն գնով, որը նշված է գործարքում, այսինքն՝ գործարքի իրական գինը քողարկվել է: Օրինակ, երբ պարտապան իրականում գործարքի կողմին վճարել է շուկայական արժեքի չափով, սակայն գործարքում նշվել է ավելի քիչ արժեք, ինչը հնարավորություն է տվել նրան գումարի մնացած մասը թողնելու իրեն՝ այդ արժեքը դեյուրե դուրս հանելով իր գույքի կազմից: Գործարքը շինծու կարող է որակվել նաև այն դեպքում, երբ պարտապանը ծառայություն է մատուցել, աշխատանք է կատարել կամ գույք վաճառել՝ դրա դիմաց իրականում ստանալով շուկայական արժեքին համարժեք հատուցում, սակայն գործարքում նշելով շուկայական արժեքից էականորեն ցածր գին՝ նպատակ ունենալով իր գույքի կազմում դեյուրե չներառելու իրականում ավելի ստացած գումարը: Նշված դեպքերում պարտապանի գույքը սնանկության վարույթից դուրս բերելու նպատակի ապացուցված լինելու պայմաններում մենք գործ կուներենանք շինծու գործարքի հետ, որտեղ քողարկված է գործարքի իրական գինը, ինչը հնարավորություն է կտա պարտապանի գույքը վերադարձնել շինծու գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու միջոցով:

Միաժամանակ հարկ է նկատել, որ նշված բոլոր գործարքները կարող են որակվել որպես կասկածելի գործարքներ, եթե կատարված լինեն պարտապանի սնանկ ճանաչելու նախորդող երեք տարվա ընթացքում: Տվյալ դեպքում պարտապանի գույքի ծավալը վերականգնելու իրավական միջոց կլինի

ն ան պարտապանին ս նանկ ճ անաչ ել ու մասին վ ճ ի ն ն  
օրինական ու ժի մեջ մտնել ու ց հետո մեկ տարվա  
ընթացքում կառավարչի կողմից դատական կարգով  
գ ու յ ք ի , ծ առայ ու թ յ ան , աշխատանքի իրացման  
արժեքի և գործարքի կատարման պահի դր ու թ յ ամբ դր ա  
շ ու կ այ ակ ան արժեքի տարբեր ու թ յ ու ն ը ս տանալ ու  
պահանջ ներկայացնելը :

Այսպիսով, եթե կարելի է պարտապանի գ ու յ ք ը  
նվազեցնող վերոնշյալ բ ու լ որ գործարքների դեմ  
պայքարել ինչպես Հ Հ քաղաքացիական օրենսգրքով  
սահմանված ը ն դ հ ան ու ը հ ի մ ք եր ու վ (Հ Հ  
քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդված), այնպես  
էլ «Ս ն ան կ ու թ յ ան մասին» Հ Հ օրենքի 54-րդ հոդված ու վ  
սահմանված հատուկ հ ի մ ք եր ու վ (1-ին մասի «դ» կետ), ապա  
հարց է առաջանում, թե որն է «Ս ն ան կ ու թ յ ան մասին»  
Հ Հ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ ու վ  
կառավարչին նման լիազոր ու թ յ ու ն տրամադրել ու  
նպատակը կամ այլ կերպ՝ որն է կասկածելի գործարք  
նախատեսել ու նպատակը :

Բանն այն է, որ կեղծ կամ շինծ ու գործարքի  
առկայ ու թ յ ու ն ն ապաց ու ց ել ը բավականին բարդ  
գործընթաց է, երբեմն ն ու յ ն ի ս կ անհնարին :  
Մասնավորապես, կեղծ կամ շինծ ու գործարքների  
անվավեր ու թ յ ան հետևանքների կիրառման համար  
անհրաժեշտ է ապաց ու ց ել մի շարք հանգամանքներ՝  
կողմերի կամքի և կամահայտն ու թ յ ան  
անհամապատասխան ու թ յ ու ն ը , գործարքի բ ու լ որ  
կողմերի՝ տվյալ գործարք ու վ իրավական  
հետևանքներ չառաջացնել ու կամ գործարքի իրական  
գինը քողարկել ու մտադր ու թ յ ու ն ը , այսինքն՝ ոչ  
բարեխիղճ լ ի ն ել ը , պարտավոր ու թ յ ու ն ն եր ի  
կատար ու մ ի ց խ ու ս ա փ ել ու ն պատակի  
առկայ ու թ յ ու ն ը <sup>157</sup>: Մինչդեռ «Ս ն ան կ ու թ յ ան մասին»

<sup>157</sup>Տե՛ս, օրինակ, թիվ ԿԴ 1/0935/02/14 քաղաքացիական գործ ու վ Հ Հ  
վճռաբեկ դատարանի 2016թ. հ ու լ լ ի ս ի 22-ի որոշ ու մ ը :



ՀՀ օրենքի 54-րդ 1-ին մասի «դ» կետով կառավարչի կողմից պարտապանի գույքը կարող է վերադարձվել շատ ավելի պարզեցված կարգով: Մասնավորապես՝ կառավարչի նշված լիազորությունն իրականացնելու համար բավարար է միայն ապացուցել պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում պարտապանի կողմից այնպիսի գործարքի կատարված լինելու հանգամանքը, որի գինը տարբերվում է գործարքի կնքման պահին գործող շուկայական գնից: Ընդ որում, նման գործարքների շարքում կարող են ներառվել ինչպես այն գործարքները, որոնք կնքվել են պարտապանի գույքը նվազեցնելու նպատակով (կեղծ կամ շինծու), այնպես էլ գործարքներ, որոնք կնքվել են բարեխղճորեն՝ առանց նման նպատակ հետապնդելու և գործարքներ, որոնցից բխող իրավական հետևանքներն առաջացել են, սակայն միաժամանակ պարտատերերի շահերին վնասելու նպատակ են հետապնդել:

Բանն այն է, որ «Սնանկություն մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված պահանջի հիմքում ընկած է կասկածելի գործարքը, որին նման բնույթ է հաղորդվել օրենսդրի կողմից մի շարք օբյեկտիվ հատկանիշներ նախատեսելու ուժով: Տվյալ գործարքը կնքված է կասկածելի ժամանակահատվածում, այն է՝ պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում, տվյալ գործարքի գինը տարբերվում է գործարքի կնքման պահի դրույթամբ շուկայական արժեքից, գործարքը կնքած կողմը դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, և գործարքը հանգեցրել է պարտապանի գույքի նվազման: Մեր կարծիքով, նշված օբյեկտիվ հատկանիշները, սնանկության վարույթի նպատակներից ելնելով, պետք է դիտարկվեն բավարար՝ գործարքի գնի և շուկայական գնի

տարբերությունը վերադարձնելու համար :  
Կառավարիչը չպետք է պարտավորություն կրի՝  
ապացուցելու նման գործարքով պարտապանի գույքը  
սնանկության վարույթից դուրս բերելու կամ  
առհասարակ պարտատերերի շահերին վնաս  
պատճառելու կողմերի հետապնդած նպատակի  
առկայությունը (եթե նույնիսկ առկա է այդպիսի  
նպատակ) :

Գտնում ենք, որ նման մոտեցման ցուցաբերումն  
արդյունավետ է, քանի որ սնանկության վարույթի  
շրջանակներում կառավարչի կողմից նման պահանջ  
ներկայացնելը կոչված է ապահովելու բոլոր  
պարտատերերի շահերի միջև արդարացի  
հավասարակշռությունը, այն է՝ վերադարձնելու  
պարտապանի գույքի այն մասը, որը փոխանցվել է  
առանց համարժեք հատուցման (ոչ համարժեք գույքի,  
աշխատանքի, ծառայության դիմաց) : Օրենսդրի  
կողմից սնանկության վարույթում պարտապանի  
գույքը հավաքագրելու նշված կառուցակարգը  
մշակվել է օբյեկտիվ չափանիշի հիման վրա, ինչը,  
կարծում ենք, իրավաչափ է և բխում է ինչպես  
սնանկության վարույթի նպատակներից, այնպես էլ  
համապատասխանում է այդ ոլորտում պետության  
սահմանադրական գործառնություն : Մասնավորապես,  
պետությունը, պետական քաղաքականության  
միջոցով ապահովելով ընդհանուր տնտեսական  
բարեկեցությունը և սոցիալական արդարությունը  
(ՔՅ Սահմանադրության 11-րդ հոդված),  
Ֆինանսատնտեսական և վարկային միասնական  
պետական քաղաքականության իրականացումը (ՔՅ  
Սահմանադրության 154-րդ հոդվածի 1-ին մաս), ոչ  
բարենպաստ տնտեսական պայմանների առաջացման  
դեպքում, ինչպիսին է տվյալ դեպքում  
սնանկությունը, իրականացնում է հանրային-  
իրավական միջամտություն մասնավոր

ի ր ա վ ա հ ա ր ա ք ե ր ու թ յ ու ն ն ե ր ի ն : Ը ս տ ա յ դ մ ,  
պ ե տ ու թ յ ու ն ը ձ ե ո ն ա ր կ ու մ է ա ն հ ր ա ժ ե շ տ  
մ ի ջ ո գ ն ե ր ` ս ն ա ն կ ու թ յ ա ն վ ա ր ու յ թ ու մ ը ն դ գ ր կ վ ա ծ  
բ ո լ ո ր ա ն ձ ա ն ց շ ա հ ե ր ի ա ր դ ա ր ա ց ի պ ա հ պ ա ն մ ա ն  
ու ղ ո ղ ու թ յ ա մ ք : Ա յ դ ն պ ա տ ա կ ի ն է ծ ա ո ա յ ու մ  
ս ն ա ն կ ու թ յ ա ն ը ն թ ա ց ա կ ա ր գ ե ր ի ն ա խ ա տ ե ս ու մ ը ,  
ո ր ո ն ք կ ո չ վ ա ծ ե ն ա պ ա հ ո վ ե լ ու ա ր դ ա ր ա ց ի  
հ ա վ ա ս ա ր ա կ շ ո ու թ յ ու ն պ ա ր տ ա պ ա ն ի , պ ա ր տ ա տ ե ր ե ր ի և  
պ ա ր տ ա պ ա ն ի հ ե տ ա ո ն չ վ ո ղ մ յ ու ս ա ն ձ ա ն ց շ ա հ ե ր ի  
մ ի ջ և <sup>158</sup>:

Վ ե ր ո գ ր յ ա լ ի հ ա մ ա տ ե ք ս տ ու մ հ ա ր կ է հ ա վ ե լ ե լ , ո ր  
կ ա ս կ ա ծ ե լ ի գ ո ր ծ ա ր ք ն ե ր ի ն կ ա տ մ ա մ ք հ ա կ ա ո ա կ և մ ե ր  
կ ո ղ մ ի ց ն շ վ ա ծ հ ի մ ն ա վ ո ր ու մ ն ե ր ո վ ա ն ը ն դ ու ն ե լ ի  
մ ո տ ե ց ու մ է ց ու ց ա ք ե ր վ ե լ ի ն չ պ ե ս Յ Յ  
ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն դ ա տ ա ր ա ն ի կ ո ղ մ ի ց , ա յ ն պ ե ս է լ  
□ Ս ն ա ն կ ու թ յ ա ն մ ա ս ի ն □ Յ ա յ ա ս տ ա ն ի  
Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն օ ր ե ն ք ու մ փ ո փ ո խ ու թ յ ու ն ն ե ր և  
լ ր ա ց ու մ ն ե ր կ ա տ ա ր ե լ ու մ ա ս ի ն □ Յ Յ օ ր ե ն ք ի  
ն ա խ ա գ ի ծ ը մ շ ա կ ո ղ ն ե ր ի կ ո ղ մ ի ց : Մ ա ս ն ա վ ո ր ա պ ե ս ` Յ Յ  
ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն դ ա տ ա ր ա ն ը , ք ն ն ա ր կ ե լ ո վ  
«Ս ն ա ն կ ու թ յ ա ն մ ա ս ի ն » Յ Յ օ ր ե ն ք ի 54-ր դ հ ո դ վ ա ծ ի 1-ի ն  
մ ա ս ի «ա» կ ե տ ի ` Յ Յ ս ա հ մ ա ն ա դ ր ու թ յ ա ն ը  
հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու թ յ ա ն հ ա ր ց ը , մ ա ս ն ա վ ո ր ա պ ե ս ն շ ե լ  
է , ո ր «Ս ն ա ն կ ու թ յ ա ն մ ա ս ի ն » Յ Յ օ ր ե ն ք ի 54-ր դ հ ո դ վ ա ծ ի  
1-ի ն մ ա ս ի «ա» կ ե տ ը հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու մ է Յ ա յ ա ս տ ա ն ի  
Յ ա ն ր ա պ ե տ ու թ յ ա ն Ս ա հ մ ա ն ա դ ր ու թ յ ա ն ն ա յ ն պ ի ս ի  
ս ա հ մ ա ն ա դ ր ա ի ր ա վ ա կ ա ն ք ո վ ա ն դ ա կ ու թ յ ա մ ք ,  
հ ա մ ա ձ ա յ ն ո ր ի ` կ ա ո ա վ ա ր ի չ ը կ ա ր ո ղ է պ ա ր տ ա պ ա ն ի ն  
ս ն ա ն կ ճ ա ն ա չ ե լ ու մ ա ս ի ն վ ճ ի ո ն օ ր ի ն ա կ ա ն ու ժ ի մ ե ջ  
մ տ ն ե լ ու ց հ ե տ ո ` մ ե կ տ ա ր վ ա ը ն թ ա ց ք ու մ , դ ի մ ե լ և  
դ ա տ ա կ ա ն կ ա ր գ ո վ հ ե տ ս տ ա ն ա լ պ ա ր տ ա պ ա ն ի ն ս ն ա ն կ  
ճ ա ն ա չ ե լ ու ն ն ա խ ո ր դ ո ղ հ ի ն գ տ ա ր վ ա ը ն թ ա ց ք ու մ  
պ ա ր տ ա պ ա ն ի հ ե տ փ ո խ կ ա պ ա կ ց վ ա ծ ա ն ձ ա ն ց պ ա ր տ ա պ ա ն ի

<sup>158</sup>Տ ե ՛ս , օ ր ի ն ա կ , Յ Յ ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն դ ա տ ա ր ա ն ի 2008թ . փ ե տ ր վ ա ր ի 25-  
ի թ ի վ Ս Դ Ո -735 ո ր ո շ ու մ ը :

կատարած այն անհատույց փոխանցումները, որոնք դատարանի կողմից կգնահատվեն որպես պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորություն կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրություն մասին ակնհայտորեն վկայող փոխանցումներ»<sup>159</sup>: □Սնանկություն □ Զայաստանի Զանրապետություն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին □ ԶԶ օրենքի նախագծով (շրջանառված 2018թ. ընթացքում) 54-րդ հոդվածում սահմանված փոխանցումների կապակցությամբ նախատեսվել էր, որ դատարանը բավարարում է այդ փոխանցումները հետ ստանալու կառավարչի պահանջը, եթե փոխանցումներն ակնհայտորեն վկայում են պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորություն կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրություն մասին: Զավելենք, որ □Սնանկություն □ մասին □ Զայաստանի Զանրապետություն փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին □ ԶԶ օրենքի նախագծի լրամշակված տարբերակում (շրջանառություն մեջ է դրված 2019թ. փետրվարին), նշված կարգավորումը հանվել է <sup>160</sup>: Բանն այն է, որ □Սնանկություն □ մասին □ ԶԶ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կասկածելի գործարքների համար սահմանված օբյեկտիվ հատկանիշներն արդեն իսկ բավարար են գույքը սնանկություն վարույթ վերադարձնելու համար, իսկ նշված սուբյեկտիվ հատկանիշի լրացուցիչ սահմանումը կառավարչի համար շատ դժարին, գրեթե անհնարին կդարձնի կասկածելի գործարքների վիճարկումը, քանի որ բավականին բարդ կլինի ապացուցել պարտատերերի

<sup>159</sup>Տե՛ս ԶԶ սահմանդրական դատարանի 2017թ. հունվարի 31-ի թիվ ՍԴՈ-1340 որոշումը:  
<sup>160</sup>Նախագծերը հասանելի են <https://www.e-draft.am/projects/874> հղումով 02.04.2019թ. դրությամբ, <https://www.e-draft.am/projects/1510> հղումով 02.04.2019թ. դրությամբ:

նկատմամբ ունեցած պարտավորության կատարումից խուսափելու՝ պարտապանի մտադրության առկայությունը, ինչն էլ կհանգեցնի մյուս բոլոր պարտատերերի իրավունքների ոտնահարման: Ընդ որում, նշված սուբյեկտիվ հատկանիշի նախատեսումը ջնջում է կեղծ և շինծու ու կասկածելի գործարքների միջև առկա սկզբունքային տարբերությունը՝ գրեթե իմաստագրկելով Սնանկության մասին ՅՅ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորման նպատակային նշանակությունը:

Վերոնշարդրյալի հիման վրա՝ կարծում ենք, որ «Սնանկության մասին» ՅՅ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի հիման վրա կառավարչի կողմից պարտապանի կնքած գործարքի և այդ գործարքի շուկայական գնի տարբերությունը պետք է վերադարձվի պարգեցված կարգով, այսինքն՝ անհրաժեշտ է ապացուցել գործարքի կեղծ կամ շինծու բնույթը, հետևապես նաև պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակի առկայությունը: Նշվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պարտապանի կոնտրագենտն արդեն իսկ իր փոխանցած գույքի, մատուցած ծառայության կամ կատարած աշխատանքի դիմաց ստացել է համարժեք հատուցում, իսկ ավել վճարվածը նրան անցել է անհատույց կերպով, որն էլ պետք է վերադարձվի այլ՝ ավելի կարևոր արժեքների պաշտպանության, այն է՝ մյուս պարտատերերի պահանջների բավարարման համար:

Վերոնշյալով հանդերձ «Սնանկության մասին» ՅՅ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված իրավադրույթի տառացի մեկնաբանությունը թույլ է տալիս անել հետևություն այն մասին, որ օրենսդրի կողմից նշված նորմի հիմքում կարծես թե դրվել է հակառակ

մոտեցում, ինչը, կարծում ենք, կարող է հանգեցնել կասկածելի և կեղծ ու շինծու գործարքների նույնացման: Այսպես՝ ըստ դրոյթի տառացի մեկնաբանության՝ պարտապանի կնքած գործարքի գնի ու շուկայական գնի տարբերությունը վերադարձնելու համար կառավարիչը պարտավոր է ապացուցել «պատճառված վնասի» առկայությունը: Բանն այն է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողությունների միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը<sup>161</sup>: Յետևաբար կառավարիչը պետք է ապացուցի ոչ միայն վնասի առկայությունը, այլ նաև գործարքը կնքած կողմերի ոչ օրինաչափ վարքագծի առկայությունը, որը տվյալ դեպքում կարող է լինել կնքված գործարքով պարտավորությունների կատարումից խուսափելը կամ գոյթ «փախցնելը», վնասների ու կնքված գործարքի միջև պատճառահետևանքային կապի և գործարքի կողմերի մեղքի միաժամանակյա առկայությունը:

Եթե իրավակիրառ պրակտիկայում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված լիազորության իրականացման համար կառավարչի վրա դրվի նշված բոլոր հանգամանքների առկայությունն ապացուցելու պարտականություն, ապա դա, մեր կարծիքով, կհանգեցնի կողմերի միջև կնքված գործարքի կեղծ կամ շինծու լինելն ապացուցելու պարտականության, ինչն ինքնին բավականին բարդ է ապացուցման տեսանկյունից: Կարծում ենք, որ նման իրավակարգավորումը չի

<sup>161</sup>Տե՛ս, ի թիվս այլ որոշումների, թիվ ՀՔԴ 3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի, 2009թ. փետրվարի 13-ի որոշումը:

բխում սնանկության վարույթի նպատակներից, չի համապատասխանում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությանը, և կառավարչի կողմից նույն հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված հիմքով պարտապանի գույքը հավաքագրելու լիազորության իրականացումը կդարձնի գրեթե անհնարին: Այսինքն՝ նշված իրավադրույթում «պատճառված վնաս» հասկացության օգտագործումը, որպես կանոն, հանգեցնելու է կասկածելի և կեղծ կամ շինծու գործարքների նույնացման, ինչը, մեր կարծիքով, անընդունելի է՝ ելնելով ինչպես սնանկության վարույթի նպատակներից, այնպես էլ այդ գործարքների տարբերակիչ առանձնահատկություններից:

Նշվածից բացի՝ կարծում ենք, որ իմաստազուրկ է դառնում կառավարչին «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նման լիազորություն հատուկ տրամադրելը, ինչպես նաև այդ լիազորության իրականացումը պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ժամկետով սահմանափակելը, քանի որ այսպես, թե այնպես կառավարիչն իրավունք ունի, պարտապանի գույքը հավաքագրելու նպատակով, վիճարկել վերջինիս կնքած գործարքները, այդ թվում նաև՝ կեղծ կամ շինծու լինելու հիմքով: Ընդ որում, թե «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կասկածելի գործարքների վիճարկման համար նախատեսված է մեկ տարվա ժամկետ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, ապա առնչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել դրա կատարման

օրվանից տասը տարվա ընթացքում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 1-ին մաս):

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով կառավարչին պետք է իրավունք տրվի պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինակյան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում դիմել և դատական կարգով հետստանալ ոչ թե պատճառված վնասը, այլ գույքի, ծառայության, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրույթով դրա շուկայական արժեքի տարբերությունը:

Միաժամանակ, գտնում ենք, որ նպատակահարմար է □Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված պահանջի իրավունքը կառավարչին վերապահել այն դեպքում, երբ գործարքի գնի և շուկայական արժեքի տարբերությունն էական է: Ընդ որում, իրավական որոշակիության ապահովման նպատակով՝ «էական տարբերություն» հասկացությունն առաջարկում ենք արտահայտել նաև որոշակի թվային ցուցանիշով, օրինակ՝ տոկոսային հարաբերակցությամբ:

Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ շուկայական արժեքից էականորեն տարբերվող գնով կնքված կասկածելի գործարքն իրականում կարող է կնքված լինել նաև բարեխղճորեն՝ առանց պարտատերի շահերին վնաս պատճառելու նպատակի: Ուստի, քննարկման առարկա իրավադրույթով, կարծում ենք, որ կառավարչին պետք է իրավունք վերապահել հետստանալու նշված գնային տարբերության որոշակի մասը, որը ևս առաջարկում ենք արտահայտել որոշակի տոկոսային հարաբերակցությամբ: Բոլոր այն դեպքերում, երբ կառավարիչը կգա այն համոզման, որ իրականում կնքվել է կեղծ կամ



շինծու գործարք՝ պարտատերերի շահերին վնասելու նպատակով, կարող է ներկայացնել կեղծ կամ շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջ (Սնանկության մասին ԶՅ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի զգկետ): Կարծու մենք, նման կարգավորումը որոշակի չափով կապահովի նաև բարեխիղճ կոնտրագենտների իրավունքների պաշտպանությունը:

Վերոգրյալ վերլուծության արդյունքում առաջարկում ենք «Սնանկության մասին» ԶՅ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը ձևակերպել հետևյալ կերպ՝ համապատասխան տոկոսային ցուցանիշները դիտարկելով որպես պայմանական թվեր. «Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետ ստանալ՝ (...) դ) պարտապանին սնանկ ճանաչելու նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքներով իրացված գույքի, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի արժեքի և գործարքի կատարման պահի դրույթով դրա շուկայական արժեքի էական տարբերության 60%-ը, բացառությամբ եթե գործարքը կնքվել է հրապարակային սակարկության հիման վրա: Գույքի, ծառայության, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրույթով դրա շուկայական արժեքի տարբերությունը համարվում է էական, եթե գերազանցում է շուկայական արժեքի նվազագույնը 20%-ը □:

**§2.2. Իրական կողմի քոլարկման նպատակով կնքված շինծու գործարքի տարբերակման առանձնահատկությունները**

Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածով ուղղակիորեն սահմանված չէ իրական կողմի քողարկման նպատակով կնքված գործարքը՝ որպես շինծու գործարքի տեսակ, սակայն նման գործարքի կնքման հնարավորությունը, ինչպես արդեն նշել էինք, ամրագրվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ նշվել է. «(...) Գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առնչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն՝ շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց»<sup>162</sup>: «Իրականում ոչ այն ստորագրած անձանց միջև կնքված գործարքը» մեր կողմից անվանվել է «իրական կողմի քողարկման նպատակով կնքված գործարք» կամ «այլ սուբյեկտային կազմով գործարք»:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշվել է. «(...) Երկկողմ գործարքը կնքողներից միայն մեկ կողմի մոտ խաթարված կամքի առկայության դեպքում, չի կարող այդ գործարքը գնահատվել շինծու, քանի որ նման փաստերի առկայությունը հնարավոր հիմք է տալիս հանգելու հետևություն, որ հարցը վերաբերում է խաբեության կնքված գործարքին (վիճահարույց գործարք), որի համար

<sup>162</sup>Տե՛ս թիվ 3-89(ՏԴ) և թիվ 3-35(ՎԴ) քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. փետրվարի 1-ի որոշումները:

օրենսդիրը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդված) սահմանել է անվավեր ճանաչելու այլ հիմքեր և դրանից բխող հետևանքներ»<sup>163</sup>:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՌԴ գերագույն դատարանի պլենումի կողմից ևս որպես շինծու գործարք դիտարկվել է նաև այն գործարքը, որը կնքվել է՝ այլ սուբյեկտային կազմով գործարքը քողարկելու նպատակով: Ընդ որում ՌԴ գերագույն դատարանի պլենումի կողմից ևս սահմանվել է. «Շինծու լինելու կապակցությամբ անվավեր կարող է ճանաչվել միայն այն գործարքը, որն ուղղված է այլ իրավական հետևանքներ առաջացնելուն և քողարկում է գործարքի բոլոր մասնակիցների այլ կամքը: Միայն մեկ մասնակցի մտադրությունը՝ կնքելու շինծու գործարք, տվյալ նորմի կիրառման համար բավարարչ է»<sup>164</sup>:

Վերոգրյալից հետևում է, որ այլ սուբյեկտային կազմով գործարքը շինծու գործարք որակելու համար շինծու գործարք կնքելու կամքը պետք է առկա լինի գործարքի բոլոր մասնակիցների մոտ, հակառակ դեպքում գործարքը չի կարող դիտարկվել շինծու<sup>165</sup>: Բոլոր այն դեպքերում, երբ կողմին քողարկելու նպատակը հետապնդել են միայն գործարքի մի կողմում հանդես եկող մասնակիցները, ապա շինծու գործարքի առկայության մասին չի կարելի խոսել:

Մեր կարծիքով, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՌԴ գերագույն դատարանի պլենումի նման մոտեցման հիմքում գուցե ընկած է այն տրամաբանությունը,

<sup>163</sup>Տե՛ս թիվ 3-793 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. մայիսի 18-ի որոշումը:

<sup>164</sup>Տե՛ս Постановление Пленума Верховного Суда РФ от 23.06.2015 N 25 "О применении судами некоторых положений раздела I части первой Гражданского кодекса Российской Федерации", կետ 87:

<sup>165</sup>Որպես օրինակ, տե՛ս թիվ ԵՔԴ/0738/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2009թ. հունիսի 24-ի որոշումը, թիվ ԵՄԴ/2425/02/16 քաղաքացիական գործով երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2016թ. նոյեմբերի 30-ի վճիռը:

որ նախ՝ միայն մեկ կողմի մոտ գործարքի իրական կողմին քողարկելու նպատակի առկայությունն ապացուցելն ավելի դժվար է, քան երբ նման նպատակ են հետապնդում գործարքի երկու կողմերը: Այնուհետև՝ եթե գործարքի կողմերից մեկը գործել է բարեխղճորեն, և միայն մյուս կողմն է իրական կողմին քողարկելու նպատակ հետապնդել, անվավերություն անհետևանքների կիրառումը կարող է հանգեցնել նշված բարեխղճ կողմի իրավունքների և օրինական շահերի խախտման: Մասնավորապես՝ եթե քողարկված գործարքը ևս անվավեր լինի (հիմնականում այդպես էլ լինում է, քանի որ իրական կողմը գործարք կնքելու իրավունք, որպես կանոն, չի ունենում, ինչն էլ իրական կողմին քողարկելու պատճառ է հանդիսանում, օրինակ՝ օտարեկրացի լինելու հետևանքով հողի նկատմամբ սեփականության իրավունք չի ունենում), ապա այն կհանգեցնի երկկողմանի ռեստիտուցիայի, այսինքն՝ բարեխղճ կողմը ստիպված պետք է լինի վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը կամ հատուցել դրա արժեքը, ինչը կարող է տվյալ պահին վերջինիս համար անհնարին լինել կամ պարզապես հանգեցնել վնասների: Բացի այդ, եթե քողարկված կողմը լինի պարտապանը, ապա վերջինիս գործարքի կողմ դիտարկելը պետք է իրականացվի պարտատիրոջ համաձայնությունով, քանի որ պարտատիրոջ համար եական նշանակություն ունի, թե ով է իր հանդեպ պարտավորությունը կատարողը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մաս):

Միաժամանակ փաստենք, որ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ իրական կողմի քողարկման նպատակով կնքված շինծու գործարքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը բավականին հաճախ չի պահպանվում: Երբեմն իրական կողմի

քողարկման նպատակով շինծու գործարք են որակվում այն գործարքները, որոնցում իրական կողմին քողարկելու կամքն առկա է միայն գործարքի մեկ կողմում հանդես եկող մասնակիցների մոտ: Նշված երևույթի պատճառը թերևս այն է, որ նման գործարքների դեմ պայքարի օրենսդրական այլ կառուցակարգ, քան շինծու գործարքն է, սահմանված չէ: Երբեմն շինծու գործարքի ինստիտուտը կիրառվում է կոմիսիայի, նվիրատվության հարաբերությունների նկատմամբ, իսկ երբեմն էլ վստահության հարաբերությունների նկատմամբ, որոնք տվյալ դեպքում քաղաքացիաիրավական պաշտպանությունից չեն օգտվում:

Օրինակ, դիմելով դատարան՝ հայցվոր Միքայել Մարգարյանը խնդրել է շինծու գործարք ճանաչել 25.07.2008թ. կնքված խաղողի այգու և ինքնակամ շինությունների վերաբերյալ առևձաճառքի պայմանագիրը գնորդ Վարդուհի Մարգարյանի (Միքայել Մարգարյանի դուստրն է - նշումը մերն է) մասով և նշված գործարքի նկատմամբ կիրառել անվավեր գործարքին վերաբերող կանոնները, այն է՝ նշված գործարքով որպես գնորդ ճանաչել իրեն՝ Միքայել Մարգարյանին, առևձաճառքի պայմանագիրը համարել կնքված գնորդ Միքայել Մարգարյանի և Արայիկ Յովհաննիսյանի միջև, որի անունից լիազորագրով հանդես է եկել Արսեն Էվոյանը: Կիրառել առաջին շինծու գործարքի անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել դրա հիման վրա Վարդուհի Մարգարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ 25.07.2008թ. կնքված առևձաճառքի պայմանագրով գնորդ է հանդիսացել հայցվոր Միքայել Մարգարյանը, որպիսի հանգամանքը դատարանի կողմից հաստատվել

Է ոչ միայն գործին կից ապացույցներով, այլև դատաքննության ընթացքում վկա Արսեն Էվոյանի ցուցմունքով, որով վերջինս հայտնել է, որ վերոնշյալ գործարքը եղել է մոտտասը տարի առաջ: Իրեն գանգել է Արթուր Ղալաչյանը (Միքայել Մարգարյանի փեսան է - նշումը մերն է) անշարժ գույքը գնելու համար, հանդիպել են Սուսալեռ գյուղում, որի ժամանակ ինքը ցույց է տվել տարածքը: Արթուր Ղալաչյանը առաջարկել է փոխանակում անել, սակայն ինքը չի համաձայնել: Միքանի օրանց Արթուր Ղալաչյանը նորից է գանգել և եկել է Միքայել Մարգարյանի հետ միասին: Բանակցել են, և առաջարկվել է նշված գույքը վաճառել 50.000 ԱՄՆ դոլարով: Նույն օրը Միքայել Մարգարյանն իրեն է տվել 5.000 ԱՄՆ դոլար գումար՝ որպես նախավճար: Երկու շաբթի օրն իր կնոջ հետ միասին գնացել են նոտարական գրասենյակ՝ նոտարական կարգով առևժամառքի պայմանագիր կնքելու համար, որտեղ գույքը գրանցվել է Վարդուհի Մարգարյանի անունով: Այնուհետև գնացել են Երևան քաղաք Արթուր Ղալաչյանի, թե Միքայել Մարգարյանի տուն, որտեղ ինքը գրուցել է Արթուր Ղալաչյանի հետ, նրանից գումար չի ստացել, իրենց կանայք առանձնացել են, և ինքը տեղյակ չէ, թե մնացած գումարը ով է տվել: Միաժամանակ հայտնել է, որ իրականում չգիտի, թե ով է գնել անշարժ գույքը, սակայն գույքը գրանցվել է Վարդուհի Մարգարյանի անունով: Իր հետ բանակցությունները վարել է Միքայել Մարգարյանը, նախնական գումարը նույնպես տվել է Միքայել Մարգարյանը: 5.000 ԱՄՆ դոլար նախավճարը իրեն տվել է Միքայել Մարգարյանը:

Նշված փաստական հանգամանքների պայմաններում դատարանը հանգել է հետևություն, որ 25.07.2008թ. վաճառող Արայիկ Յովհաննիսյանի և

գնորդ Վարդուհի Մարգարյանի միջև կնքված անշարժ գույքի առևճառքի պայմանագրով գնորդ է հանդիսացել հայցվոր Միքայել Մարգարյանը, քանի որ վերջինս է վարել բանակցությունները, նա է վճարել գույքի համար պայմանավորված գինը, սակայն գույքը գրանցվել է Վարդուհի Մարգարյանի անվամբ, այսինքն՝ նշված պայմանագրով քողարկվել է Միքայել Մարգարյանի՝ իրական գնորդ հանդիսանալու հանգամանքը<sup>166</sup>:

Ինչպես նկատում ենք, կնքված առևճառքի պայմանագիրը դատարանի կողմից դիտարկվել է որպես իրական կողմի քողարկման նպատակով կնքված պայմանագիր, մինչդեռ դատարանը չի բացահայտել ո՛չ կողմին քողարկելու նպատակը, ո՛չ կողմին քողարկելու գնորդի և վաճառողի դիտավորության առկայությունը<sup>167</sup>: Ավելին, վաճառողն ինքն է նշել, որ տեղյակ չէ, թե ով է գնորդը: Մեր կարծիքով, նման փաստական հանգամանքների առկայության պայմաններում գործարքը չպետք է որակվեր որպես շինծու գործարք: Նման պայմաններում ավելի տրամաբանակալ է դառնում այն հարցը, թե մի՞ թե հոր կողմից վճարումը՝ անշարժ գույքի համար, դատարանի կատարված նվիրատվությունն չէ: Բանն այն է, որ թեև, ըստ գործի հանգամանքների, հայրն ինքն է գործարքի կնքմանն ուղղված գործողությունների մի մասը կատարել և գումարի որոշ մասը վճարել, սակայն հոր ազատ կամահայտնությունամբ գույքը գրանցվել է դատարանում, իրական գնորդին քողարկելու որևէ նպատակ դատարանի կողմից չի

<sup>166</sup>Տե՛ս թիվ ԱՐԴ 1/2281/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017թ. հոկտեմբերի 23-ի վճիռը, որը երրորդ անձ Արթուր Ղալաչյանի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

<sup>167</sup>Նույն անվան դատական գործեր կարելի է կրկին մեջբերել: Օրինակ, տե՛ս թիվ ԵԿԴ/5144/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2016թ. մայիսի 30-ի վճիռը:

բացահայտվել, և գործարքի կատարմանն ուղղված գործողություններ իրականացրել են նաև փեսան և դուստրը:

Երբեմն դատարանների կողմից գործարքի իրական կողմի քողարկման նպատակով կնքված շինծու գործարք են որակվում այնպիսի գործարքներ, որոնց վերաբերյալ քննվող գործերով ոչ միայն չի բացահայտվում վաճառողի մտադրությունը՝ քողարկելու գործարքի կողմին՝ իրական գնորդին, այլև գործի հանգամանքների համադրությունը վկայում է իրական գնորդի և պայմանագրում որպես գնորդ նշված անձի միջև այլ հարաբերությունների առկայություն մասին:

Օրինակ, հայցվոր Յերոս Դիլանջյանը, դիմելով դատարան, խնդրել է մի շարք անշարժ գույքերի առևձայն վաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառել առոչինչ (շինծու) գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ այդ գործարքների հիման վրա Վարուջան Քոլյումջյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումները ճանաչել անվավեր, իսկ այդ գործարքներով որպես գնորդ և այդ գույքերի նկատմամբ սեփականատեր ճանաչել իրեն՝ Յերոս Դիլանջյանին՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ Ավստրալիայի քաղաքացի և իր մտերիմ ընկեր հանգուցյալ Վարուջան Քոլյումջյանին հանձնարարել է իր կողմից տրամադրված գումարներով իր համար ձեռք բերել անշարժ գույքեր՝ հետագայում դրանք իր անունով վերածնակերպելու պայմանով:

Գործի քննությամբ հետազոտված ապացույցների արդյունքում դատարանը պարզել է, որ Յերոս Դիլանջյանն իր մտերիմ ընկեր հանգուցյալ Վարուջան Քոլյումջյանին հանձնարարել է իր կողմից տրամադրված գումարներով իր համար ձեռք



բերել անշարժ գույքեր հետագայում դրանք իր անունով վերածնակերպելու պայմանով: Վարուջան Քոչյումջյանի անվամբ մի շարք այլ անշարժ գույքերից բացի ձեռք են բերվել նաև վիճարկվող պայմանագրերի առարկա անշարժ գույքերը: Հիշյալ բոլոր անշարժ գույքերը որպես սեփականություն թեև գրանցվել են Վարուջան Քոչյումջյանի անվամբ, սակայն իրականում այն ձեռք է բերվել Հերոս Դիլանջյանի համար՝ նրա հանձնարարությունամբ և համաձայնությունամբ, որպիսի փաստը դատարանի կողմից հաստատվել է Հերոս Դիլանջյանի կողմից կատարված բանկային փոխանցումներով, էլեկտրոնային փոստի նամակներով:

Դատարանն արդյունքում եզրահանգել է, որ թեև ձեռք բերված անշարժ գույքերի պայմանագրերը կնքվել, և դրանց նկատմամբ սեփականության իրավունքները գրանցվել են Վարուջան Քոչյումջյանի անվամբ, սակայն գործի քննության ձեռք բերված և հետագոտված բոլոր ապացույցների հանրագումարի պարագայում ապացուցվում է, որ անշարժ գույքերը ձեռք են բերվել Հերոս Դիլանջյանի համար, նրա դրամական միջոցներով և նրա հետ համաձայնություններ ձեռք բերելուց հետո միայն<sup>168</sup>:

Կործում ենք, որ բերված օրինակում ոչ թե պետք է կիրառվեին շինծու գործարքի անվավերության հետևանքներ, այլ բավարար գրավոր ապացույցներ ներկայացնելու դեպքում կարող էր հաստատվել Հերոս Դիլանջյանի և Վարուջան Քոչյումջյանի միջև կոմիսիայի հարաբերությունների առկայության փաստը, իսկ նշված փաստը

<sup>168</sup>Տե՛ս թիվ ԿԴ/1737/02/12 քաղաքացիական գործով երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. հունվարի 30-ի վճիռը:

չ հաստատվել իսպայդ հարաբերությունները պետք է դիտարկվեին որպես վստահության վրա հիմնված հարաբերություններ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ նախ նշենք, որ անհրաժեշտ է շինծու գործարքը հստակ տարբերակել հարակից ինստիտուտներից՝ նկատի ունենալով, որ գործարքը շինծու որակելու համար անհրաժեշտ է ապացուցել նման գործարք կնքելու երկու կողմերի կամքը և նման գործարքին դիմելու նպատակի առկայությունը: Մասնավորապես՝ ներկայիս իրավակարգավորման պայմաններում եթե չի ապացուցվում շինծու գործարքով գործարքի իրական կողմին քողարկելու երկու կողմերի մտադրությունը և նման գործարքի դիմելու միջոցով որոշակի առավելություններ ստանալու, օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ շրջանցելու նպատակի առկայությունը, ապա տվյալ գործարքը չի կարող դիտարկվել շինծու գործարք, և չեն կարող կիրառվել շինծու գործարքի անվավերության հետևանքները:

Միաժամանակ գտնում ենք, որ եթե գործարքը ստորագրվել է ոչ իրական գնորդի կողմից, սակայն չի հետապնդել նպատակ՝ ստանալու որոշակի առավելություններ, շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ, ապա երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը նման գործարքով չեն կարող խախտվել, մինչդեռ կարող է ծագել գործարքի իրական կողմի իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն հարց: Կարծում ենք, որ գործարքի իրական կողմը կարող է օգտվել իրավական պաշտպանության այլ եղանակներից: Օրինակ՝ եթե գործարքի իրական կողմի հանձնարարությամբ գործարքի կողմը ձեռք է բերել որոշակի գույք և իր անունից կնքել պայմանագիր, ապա բավարարավոր

ապացույցների առկայության պայմաններում կարելի է հաստատել նշված երկու անձանց միջև կոմիսիայի հարաբերությունների առկայության փաստը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 791-րդ հոդված): Եթե նշված անձանց միջև հարաբերությունները չեն ստացել որևէ իրավական ձևակերպում, ապա դրանք պետք է դիտարկվեն որպես վստահություն վրահիմնված հարաբերություններ, որոնք տվյալ դեպքում քաղաքացիաիրավական պաշտպանությունից չեն օգտվում: Նման գործարքի հետևանքով տուժած անձը կարող է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել քրեաիրավական միջոցներով, եթե առկա լինի խարդախության հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված): Իսկ եթե, օրինակ, ինչպես վերը նշված դատական գործի փաստական հանգամանքներից էր բխում, հայրը գույքն իր միջոցներով ձեռք է բերում և իր «բարի կամքով» գրանցում դստեր անունով, ապա նշվածը կարող է դիտարկվել նվիրատվություն:

Այլ է հարցը, երբ առանց գործարքի մյուս կողմի իմացության գործարքի իրական կողմը քողարկվում է՝ իրավական բնույթի առավելություններ ստանալու, օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ չըջանցելու նպատակով: Այսինքն՝ նման դեպքում կանգնում ենք փակուղու առաջ, քան ի որ բախվում ենք այնպիսի գործարքի հետ, որում կողմը քողարկվում է հակաիրավական նպատակով, սակայն որը, ըստ գործող իրավակարգավորման, շինծու գործարք չի դիտարկվում, իսկ նման գործարքի դեմ պայքարի այլ օրենսդրական կառուցակարգ առկա չէ: Բանն այն է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հակաիրավական նպատակով կնքված գործարքի անվավերությունն անխատեսված չէ: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ՌԴ քաղաքացիական

օրենսգրքով գոնե սահմանված է իրավակարգի հիմունքներին կամ բարոյականությանը հակասող նպատակով կնքված գործարքի անվավերությունը: Նշված գործարքի անվավերության համար բավարարել միայն մեկ կողմի դիտավորությունը<sup>169</sup>:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ ենք համարում նկատել, որ երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը հավասարապես կարող են խախտվել ինչպես շինծու գործարքներով, այնպես էլ այն գործարքներով, որոնցով իրական կողմը քողարկվում է առանց մյուս կողմի իմացության՝ որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ չըջանցելու կամ իրավական առավելություններ ստանալու նպատակով: Օրինակ՝ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի նկատմամբ կնոջ համատեղ սեփականության իրավունքի ծագումը չըջանցելու նպատակով՝ ամուսինը գույքի առուվաճառքի պայմանագրով որպես գնորդ նշում է մորը:

Միաժամանակ հարկ է նկատել, որ թե իրական կողմին քողարկելու նպատակը միայն գործարքի մեկ կողմի մոտե առկա, ապա ավելի դժվար կարող է դառնալ նման գործարքի միջոցով օրենքը չըջանցելու նպատակի ապացուցումը, քան շինծու գործարքի դեպքում: Այդուհանդերձ, գտնում ենք, որ շինծու գործարք կնքելու նպատակի առկայությունը վկայող հանգամանքները նման դեպքերում ևս կարող են ուղենշային լինել կողմին քողարկելու նպատակով կնքված գործարքի հակաիրավական նպատակի առկայությունն ապացուցելիս: Օրինակ՝ այդպիսիք կարող են լինել չմարված պարտավորությունների առկայությունը, որոնք կարող են հաստատված լինել օրինական ուժի մեջ

<sup>169</sup>Տե՛ս Постановление Пленума Верховного Суда РФ от 23.06.2015 N 25 "О применении судами некоторых положений раздела I части первой Гражданского кодекса Российской Федерации", կե տ 85:

մտած դատական ակտով, գործարքում որպես կողմ նշված անձի փաստացի տիրապետության տակ գույքի չգտնվելու հանգամանքը, նման գույք ձեռք բերելու համար վերջինիս միջոցների անբավարարությունը, վերջինիս կողմից նման գույք ձեռք բերելու աննպատակահարմարությունը՝ պայմանավորված իր կողմից իրականացվող գործունեության բնույթով, տվյալ անձի մասնագիտության մեջ:

Նվաճից բացի՝ կարծում ենք, որ թեև նման գործարքներով կարող են խախտվել երրորդ անձանց, պետության և համայնքների իրավունքներն ու օրինական շահերը, սակայն նման գործարքների անվավերությունը կարող է հանգեցնել նաև գործարքի մյուս կողմի իրավունքների խախտման, ինչը չի կարող թույլատրել լի լինել, քանի որ այդ կողմը գործարքը կնքել է բարեխղճորեն՝ առանց մյուս կողմի հետապնդած նպատակի իմացության:

Օրինակ՝ եթե պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում բնակարանն իրականում ձեռք բերի այլ անձ, սակայն պայմանագիրը ստորագրվի պետական ծառայողի կողմից, որի մասին վաճառողը տեղյակ չլինի, ապա նման պայմանագրի անվավերության դեպքում վաճառողը պետք է արդեն իսկ շինարարության մեջ ներդրած գումարները վերադարձնի գնորդին, ինչը կարող է և անհնարին լինել:

Կատարված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ գործարքի մասնակից չհանդիսացող անձանց, պետության և համայնքների իրավունքներն ու օրինական շահերը կարող են խախտվել իրական կողմին քողարկելու նպատակով կնքված երկու տիպի գործարքով՝ գործարք, որում իրական կողմին

քողարկելու նպատակ հետապնդել են գործարքի երկու կողմերն էլ, և գործարք, որում իրական կողմին քողարկելու նպատակը հետապնդել է միայն գործարքի մի կողմը: Ընդ որում, նշված երկու գործարքներով էլ իրական կողմին քողարկելը պետք է հետապնդի նպատակ՝ ստանալու որոշակի իրավական առավելու թյուր ներ, շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ: Միաժամանակ հարկ է նկատել, որ ներկայումս եթե առաջին գործարքի դեպքում երրորդ անձը կարող է շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացնել, ապա երրորդ գործարքի դեպքում նման հնարավորությունն առկա օրենսդրական կարգավորման և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման ու ժողովառկա է:

Ուստի, գտնում ենք, որ եթե իրական կողմին քողարկելու նպատակով կնքվել է այնպիսի գործարք, որում նման նպատակ հետապնդել է միայն գործարքի մի կողմը, և այդ գործարքով խախտվել են երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ապա նշված սուբյեկտներին պետք է հնարավորություն ընձեռել վերականգնելու իրենց իրավունքները՝ գործարքը շինծու ճանաչելու և շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացնելու իրավունք նախատեսելով: Սակայն հարկ է նկատել, որ այդ դեպքում գործարքի քարտեխիղճ կողմի համար ևս պետք է առկա լինի իրավունքի պաշտպանության հնարավորություն: Մասնավորապես՝ վերջինս պետք է հնարավորություն ունենա գործարքի մյուս կողմից պահանջելու անվավերության հետևանքների կիրառման հետևանքով պատճառված վնասի հատուցում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք 1.2-րդ պարագրաֆում առաջարկված

Խմբագրուած յամբ 33 քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ իրավադրույթով նոր պարբերուած յամբ`

«Շինծու է նաև այն գործարքը, որը գործարքի մեկ կողմում հանդես եկող մասնակիցների դիտավորուած յամբ կնքվում է գործարքի իրական կողմին քողարկելու նպատակով, և որի միջոցով` այդ կողմը նպատակ է հետապնդում խուսափելու որոշակի իրավական հետևանքներից կամ շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ կամ ստանալու որոշակի առավելուած յոլուններ: Նշված շինծու գործարքի բարեխիղճ կողմն իրավունք ունի մյուս կողմից պահանջելու անվավերուած յան հետևանքների կիրառման արդյունքում պատճառված վնասի հատուցում»:

**Գ Լ Ո Ւ Խ 3. Կ Ե Ղ Ճ Ե Վ Շ Ի Ն Ճ Ո Ւ Գ Ո Ր Ճ Ա Ր Ք Ն Ե Ր Ի  
Ա Ն Վ Ա Վ Ե Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Յ Ե Տ Ե Վ Ա Ն Ք Ն Ե Ր Ի Կ Ի Ր Ա Ռ Ո Ւ Մ Ը**

**§ 3.1. Ի ր ա վ ա կ ա ն շ ա հ ը ` ո ր պ ե ս կ ե ղ ծ և շ ի ն ծ ո ւ  
գ ո ր ծ ար ք ն ե ր ն ա ն վ ա վ ե ր ճ ա ն ա չ ե լ ո ւ և  
ա ն վ ա վ ե ր ո ւ թ յ ա ն հ ե տ ն ա ն ք ն ե ր կ ի ր ա ռ ե լ ո ւ պ ա հ ա ն ջ  
ն ե ր կ ա յ ա ց ն ե լ ո ւ ա ն հ ր ա ժ ե շ տ պ ա յ մ ա ն**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով որպես կեղծ և շինծու գործարքների անվավեր ու թյան հետևանքների կիրառման պահանջ ներկայացնելու իրավունքի իրացման և այդ պահանջի բավարարում ստանալու նախապայման սահմանված է շահագրգիռ անձ լինելը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մաս): Համամիտ լինելով ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմանն առայն, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյոք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն<sup>170</sup>, կարծում ենք, որ դատական պրակտիկայի ու տեսական գրականության համադրված ուսումնասիրության արդյունքում հնարավոր կլինի վերհանել, ինչու ոչ, նաև մշակել կեղծ և շինծու գործարքներն անվավեր ճանաչելու և անվավեր ու թյան հետևանքներ կիրառելու մեջ անձի շահագրգռվածության առկայությունը բացահայտելու ուղենշային չափանիշներ, որոնք կունենան պրակտիկ նշանակություն և՛ գործող իրավակարգավորման պայմաններում, և՛ մերկողմից

<sup>170</sup>Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. ապրիլի 4-ի թիվ ՍԴՈ-747 որոշումը:



ս ու յ ն ա շ խատանքի 1-ին գլխի 1.4-րդ պարագրաֆում առաջարկվող փոփոխությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրելու դեպքում: Միաժամանակ նկատի ունենալով, որ ս ու յ ն պարագրաֆում կատարված վերլուծությունները հիմնականում ուղղված են պրակտիկ խնդիրներին բացահայտմանն ու լուծմանը, նպատակահարմար ենք գտնում այդ խնդիրներն առավել ապես քննարկել կեղծ և շինծու գործարքների անվավերության գործող կառուցակարգին համապատասխան:

Նախկցական այն քտերմինաբանական ճշգրտման նպատակով անդրադառնալ «իրավական շահ» և «իրավական շահագրգռվածություն» կատեգորիաների հարաբերակցությունը և պարզել, թե նշվածներից որն է համադրելի գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու մեջ շահագրգռն անձ հասկացություն հետ:

ՀՀ սահմանադրական դատարանն ու ՀՀ վճռաբեկ դատարանն իրենց համապատասխան որոշումներում շահագրգռն անձ հասկացությունը համադրում են իրավական շահագրգռվածության հետ<sup>171</sup>: Իսկ գրականությունը մեջ իրավական շահի և իրավական շահագրգռվածության հարաբերակցության վերաբերյալ կարծիքները միանշանակ չեն:

Օրինակ՝ Մ. Ա. Վիկուտը տարբերակում է շահ ու շահագրգռվածություն և համարում, որ հենց իրավաբանական շահագրգռվածությունն է համարվում հայց հարուցելու իրավունքի ընդհանուր նախապայմաններից մեկը: Վերջինիս կարծիքով, շահագրգռվածությունն օրենքի վրա

<sup>171</sup>Տե՛ս, օրինակ, թիվ ԵԱԲԴ/1494/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հոկտեմբերի 14-ի, թիվ ՎԴ/0823/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. ապրիլի 22-ի որոշումները, ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. ապրիլի 4-ի թիվ ՍԴՈ-747 որոշումը:

հիմնված որոշակի իրավական արդյունքի ակնկալիքն է դատավարությունը<sup>172</sup>: Յայտնի գիտնական-դատավարագետ Վ. Մ. Գորդոնն իրավաբանական շահը հասկանում է որպես նյութական օգուտ, որը հայցվորին բերում է դատական որոշումը: Իրավաբանական շահը, վերջինիս կարծիքով, օբյեկտիվ վիճակ է, որը հաստատվում է հայցի առիթի փաստերով (անկախ պաշտպանությունն դիմած անձի կողմից իր մոտ շահի առկայությունը գիտակցելուց)<sup>173</sup>: Իսկ Ռ. Ե. Ղուկասյանը իրավաբանական շահը սահմանում է կարիքի միջոցով, իր բովանդակությամբ այն համարում է միասնական և նույնացնում շահագրգռվածության հետ՝ դիտարկելով որպես դատարան դիմելու իրավունքի ինքնուրույն նախապայման: Նրա կարծիքով, իրավաբանական շահը դատավարության նկատմամբ շահն է, այսինքն՝ դատավարական շահը □շահագրգռվածությունը □<sup>174</sup>:

Տ.Վ.Սախնովայի մոտեցումն այս հարցին առավել հստակ է: Նա գտնում է, որ անհրաժեշտ է տարբերակել «իրավաբանական շահ» և «իրավաբանական շահագրգռվածություն» կատեգորիաները՝ նշելով, որ դրանք հոմանիշներ չեն: Դատարան դիմելու իրավունքն իրացնելով՝ սուբյեկտը դրսևորում է իր շահագրգռվածությունը, որը բավարարել վարույթ հարուցելու համար<sup>175</sup>: Յեղիևակի կարծիքով, իրավաբանական շահը գոյություն ունի օբյեկտիվորեն, □...□: Ծահագրգռվածությունն իրավաբանական շահի առկայության գիտակցումն է,

<sup>172</sup>Տե՛ս **Викут М. А., Зайцев И. М.** "Гражданский процесс: Курс лекций" - Саратов, 1998, էջ 182:  
<sup>173</sup>Տե՛ս **Гордон В. М.** "Иски о признании" - Ярославль: Типография Губернского Правления, Глава IV, 1906, էջեր 199-203, 216, 243... (հասանելի է <http://www.bibliard.ru/vcd-676-1-157/goodsinfo.html> հղումով 22.12.2018թ. դրությամբ): **Сахнова Т. В.** "Курс гражданского процесса: теоретические начала и основные институты". - М: Волтерс Клувер, 2008, էջ 319:  
<sup>174</sup>Տե՛ս **Гукасян Р. Е.** "Проблема интереса в советском гражданском процессуальном праве". Саратов, Приволжское книжное издательство, 1970, էջեր 39-51և այլն:  
<sup>175</sup>Տե՛ս **Сахнова Т. В.** "Курс гражданского процесса" / Т.В. Сахнова-2-е изд., перераб. и доп. - М.: Статут, 2014, էջեր 364-365:

և հետևաբար այն իր էությունամբ սուբյեկտիվ կատեգորիա է: Նման գիտակցումը կարող է լինել ինչպես ադեկվատ, գոյություն ունեցող շահն իրականում արտահայտող, այնպես էլ ոչ ադեկվատ, սակայն ցանկացած դեպքում այն հնարավոր է ստուգել միայն դատավարության ընթացքում, սակայն ոչ գործի հարուցման փուլում <sup>176</sup>:

Համամիտ լինելով այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, որ իրավական շահագրգռվածությունն ու իրավական շահը նույնական հասկացություններ չեն, հավելենք, որ կեղծ կամ շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառման պահանջով դատարան դիմած սուբյեկտը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին <sup>177</sup> համապատասխան իրացնելով իր դատական պաշտպանության իրավունքը, դրսևորում է իրավական շահագրգռվածություն: Ինչպես իրավացիորեն ընդգծում է ՀՀ վճռաբեկ դատարանը. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային իրավահարաբերություններից ծագած վեճերից բխող գործերի դեպքում դատարան կարող է դիմել միայն իրավական շահագրգռվածություն ունեցող անձը («շահագրգռի անձը»): Այսինքն՝ թե՛ ընդհանուր իրավասության, թե՛ վարչական դատարանին ընդդատյա գործերի հարուցման համար անհրաժեշտ է հայցվորի (դիմողի) մոտ համապատասխան հայցապահանջով դատարան դիմելու որոշակի իրավական շահագրգռվածության առկայություն՝ որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման կարևորագույն պայման, որը դրսևորվում

<sup>176</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 371:  
<sup>177</sup>ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ընդունված է 09.02.2018թ., ուժի մեջ է 09.04.2018թ., ՀՕ-110-Ն, ՀՀ ՊՏ 2018.03.05/16(1374):

Ե անձի՝ առերևույթ խախտված իրավունքների վերականգնման կամ այդպիսի խախտման վտանգը կանխելու անհրաժեշտությամբ»<sup>178</sup>:

Միաժամանակ նկատենք, որ կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառման պահանջի բավարարում ստանալու իրավունք, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, վերապահվում է այն անձին, ով նման հետևանքների կիրառման մեջ ունի իրավական շահ, որն օբյեկտիվ կատեգորիա է, և որի առկայության պարզումը պահանջում է մի շարք հանգամանքների ապացուցում: Այսինքն՝ շահագրգիռ անձը կեղծ կամ շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառման պահանջներ կայացնելիս արտահայտում է իր իրավական շահագրգռվածությունը, սակայն այդ անձի պահանջը բավարարվում է, երբ իրավական շահագրգռվածության օբյեկտիվ բնույթը հաստատվում է, այսինքն՝ ապացուցվում է հայցվորի մոտ իրավական շահի առկայությունը:

Նշվածը հիմք ընդունելով՝ կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված շահագրգիռ անձ հասկացությունը կապվում է ոչ թե *իրավական շահագրգռվածության*, այլ *իրավական շահի հետ*՝ լինելով գործարքի անվավերության հետևանքների կիրառման նախապայման: Ընդ որում, հարկ է նկատել, որ իրավական շահն այս դեպքում նույնանում է նյութաիրավական շահի<sup>179</sup> հետ:

<sup>178</sup>Տե՛ս թիվ ՎԴ/0823/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. ապրիլի 22-ի որոշումը:

<sup>179</sup>Տե՛ս **Синенко В. С.** "Понятие и виды юридической заинтересованности в исходе дела". НИУ БелГУ// Научные ведомости БелГУ. Сер. Философия. Социология. Право. 2011- №20(115), вып. 18, էջեր 196-200 □ հասանելի է <https://elibrary.ru/contents.asp?issueid=1126351>, <https://cyberleninka.ru/article/v/ponyatie-i-vidy-yuridicheskoy-zainteresovannosti-v-ishode-dela> հղումներով 22.12.2018թ. դրությամբ □: **Шкварок А. В.** "Понятие юридического интереса в современном гражданском процессе" /А. В. Шкварок. // Арбитражный и гражданский процесс - науч.- практ. и информ. изд.- М.: Юрист, 2010 - № 6, էջեր 2-7:

Անձը համարվում է գործում նյութական շահ  
 ունեցող, եթե նա պահանջում է իր սուբյեկտիվ  
 իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի  
 պաշտպանություն, և իր կողմից ներկայացված  
 հայցը (կամ առարկությունը) նման պաշտպանության  
 միջոց է ծանայում<sup>180</sup>: Նյութաիրավական շահն  
 ընդունված է դիտարկել որպես հայցի բավարարման  
 իրավունքի անհրաժեշտ նախադրյալ ներիցմեկը: Այդ  
 պատճառով, եթե դատավարության ընթացքում  
 կհաստատվի, որ հայցվորի իրավունքները կամ  
 օրենքով պահպանվող շահերը պաշտպանության  
 կարիք չունեն, այսինքն՝ բացակայում է նրա  
 նյութական շահը, դա կլինի հայցի մերժման հիմք  
 (բայց ոչ գործի ընթացքը դադարեցնելու հիմք)<sup>181</sup>:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կեղծ  
 և շինծու գործարքների անվավերության  
 հետևանքների կիրառման պահանջի բավարարում  
 ստանալու իրավունք վերապահված է նման  
 հետևանքների կիրառման մեջ նյութաիրավական շահ  
 ունեցող սուբյեկտին: Ուստի, կեղծ և շինծու  
 գործարքների անվավերության հետևանքների  
 կիրառման պահանջ ներկայացրած հայցվորը նախ  
 պետք է լեգիտիմացի իրեն<sup>182</sup>: Այսինքն, կեղծ և  
 շինծու գործարքների անվավերության  
 հետևանքների կիրառման պահանջով դատարան  
 դիմելու հանգամանքն ինքնին չի վկայում

<sup>180</sup>Տե՛ս, օրինակ, **Волков А. В.** "Принцип недопустимости злоупотребления гражданскими правами в законодательстве и судебной практике" (анализ более 250 судебных дел о злоупотреблении правом) / М.: Волтерс Клувер, 2011, էջ 339:

<sup>181</sup>Տե՛ս **Тузов Д. О.** "Вопросы активной исковой легитимации и инициативы суда при признании сделки ничтожной в проекте изменений гражданского кодекса россии", Вестник Томского государственного университета, Томск, № 350/2011, էջ 138: **Тузов Д. О.** "Иски, связанные с недействительностью сделок. Теоретический очерк". Томск: Пеленг, 1998, էջեր 16, 27: **Осокина Г. А.** "Проблемы иска и права на иск". Томск, 1989, էջեր 169, 191: **Осокина Г. А.** "Право на защиту в исковом судопроизводстве (право на иск)". Томск, 1990, էջեր 107, 150:

<sup>182</sup>Ինչպես սահմանվում է, լեգիտիմացիան (օրինակ անցումը) նպատակ  
 ունի ապահովել վեճի մասնակիցների սուբյեկտիվ կազմի  
 հստակ որոշումը, վեճի ճիշտ իրավաբանական որակումը:  
 Լեգիտիմացիան ապահովում է իրականում նյութապես  
 շահագրգիռ անձանց վերաբերյալ որոշման կայացումը □տե՛ս  
**Алексий П. В., Амаглобели Н. Д. (ред.)** "Гражданское процессуальное право России", Учебник для вузов /П. В. Алексий, Н. Д. Эриашвили, В. Н. Галузо и др.; под ред. проф. П.В. Алексия, проф. Н.Д. Амаглобели. - М.: ЮНИТИ-ДАНА, 2005, էջ 58□:

իրավական շահի առկայություն մասին: Գործարքի անվավերություն հետևանքների կիրառման մեջ իրավական շահի առկայությունն ապացուցման ենթակա փաստ է: Ընդ որում, գործարքի անվավերություն պահանջ ներկայացրած անձի մոտ իրավական շահի բացակայության բացահայտումը բավարար իրավական հիմք է հայցը մերժելու համար, որի արդյունքում դատարանի կողմից գործարքի անվավերություն հիմքի առկայության և դրա անվավերություն հետևանքների կիրառման հարցերին անդրադառնալու անհրաժեշտությունը վերանում է:

Այստեղ կարևորություն է ստանում այն հիմնահարցը, թե ինչ փաստերի ամբողջությունն է հնարավորություն տալիս հայցվորին լեգիտիմացելու իրեն: Արդյո՞ք անվավերության հետևանքների կիրառման մեջ իրավական շահի առկայության պարտադիր պայման է կեղծ կամ շինծու գործարքի կնքման հետևանքով տվյալ անձի իրավունքների կամ օրինական շահերի խախտման փաստը կամ տվյալ գործարքի անվավերության հետևանքների կիրառման արդյունքում տվյալ անձի իրավունքների կամ օրինական շահերի անմիջականորեն վերականգման հնարավորությունը:

Օրինակ՝ Գարեգին Անանյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետև՝ Դատարան) ընդդեմ Կարեն Բեգլարյանի, Սերյոժա Դալլաքյանի՝ շինություն առուվաճառքի պայմանագիրը որպես շինծու գործարք անվավեր ճանաչելու, որպես գործարքի անվավերություն հետևանք իրավունքի պետական գրանցումը անվավեր ճանաչելու, Կարեն Բեգլարյանի սեփականության իրավունքը

վերականգնելու պահանջները մասին: Դատարանի կողմից հայցը մերժվել է: Դատարանը, անդրադառնալով հայցվորի շահագրգիռ անձ հանդիսանալուն, մասնավորապես նշել է. «□...□ Այլ անձանց դեպքում դատարանի գնահատմամբ գործարքի անվավերություն հետևանքներ կիրառելու շահագրգռվածություն չափանիշը տվյալ գործարքի հետ որոշակի իրավաբանական կապն է, այդ գործարքով անձի իրավունքների խախտումը, գործարքի անվավերության հետևանքներ կիրառելիս անձի խախտված իրավունքի վերականգնումը կամ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու արդյունքում անձի համար իրավունքների ծագումը: □...□ Դատարանը գտնում է, որ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի իրավունքը պատկանում է այնպիսի անձի, ում իրավունքները և օրենքով պահպանվող շահերն անմիջականորեն խախտվել են գործարքի հետևանքով, ում համար գործարքի անվավերության հետևանքների կիրառումն անմիջականորեն առաջացնում է իրավահարաբերություն գործարքի կողմերի, այլ անձանց կամ վեճի առարկայի հետ կապված: Յետևաբար այն դեպքերում, երբ գործարքի անվավերության հետևանքների կիրառմանը պետք է հաջորդեն որոշակի իրավաբանական գործողություններ այդ անձի մոտևոր իրավահարաբերություններ ծագելու համար կամ առոչինչ գործարքի կնքումն ուղղված չի եղել այդ անձի իրավունքների խախտմանը, այդ դեպքում առկա է շահագրգռվածություն գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու հարցում: □...□»<sup>183</sup>:

<sup>183</sup>Տե՛ս թիվ ԵԱԴԴ/1118/02/14 քաղաքացիական գործով երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2017թ. սեպտեմբերի 13-ի վճիռը:

Կարծում ենք, որ իրավական շահի շրջանակները որոշելու համար նախպեսք է պարզել, թե որն է կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառման պահանջը ցանկացած շահագրգիռ անձին վերապահելու նպատակը:

Մեր կարծիքով, կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառման պահանջներ կայացնելու իրավունքն օրենսդրի կողմից վերապահվել է ցանկացած շահագրգիռ անձի՝ ելնելով այն հանգամանքից, որ նման գործարքների կնքումը և դրանց գոյությունը կարող են խախտել բավականին լայն շրջանակի անձանց շահեր՝ ընդհուպ մինչև գործարքի մասնակից չհանդիսացող սուբյեկտների համար առաջացնելով իրավական անորոշություն, իսկ շահագրգիռ անձանց շրջանակը նշված պատճառով հստակ կանխորոշել հնարավոր է: Նշվածն առավել ևս հիմնավորվում է այն հանգամանքով, որ կեղծ և շինծու գործարքները կնքվում են երրորդ անձանցից իրականությունը քողարկելու նպատակով, որպես կանոն, առաջացնելով հենց վերջիններիս իրավունքների պաշտպանության անհրաժեշտություն:

Միաժամանակ, կարծում ենք, որ իրավական շահը հանդես է գալիս որպես դատական պաշտպանության պայման և սահման, այսինքն՝ նյութաիրավական շահի չափանիշի նախատեսումը նպատակ է հետապնդում կրճատելու դատարանների ծանրաբեռնվածությունը չհիմնավորված հայցերից և կանխելու դատական պաշտպանության իրավունքի չարաշահումը:

Յիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների կիրառման մեջ շահագրգիռ անձանց շրջանակը նեղացնել կարելի է միայն՝ վերոգրյալ



իրավաչափ նպատակներին պահպանման  
անհրաժեշտությունն ինքնուրույն:

Անդրադառնալով անվավերությունների կիրառման մեջ իրավական շահի առկայությունն այդ գործարքով անձի իրավունքների խախտման հանգամանքի կամ անվավերությունների կիրառման արդյունքում իրավունքներն անմիջականորեն վերականգնելու հնարավորությունների կապակցում մոտեցմանը՝ նախնշենք, որ գրականություն մեջ արտահայտված կարծիքները հիմնականում վկայում են գործարքի անվավերությունների կիրառման մեջ իրավական շահի բովանդակության լայն մեկնաբանման մասին: Այսպես՝ Մ.Ա.Վիկյուտը գտնում է, որ իրավաբանական շահի նյութաիրավական նշանակությունն այն է, որ դատական որոշումը կողմին կարող է տալ դրական իրավական արդյունք<sup>184</sup>: Դ. Օ. Տուզովը գտնում է, որ գործարքն առնչինչ ճանաչելու մեջ նյութաիրավական շահ ունեցող սուբյեկտ պետք է համարել ցանկացած անձի, ում իրավական դրություն մեջ տվյալ գործարքն առաջացրել է հայտնի անորոշություն, և ում շահն է այդ անորոշության վերացումը: Այլ բաներով, դա այն անձն է, ում իրավական դրությունը կենթարկվեր այս կամ այն փոփոխության, եթե գործարքն իրականում վավեր լիներ: Նման անձանց շարքին առաջին հերթին դասվում են հենց առնչինչ գործարքի կողմերը: Սակայն շահագրգիռ պետք է համարել նաև այն անձանց, ում իրավական դրությունը կարող էր փոփոխվել, եթե գործարքը չլիներ առնչինչ, և ում համար տվյալ գործարքի արդեն իսկ կեղծ գոյությունը, որն այլ անձանց, այդ թվում՝ պետական մարմինների մոտ ձևավորել է այդ

<sup>184</sup>Տե՛ս Викиут М. А. "Стороны-основные лица искового производства"/Саратов: Изд-во Сарат. ун-та, 1968 (հասանելի է [http://library.nlu.edu.ua/POLN\\_TEXT/KNIGI/VIKUT.htm](http://library.nlu.edu.ua/POLN_TEXT/KNIGI/VIKUT.htm) հղումով 22.12.2018թ. դրությամբ):

գործարքի վավերականության, իրական լինելու համոզմունք, կարող է առաջացնել իրավական բնույթի դժվարություններ<sup>185</sup>: Կ. Ի. Սկլովսկին նշում է, որ հայցվորը պետք է ապացուցի ոչ թե այն, որ վիճարկվող գործարքով անցյալում խախտվել է իր իրավունքը կամ շահը, այլ այն, որ գործարքի անվավերության հետևանքների կիրառումը կազմում է իր շահը կամ պաշտպանում է իր իրավունքը դատարան դիմելու պահին<sup>186</sup>: Ս. Վ. Պոտապենկոն և Ա. Վ. Չարոբինը գտնում են, որ գործարքի վիճարկման մեջ անձի նյութական շահագրգռվածության հաստատման հարցերում ճիշտ են այն դատարանները, որոնք կանգնած են շահի պայմանական բնույթի դիրքերում, այսինքն՝ ճանաչում են առնչինչ գործարքի անվավեր ճանաչման և անվավերության հետևանքներ կիրառելու այն սուբյեկտների պահանջի իրավունքը, որոնց իրավական դրությունը կարող է շոշափվել գործարքի անվավերության հետևանքներ կիրառելով, սակայն իրենց գույքային դրությունն ուղղակիորեն փոփոխությունների չի ենթարկվում<sup>187</sup>: Ա. Յոլ. Բեժեցկին գտնում է, որ առնչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մեջ անձի շահագրգռվածությունը կարող է արտահայտվել իր իրավունքների և օրինական շահերի գործարքով ուղղակի կամ ածանցյալ խախտմամբ: Ընդ որում, անձը գործարքի անվավեր ճանաչման մեջ շահագրգռվածություն ունի այն դեպքում, եթե անվավերության իրավական հետևանքները կշոշափեն իր իրավունքներն ու

<sup>185</sup>Տե՛ս **Тузов Д. О.** "Вопросы активной исковой легитимации и инициативы суда при признании сделки ничтожной в проекте изменений гражданского кодекса россии", Вестник Томского государственного университета, Томск, № 350/2011, էջ 139:

<sup>186</sup>Տե՛ս **Скловский К. И.** "Собственность в гражданском праве". 5-е изд. перераб. М Статут, 2010, էջ 460:

<sup>187</sup>Տե՛ս **Потапенко С. В., Зарубин А. В.** "Субъект требования о признании недействительной ничтожной сделки и применения последствий ее недействительности" // Российская юстиция. Издательская группа Юрист, Москва - № 10, 2009 (հասնելի է [http://obsud.vol.sudrf.ru/modules.php?name=press\\_dep&op=1&did=162](http://obsud.vol.sudrf.ru/modules.php?name=press_dep&op=1&did=162) հղումով 22.12.2018թ. դրությամբ):

օրինական շահերը<sup>188</sup>: Այսինքն՝ նշված հեղինակները գործարքի անվավերության հետևանքների կիրառման մեջ իրավական շահը չեն կապում գործարքով տվյալ անձի իրավունքների խախտման հետ:

Նկատենք, որ գրականության մեջ հանդիպում է նաև հակառակ մոտեցումը: Մասնավորապես՝ Ի. Ռ. Մեդվեդևի կարծիքով՝ շահագրգիռ անձ ասելով՝ պետք է հասկանալ այն անձին, ով տվյալ գործում ունի իրավական նշանակություն ունեցող շահ: Իրավաբանական նման շահագրգռվածություն կարող են ունենալ գործարքի մասնակիցները կամ այն անձինք, որոնց իրավունքներն ու օրինական շահերն ուղղակիորեն խախտվել են վիճարկվող գործարքով<sup>189</sup>:

Չամամիտլինելով առաջին խումբ հեղինակների մոտեցման հետ՝ կարծում ենք, որ կեղծ կամ շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման մեջ իրավական շահի առկայությունը չպետք է պայմանավորել այդ գործարքով անձի իրավունքների խախտման հետ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենսդրի կողմից նման պահանջի իրավունք ունեցող անձնանվանվել է «շահագրգիռ անձ» և ոչ թե «տուժող»: Այստեղ կարևորություն է ստանում անվավերության հետևանքների կիրառման մեջ որոշակի շահի առկայությունը, որը պետք է ունենա իրավական բնույթ, և որպիսին, կարծում ենք, պետք է համարել անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Միաժամանակ, կարծում ենք, որ իրավական շահը չպետք է սահմանափակել նաև անվավերության հետևանքների կիրառմամբ անձի իրավունքներն ու

<sup>188</sup>Տե՛ս **Бежецкий А. Ю.**, նշված ատենախոս., էջ 130:

<sup>189</sup>Տե՛ս **Медведев И. Р.** "Применение Гражданского процессуального кодекса РФ (Сборник). Т. II: Доказательства и доказывание в практике Верховного Суда РФ". М.: Волтерс Клувер, 2010, էջ 287:

օրինական շահերն անմիջականորեն վերականգնելու հնարավորության հետ: Մեր կարծիքով, կեղծ կամ շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման մեջ իրավական շահ ունեցող սուբյեկտ պետք է համարել ոչ միայն այն անձին, ում իրավունքներն անմիջականորեն են վերականգնվում, այլ նաև այն անձին, ում համար անվավերության հետևանքների կիրառման արդյունքում առաջանում են բավարար իրավական նախադրյալներ՝ վերականգնելու իր իրավունքներն ու օրինական շահերը: Նշված դեպքում անհրաժեշտ է իրավաբանական այնպիսի փաստերի ամբողջություն, որոնք իրենց համակցությամբ կարող են բավարար և իրատեսական լինել՝ նպաստելու անձի խախտված իրավունքների կամ օրինական շահերի վերականգնմանը (օրինակ՝ գործարքի առարկա գույքի նկատմամբ որպես անվավերության հետևանք դատական կարգով պարտապանի սեփականության իրավունքը վերականգնելու և ց հետո պարտատիրոջ կողմից այդ գույքի վրա բռնագանձում տարածելը): Ծահագրգիռ անձ պետք է համարել նաև այն անձին, ում համար կայացված դատական ակտով վերանում է իրավական անորոշությունը, որը ծագել էր այդ գործարքների գոյություն հետևանքով:

Յիշարժան է ՌԴ սահմանադրական դատարանի դիրքորոշումն առ այն, որ «գործարքն առնչինչ ճանաչելու մեջ նյութաիրավական շահ ունեցող սուբյեկտ է համարվում այն անձը, ում իրավական ոլորտում տվյալ գործարքն առաջացնում է անորոշություն և ում իրավական դրույթի վրա այն կարող է ազդել»<sup>190</sup>: Յամանման կարծիք է արտահայտվել նաև ՌԴ Յյուսիս-կովկասյան շրջանի արքիտրաժային դատարանի կողմից. «Գործարքն առնչինչ ճանաչելու

<sup>190</sup>Տե՛ս Определение Конституционного Суда РФ от 15.04.2008 № 289-0-0:

մեջ նյութաիրավական շահ ունեցող սուբյեկտպետք է համարել ցանկացած անձի, ում իրավական ունորոտում տվյալ գործարքը առաջացնում է հայտնի անորոշույթյուն, և որի շահն է համարվում այդ անորոշույթյան վերացումը: Այլ խոսքերով դա այն անձն է, ում իրավական դրույթյունը կենթարկվեր այս կամ այն փոփոխույթյան, եթե գործարքն իրականում վավեր լիներ: Այդ անձանց են առաջին հերթին պատկանում առնչինչ գործարքի կողմերը: Մինչդեռ այդպիսին պետք է ճանաչել նաև այլ անձանց, որոնց իրավունքները կարող են խախտվել ինչպես գործարքի կատարմամբ, այնպես էլ վերջինիս կեղծ գոյույթյան հետևանքով»<sup>191</sup>:

Միաժամանակ, կարծում ենք, որ գործարքի անվավերույթյան հետևանքների կիրառման մեջ իրավական շահի բովանդակույթյունը, այնուամենայնիվ, պետք է ենթարկվի որոշակի սահմափակումների: Ընդ որում, ինչպես արդեն նշել էինք, այդ սահմանափակումների ուղենիշ պետք է լինեն շահագրգիռ անձ հասկացույթյունը նախատեսելու օրենսդրի հետապնդած իրավաչափ նպատակները: Այսինքն՝ իրավական շահի առկայույթյունը պետք է բացառել անհիմն հայցերի և իրավունքի չարաշահման դեպքերում: Թերևս, ՀՀ վճռաբեկ դատարանն իրավունքի չարաշահման արգելքի միտումից ելնելով է, որ իր որոշմամբ, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարույթյան օրենսգրքի 2-րդ հոդվածներով սահմանված դրույթները, գտել է, որ դատարան դիմելով՝ հայցվորը պետք է հիմնավորի, իսկ դատարանը՝ պարզի, թե ներկայացված հայցի նպատակը արդյոք իրավունքների և օրինական շահերի պաշտպանույթյունն ու վերականգնումն է, և

<sup>191</sup>Տե՛ս Постановление ФАС Северо-Кавказского округа от 31.05.2006 № Ф08-2302/2006 по делу № А63-122/2005, էջ 1:

հնարավոր է արդյոք ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել հայցվորի իրավունքները (կամ, համապատասխան դեպքերում, նրան պատճառված վնասը փոխհատուցել)<sup>192</sup>:

Այսպիսով, կեղծ և շինծու գործարքներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մեջ իրավական շահունեցող սուբյեկտ պետք է համարել ցանկացած անձի, ում համար անվավերության հետևանքների կիրառումը կարող է տալ որոշակի, օրինական, դրական և էական իրավական արդյունք: Ընդ որում, նման իրավական արդյունք պետք է դիտարկել ոչ միայն իրավունքների և օրինական շահերի անմիջականորեն վերականգնումը, այլ նաև բավարար իրավական նախադրյալների ստեղծումը, որոնք հնարավորություն կտան վերականգնելու դրանք, ինչպես նաև նման գործարքների առերևույթ գոյության հետևանքով առաջացած իրավական անորոշության վերացումը: Հարկ է նկատել, որ շահագրգիռ անձը պարտավոր է ապացուցել հենց տվյալ գործարքի կնքման հետևանքով իր իրավունքների ու օրինական շահերի խախտման փաստը, բավարար է ապացուցել միայն, որ գործարքն անվավեր ճանաչելն և անվավերության հետևանքներ կիրառելը կազմում է իր իրավական շահը: Միաժամանակ դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով կարող է հաստատել հայցվորի մոտ իրավական շահի բացակայությունը վերջինիս կողմից իրավունքի չարաշահման միտումների առկայության դեպքում: Նման մոտեցումը հնարավորություն կտա նախևառաջ պաշտպանելու

---

<sup>192</sup>Տե՛ս թիվ ԵԱԲ 7/1494/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հոկտեմբերի 14-ի, թիվ ԵԱԲ 7/1299/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. մայիսի 8-ի որոշումները:

պատասխանողի շահերը, որպեսզի վերջինս անհիմն հայցերից պաշտպանվելու պարտականություն չկրի:

Այսպիսով, կեղծ և շինծու գործարքներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մեջ իրավական շահը կարող էլինելու ղղակի, որն արտահայտվում է շահագրգիռ անձի իրավունքների և օրինական շահերի անմիջականորեն վերականգնմամբ կամ իրավական անորոշության վերացմամբ, այնպես էլ անուղղակի, այն է՝ նման հետևանքների կիրառման արդյունքում ծագում են իրավունքների և օրինական շահերի վերականգման համար բավարար իրավական նախադրյալներ:

**§3.2. Կեղծ և շինծոՒ գործարքներն անվավեր  
ճանաչելու և անվավերություն հետևանքներ  
կիրառելու պահանջներ կայացնելու կողմերի  
իրավունքի սահմանափակման հիմնահարցը**

ՀՀ օրենսդրությամբ և ձևավորված դատական պրակտիկային համապատասխան՝ կեղծ և շինծոՒ գործարքների անվավերության հետևանքների կիրառման մեջ շահագրգիռ անձինք են համարվում գործարքի կողմերը և երրորդ անձինք, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ որպես հանրային շահերի պաշտպանություն իրականացնող սուբյեկտներ: Գործարքի մասնակից չհանդիսացող անձանց և պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին նման իրավունքի վերապահումն ակնհայտորեն արդարացված է և լրացուցիչ քննարկման կարիք, կարծում ենք, չունի:

Իսկ ե՞րբ է կեղծ կամ շինծոՒ գործարք կնքած կողմը, որպես շահագրգիռ անձ, դիմում դատարան անվավերություն հետևանքներ կիրառելու պահանջով: Կեղծ կամ շինծոՒ գործարքի կողմը սովորաբար նման պահանջ է ներկայացնում, երբ գործարքի մյուս կողմը չարաշահում է վստահությունը՝ շահարկելով գործարքի օրինական լինելու հանգամանքը, կամ երբ գործարքի մասնակից չհանդիսացող սուբյեկտները ներկայացնում են այնպիսի պահանջ, որի հիմքում ընկած է կեղծ կամ շինծոՒ գործարքը (օրինակ, երբ հավակնություն են ցուցաբերում գործարքով փոխանցված գույքի նկատմամբ), կամ երբ արդեն իսկ գործարքով նախանշված նպատակներն իրագործվել են: Ներկայումս նկատվում է նաև հակառակ միտումը. կողմը (կողմերը) իրականում վավեր գործարքը փորձում է դատական կարգով դարձնել



կեղծ կամ շինծու՝ երրորդ անձանց հավակնություններին գույքը «փախցնելու» կամ հենց գործարքի կողմին գույքից զրկելու նպատակով: Այդ նպատակով ստեղծվում են ֆիկտիվ ապացույցներ, այդ թվում՝ քրեական գործի շրջանակներում ենթադրյալ խարդախության կամ վաշխառության վերաբերյալ տրված ցուցմունքներով:

Նշվածով պայմանավորված՝ առաջանում են որոշ հարցեր.

- որքանո՞վ է բարեխղճությանը և քաղաքացիական իրավունքների չարաշահման արգելքի սկզբունքին համապատասխանում գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներ կայացնելու իրավունք վերապահելը կեղծ և շինծու գործարքների կողմերին, այն է՝ անձանց, ովքեր փոխադարձ համաձայնությամբ և դիտավորություններ դիմում են նման միջոցների՝ հիմնականում հակաիրավական գործողություններ կատարելով կամ դեռևս գործողության չվերածված հակաիրավական նպատակներ հետապնդելով.

- արդյո՞ք կողմերին իրենց իսկ կամքով կնքված կեղծ կամ շինծու գործարքից դատական պաշտպանության իրավունք ընձեռելը՝ առանց որևէ վերապահման, չի խթանում նման գործարքների կնքումը՝ հանգեցնելով այլ անձանց իրավունքների ոտնահարման և քաղաքացիական շրջանառության կայունության խախտման: Այլ կերպ՝ «Երբ անհրաժեշտ է, կնքում ենք կեղծ կամ շինծու գործարք: Երբ ձեռնտու չէ, շահագրգիռ մյուս անձանց հետ հավասար հիմունքներով դիմում ենք դատարան գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով»:

Նախ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով բարեխղճության սկզբունքը, որպես այդպիսին, նախատեսված է, թեև բարեխղճության սկզբունքի մասնավոր դրսևորումներ առանձին հոդվածներում առկա են (174-րդ հոդվածի 1-ին մաս, 187-րդ հոդվածի 1-ին մաս, 293-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր, 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետ, 1099-րդ հոդվածի 3-րդ կետ և այլն): Ինչ վերաբերում է քաղաքացիական իրավունքների չարաշահման արգելքի սկզբունքին, ապա այն իր ամրագրումն է ստացել քաղաքացիական իրավունքներն իրականացնելու սահմաններն ամրագրող իրավադրույթում (12-րդ հոդվածի 1-ին մաս): Բարեխղճությունը, որպես սկզբունք, չի դիտարկվում նաև գիտնականներից շատերի կողմից: Գիտական գրականության ոլորտում այդ կատեգորիայի մասին, որպես կանոն, հիշատակվում է իրավունքների չարաշահման դեպքում կամ բարեխղճ ձեռք բերողից գոլյքը հետ պահանջելիս<sup>193</sup>: Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ առկա է նաև այն մոտեցումը, որ իրավունքի չարաշահումն իր էությունամբ նույննաև է անբարեխղճության հետ<sup>194</sup>: Մինչդեռ ըստ Տ. Բարսեղյանի՝ բարեխղճությունը սկզբունք չհամարելն ամենևին էլ չի նշանակում, որ օրենսդիրը չի արժևորում քաղաքացիական

<sup>193</sup>Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.**: Բարեխղճության դերը քաղաքացիական իրավաբանության ոլորտում կարգավորման գործում, հոդված, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Գրիգորյանի կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին, ԵՊՀ, Երևան 2012, էջեր 32-33: **Краснова С. А.** "Определения понятия "добросовестность" в российском гражданском праве", Журнал российского права, Юридическое издательство "Норма" (Москва), 2003, N 3, էջեր 62, 67:

<sup>194</sup>Տե՛ս **Куликова Л. А.** "Закон или судебное усмотрение? Размышление на тему о применении принципа недопустимости злоупотребления гражданскими правами" // Юридический мир. Издательская группа Юрист, Москва, 2000, N 12, էջ 50, **Камышанский В. П.** "Право собственности: пределы и ограничения". М., ЮНИТИ-ДАНА, Закон и право 2000, էջ 79, **Гаджиев Г. А.** "Конституционные принципы добросовестности и недопустимости злоупотребления субъективными правами" // Государство и право. 2002. N 7, Типография "Наука", Москва, էջ 60, **Щенникова Л. В.** "Принципы гражданского права: достижения цивилистики и законодательный эффект"//Цивилистические записки: Межвуз. сб. науч. труд. М., Екатеринбург: Статут, Ин-т частного права, 2002. Вып. 2, էջեր 58-59:

իրավահարաբերություններին մասնակիցների  
 քարտեխղճություն հիմնարար նշանակությունը:  
 Վերջինս գտնում է, որ քարտեխղճությունն ավելի  
 քան սկզբունք է: Այն իրավական  
 արժևորվածությունն ունեցող բարոյաէթիկական  
 արժեք է՝ բարոյական հրամայական, որն ընկած է  
 իրավունքի և դրացանկացած սկզբունքի հիմքում:  
 Բարտեխղճությունն իրավակարգավորման  
 ելակետային և հիմնարար այն կատեգորիաներից  
 մեկն է, որի պահանջներին պետք է համապատասխանի  
 քաղաքացիական ցանկացած իրավահարաբերություն,  
 սուբյեկտի ցանկացած գործողություն<sup>195</sup>: Ըստ Ա. Վ.  
 Վոլկոյնովի՝ քարտեխղճության սկզբունքը ներառում է  
 քաղաքացիական իրավունքների քարտեխղճորեն  
 սահմանումը, իրականացումը, պաշտպանությունը,  
 կատարումը, սեփական անբարեխիղճ վարքագծից  
 ցանկացած նախապատվությունն ստանալու արգելք<sup>196</sup>:  
 Բարտեխղճության սկզբունքը պատասխանատու է այն  
 բանի համար, որ քաղաքացիական իրավունքի  
 կարգավորիչ իրավադրույթները չվերածվեն  
 իրավունքի սուբյեկտների հայեցողության  
 ազատության (դիսպոզիտիվության) «գոհի»<sup>197</sup>:

Սույն աշխատանքի նպատակներով  
 պայմանավորված՝ անդրադարձ չկատարելով  
 քարտեխղճության՝ որպես սկզբունքի առանձնացման,  
 քարտեխղճության և իրավունքի չարաշահման  
 արգելքի սկզբունքի հարաբերակցության  
 վերաբերյալ գրականության մեջ առկա  
 խնդիրներին՝ համաձայն ենք այն տեսակետի հետ, որ  
 քարտեխղճության պահանջը, ընկած է ինտելեկտուալ

<sup>195</sup>Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, նշված հոդվածը, էջեր 34-35:  
<sup>196</sup>Տե՛ս **Волков А. В.** "Соотношение принципа добросовестности и принципа недопустимости злоупотребления правом в современном гражданском праве". Вестник Волгоградского государственного университета (Волгоград). Серия 5: Юриспруденция. Выпуск № 3 (20)/2013, էջ 46 □ հասանելի է <https://cyberleninka.ru/article/v/sootnoshenie-printsipa-dobrosovestnosti-i-printsipa-nedopustimosti-zloupotrebleniya-pravom-v-sovremennom-grazhdanskom-prave>  
 հղումով 22.12.2018թ. դրությամբ □:  
<sup>197</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 46:

քաղաքացիաիրավական կարգավորման հիմքում, իր բովանդակությունը ամբողջապես կախված է իր արժեքներից, քան իրավունքի չարաշահման արգելքի սկզբունքը: Բարեխղճությունն իրավակարգավորման ելակետային և հիմնարար այն կատեգորիան է, որն առաջադրում է իր բովանդակությունը կազմող հատուկ պահանջներն իրավակարգավորման բոլոր դեպքերում, այդ թվում՝ երբ իրավունքի չարաշահման արգելքի սկզբունքն ի գործ է հասնելու իր նպատակին:

Մեր կարծիքով՝ կեղծ և շինծու գործարքների գգալիմասն իրեն թյամբ բարեխղճության պահանջի խախտում է: Դա բացատրվում է հետևյալով. կողմերը կնքում են կեղծ կամ շինծու գործարքներ և դրանով իսկ չարաշահում պայմանագրի ազատության սկզբունքը: Այնուհետև նրանց անբարեխղճ վարքագիծը շարունակվում է, երբ նրանք այլ անձանց հետ հարաբերություններում շահարկում են այդ գործարքները որպես վավեր գործարքներ, որպես կանոն, հասնելով ամենաբազմազան հակաիրավական նպատակների: Նույն կեղծ կամ շինծու գործարքի կողմերը, այլևս չունենալով նման գործարքի կարիքը (օրինակ՝ երբ հակաիրավական նպատակն իրագործվել է կամ անհնարին է եղել այն իրագործել) կամ «ընկնելով սեփական ձեռքերով պատրաստված թակարդը» (օրինակ՝ երբ մյուս կողմը, չարաշահելով վստահությունը, սկսում է կոնտրագենտին ներկայացնել առերևույթ վավեր գործարքից բխող պահանջներ), գալիս են դատարան՝ իրենց իրավունքների պաշտպանության խնդրանքով: Կարծում ենք, որ նման անբարեխղճ սուբյեկտին առանց որևէ վերապահման շահագրգիռ անձ դիտարկելը և մյուս շահագրգիռ անձանց հետ հավասար հիմունքներով դատական պաշտպանություն տրամադրելը դառնում է

աջակցություն անբարեխղճությունը: Բացի այդ, և՛ երրորդ անձանց, և՛ գործարքի կողմերին հավասար հիմունքներով նույն գործարքի անբարենպաստ հետևանքներից պաշտպանվելու հնարավորություն տալն ամենաթողություն նպաստավոր պայմաններ է ստեղծում քաղաքացիական շրջանառության անբարեխիղճ մասնակիցների համար: Վերջիններս գիտակցում են, որ ցանկացած ժամանակ կարող են դատական կարգով վերացնել իրենց իսկ կնքած գործարքը: Նրանք դիմում են դատարան՝ ստանալով արդարադատության աջակցությունը: Մեր կարծիքով, կեղծ և շինծու գործարքներն անվավեր գործարքների շարքը դասելու հիմնական նպատակն է այդ գործարքների կնքման հետևանքով տուժած անձանց շահերի վերականգնումը, ինչպիսիք կարող են համարվել միայն երրորդ անձինք: Նման տրամաբանություն է դրված նաև կամքի և կամահայտնության անհամապատասխանության մեջ կնքված մյուս անվավեր գործարքների, այն է՝ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ, խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո կնքված գործարքների անվավերության կարգավորման հիմքում: Մասնավորապես՝ էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը դատարանով կարող է անվավեր ճանաչվել *մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով* (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մաս), խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո կնքված գործարքը կարող է անվավեր ճանաչվել *տուժողի հայցով* (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մաս):

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կողմերին այլ անձանց հետ հավասար հիմունքներով

իրենց իսկ կնքած կեղծ կամ շինծու գործարքների անվավերություն հետևանքների կիրառման պահանջներ կայացնելու իրավունք տրամադրելը, մեր կարծիքով, չի համապատասխանում բարեխղճությանը, խթանում է նման գործարքների կնքումը, հանգեցնում է քաղաքացիական շրջանառության կայունության խախտման, իսկ մի շարք դեպքերում այլ անձանց իրավունքների ոտնահարման:

Խնդրի լուծման նպատակով՝ փորձենք պարզել՝ արդյո՞ք նպատակահարմար է ամբողջությամբ կողմին զրկել գործարքի կեղծ կամ շինծու բնույթի վերաբերյալ հայտարարություն անելու իրավունքից, թե՞ առավել նպատակահարմար է սահմանել գործարքի կեղծ կամ շինծու բնույթը վկայակոչելու կողմի իրավունքի որոշակի սահմանափակումներ, մասնավորապես, ապացույցների որոշակի շրջանակ նախատեսելու և բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներին նախապատվություն տալու ձևով:

Մեր կողմից փորձ է կատարվել վերհանելու այլ իրավական համակարգերում գործող համապատասխան կանոնակարգումները ևս: Հիշարժան է Մեծ Բրիտանիայի փորձը, որտեղ հանրային քաղաքականության սկզբունքը հետևյալն է՝ "ex dolo malo non oritur actio": Մասնավորապես՝ որևէ դատարան իր օգնությունը չի տրամադրում այն մարդուն, ով իր պահանջի հիմքում դնում է անբարոկամ անօրինական ակտը: (...) Դա կատարվում է ոչ թե հանուն պատասխանողի, այլ իրենք նման հայցվորին օգնություն չեն տրամադրում (...) <sup>198</sup>: Մեծ Բրիտանիայի

---

<sup>198</sup>Այս սկզբունքը Մեծ Բրիտանիայում հիմնարար սկզբունք է, որը սահմանվել է Lord Mansfield C.J.-ի կողմից Holman v. Johnson (1775) գործով, և այն պարբերաբար կիրառվել է ավելի քան 200 տարի ինչպես արդարություն, այնպես էլ իրավունքի դատարաններում: Ավելին, Lord Mansfield-ը հստակեցրել է, որ այն ոչ թե արդարադատության, այլ քաղաքականության սկզբունք է, որի կիրառումը անխնա է և կարող է հանգեցնել դատավարության

նախադեպային իրավունքում մի շարք գործեր կան, որոնք ցույց են տալիս, որ երբ երկու անձ գաղտնի համաձայնության են գալիս՝ խարդախ կամ անօրինական նպատակ իրագործելու վերաբերյալ, և նրանցից մեկը սեփականությանը փոխանցում է մյուսին՝ գաղտնի համաձայնությանը համապատասխան, ապա, երբ խարդախ կամ անօրինական նպատակն իրագործված է, սեփականությանը, որը փոխանցվել է մի կողմից մյուսին, համարվում է ստացողինը՝ անկախ անօրինական ծագում ունենալուց: (...) Պատճառն այն է, որ իրավունքը փոխանցողը, ամբողջովին հասնելով իր անօրինական արդյունքին, չի կարող հնարավորություն ունենալ շրջվելու և հրաժարվելու այն միջոցներից, որոնք կիրառել է, չի կարող «մի կողմնետել» իր իսկ կնքած պայմանագիրը: Պայմանագրով իրավունքը ստացած անձը կարող է իր տիտղոսը պնդել ամբողջ աշխարհի առջև ոչ թե այն պատճառով, որ ինքն իրականում որևէ ներդրում է ունեցել, այլ այն պատճառով, որ չկա որևէ այլ անձ, ով կարող է այդ գույքին կատմամբ էլ ավելի լավ տիտղոս ներկայացնել: Դատարանը չի բռնազանձում սեփականությանը թույլ տրված անօրինականության պատճառով: Բրիտանական իրավունքում, մասնավորապես, օգտագործվում է հետևյալ արտահայտությունը. «Թող գույքը մնա այնտեղ, որտեղ որ ընկնում է» ("Let the estate lie where it falls")<sup>199</sup>: Երբեմն, որպես դատարանի կողմից հայցվորին չաջակցելու պատճառ, նշվում է, որ հայցվորն արդարադատության չի եկել «մաքուր» ձեռքերով ("He has not come to equity with clean hands")<sup>200</sup>: Ինչպես երևում է, նման գործերում առկա են արդարացի շահի ծագման համար

կողմերի միջև անարդար հետևանքների: Ավելին, այդ սկզբունքը դատարանի հայեցողության համար որևէ տեղ չի թողնում (տե՛ս Tinsley Appellant v. Milligan Respondent House of Lords. 1993 June 24 <http://www.uniset.ca/other/cs6/tinsley.html> հղումով 22.12.2018թ. դրությամբ):

<sup>199</sup>S Ե՛ս Muckleston v. Brown (1801) Tinsley Appellant v. Milligan 1993:

<sup>200</sup>S Ե՛ս Groves v. Groves and Tinker v. Tinker, 1970:

անհրաժեշտ պայմանները, պարզապես հայցվորին արգելվում է դրանք հաստատել: Նշվածով բացատրվում է, թե ինչու այն գործերում, որտեղ հակաիրավական նպատակը չի իրագործվել, դատարանը կարող է համարել, որ չնայած անօրինականությանը՝ գոյություն ունի արդարացի շահ, որի նկատմամբ իրավունք ունի հայցվորը<sup>201</sup>:

Ավելի մեղմ կարգավորում է սահմանված Իտալիայում: Իտալիայի քաղաքացիական օրենսգրքը սահմանում է. «Սիմոնելյացիան որպես պաշտպանություն պայմանագրի կողմերի, նրանց իրավահաջորդների կամ ֆիկտիվ (կեղծ, շինծու) գործարքով իրավունքը փոխանցող անձի պարտատերերի կողմից չի կարող օգտագործվել երրորդ կողմ հանդիսացող անձանց դեմ, ովքեր բարեխղճորեն իրավունքներ են ձեռք բերել առերևույթ սեփականատիրոջից (1415-րդ հոդված)<sup>202</sup>: «Պայմանագրի կողմերը չեն կարող պայմանագրի ֆիկտիվ (կեղծ, շինծու) լինելն օգտագործել առերևույթ սեփականատիրոջ պարտատերերի դեմ, ովքեր բարեխղճորեն ֆիկտիվ (կեղծ, շինծու) պայմանագրի առարկա սեփականության նկատմամբ բռնագանձում են տարածել» (1416-րդ հոդված)<sup>203</sup>:

Երբեմն կողմերի իրավունքի սահմանափակումն արտահայտվում է գրավոր ապացույցներ ներկայացնելու պահանջով: Օրինակ՝ ԱՄՆ Լուիզիանայի նահանգի քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է. «Բոլոր գործերում վկաների ցուցմունքները կամ այլ ապացույցները կարող են թույլատրելի համարվել՝ ապացուցելու սիմոնելյացիայի առկայությունը կամ

<sup>201</sup>Տե՛ս Tinsley Appellant v. Milligan Respondent House of Lords. 1993 June 24  հասանելի է <http://www.uniset.ca/other/cs6/tinsley.html> հղումով 22.12.2018թ.դրոն թյամբ :

<sup>202</sup>Տե՛ս **Luisa Antonielli, Anna Venezian**, նշված աշխատությունը, էջ 285:

<sup>203</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 284:



կան խավար կած ը կամ հերքելու նման կան խավար կած ը : Այնուամենայնիվ, կողմերի միջև ապացուցման պրոցեսում պահանջվում է counter-letter-ի (գաղտնի համաձայնություն, որում արտահայտվում է \$իկտիվ (կեղծ, շինծոն) գործարքի կողմերի իրական մտադրությունը)<sup>204</sup> առկայություն՝ ապացուցելու, որ անշարժ գույքի փոխանցում նախատեսող ակտը բացարձակ սիմուլյացիա է՝ բացառությամբ, երբ սիմուլյացիան ենթադրվում է կամ անհրաժեշտ է՝ պարտադիր ժառանգների իրավունքները պաշտպանելու համար» (1849-րդ հոդված)<sup>205</sup>:

Թուրքիայում ևս գործարքի կեղծ կամ շինծոն լինելու փաստի հաստատման համար անհրաժեշտ թույլատրելի ապացույցների շրջանակը կախված է ապացուցման բեռի բաշխումից: Եթե գործարքի կեղծ կամ շինծոն լինելը պնդում է գործարքի կողմը, ապա այդ փաստի հաստատման համար պետք է ներկայացնի գրավոր ապացույց: Եթե այդ փաստը պնդում է երրորդ անձը, ապա կարող է ներկայացնել ցանկացած ապացույց<sup>206</sup>:

Թեև ՌԴ քաղաքացիական օրենսգրքով կեղծ կամ շինծոն գործարքի կողմի՝ անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու իրավունքի սահմանափակումներ ուղղակիորեն նախատեսված չեն, սակայն 166-րդ հոդվածով սահմանված է գործարքների անվավերության էսթոնֆելի մեխանիզմը<sup>207</sup>, համաձայն որի՝ «Գործարքի անվավերության վերաբերյալ հայտարարությունը

<sup>204</sup>Հասանելի է <http://dictionary.findlaw.com/definition/counterletter.html> հղումով 22.12.2018թ. դրությամբ:

<sup>205</sup>Տե՛ս Louisiana civil code: Louisiana State Legislature - Legislative Law: Updated for the 2016 Regular Session  
□ հասանելի է [https://legis.la.gov/legis/Laws\\_Toc.aspx?folder=67&level=Parent](https://legis.la.gov/legis/Laws_Toc.aspx?folder=67&level=Parent) հղումով 22.12.2018թ. դրությամբ □:

<sup>206</sup>Տե՛ս The "Simulation" Concept In the New Code of Obligations  
□ հասանելի է <http://www.erdem-erdem.av.tr/publications/law-post/the-simulation-concept-in-the-new-code-of-obligations/> հղումով 22.12.2018թ. դրությամբ □:

<sup>207</sup>Տե՛ս , օրինակ , Саримсоков Ф. В. "Эстоппель в российском гражданском праве: двойственность применения", «Юридический вестник молодых ученых», Комиссия по науке Студенческого Совета Юридического факультета МГУ им. М.В. Ломоносова. Выпуск №1, Москва - 2015, էջ 62 (հասանելի է <https://cyberleninka.ru/article/v/estoppel-v-rossijskom-grazhdanskom-prave-dvoystvennost-primeneniya> հղումով 22.12.2018թ. դրությամբ):

չ ու ն ի իրավական նշանակություն, եթե գործարքի անվավերությունը հղում կատարող անձը գործում է անբարեխղճորեն, մասնավորապես՝ եթե գործարքի կնքումից հետո նրա վարքագիծը հիմք է տվել այլ անձանց հիմնվել գործարքի վավերականության վրա» (5-րդ մաս):

Մեր կարծիքով՝ կեղծ և շինծու գործարքներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու կողմերի իրավունքի սահմանափակումները մշակելիս պետք է ողջամիտ հավասարակշռություն պահպանվի նման գործարքից կողմին ազատելու անբարենպաստ հետևանքների և կողմին նման ազատումը մերժելու անբարենպաստ հետևանքների միջև<sup>208</sup>: Մասնավորապես՝ մի կողմից կեղծ կամ շինծու գործարքի կողմին գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու իրավունք ամբողջությամբ չտրամադրելը, գտնում ենք, բավականին խիստ կարգավորում կլինի: Արդյունքում գործարքի մյուս կողմը, նույնպես լինելով նման գործարքի մասնակից, կհայտնվի անհիմն բարենպաստ վիճակում: Մյուս կողմից՝ կեղծ և շինծու գործարքների կողմերին հավասար հիմունքներով տվյալ գործարքներից տուժած անձանց հետ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու իրավունք տրամադրելը, ինչպես արդեն հիմնավորեցինք, հանգեցնում է անբարեխղճ վարքագծին աջակցության՝ ի դեմս դատարանի, բարեխիղճ անձանց իրավունքների և օրինական շահերի, ինչպես նաև քաղաքացիական շրջանառության կայունության խախտման:

<sup>208</sup>Տե՛ս, օրինակ, Tinsley Appellant v. Milligan Respondent House of Lords. 1993 June 24  հասանելի է <http://www.uniset.ca/other/cs6/tinsley.html> հղումով 22.12.2018թ. դրությամբ

Վերոգրյալի հաշվառմամբ՝ նախ գտնում ենք, որ ցանկացած դեպքում կողմի պահանջով կեղծ կամ շինծու գործարքն անվավեր ճանաչելիս և անվավերություն հետևանքներ կիրառելիս դատարանը պետք է պարզի քարեխիղճ երրորդ անձանց իրավունքների խախտման հնարավորությունը: Միայն այդպիսի հնարավորությունը բացառելուց հետո պետք է կիրառվեն նման հետևանքներ: Բացի այդ, բոլոր այն դեպքերում, երբ կեղծ կամ շինծու գործարքին դիմելու հակաիրավական նպատակն իրագործված է, ապա այդ գործարքի անվավերություն վերաբերյալ կողմի հայտարարությունը չպետք է տրվի իրավական նշանակություն: Որպեսզի բացառվի իրականում վավեր գործարքը դատական կարգով կեղծ կամ շինծու դարձնելու հնարավորությունը, ինչպես նաև նման գործարքի կողմին նույն գործարքից տուժած քարեխիղճ անձանց հետ պաշտպանություն հավասար հարթակին չդնելու նպատակով, կարծում ենք, որ կողմերի նկատմամբ կիրառվելիք սահմանափակումներից պետք է լինի նաև գործարքի կեղծ կամ շինծու բնույթի վերաբերյալ գրավոր ապացույցներ ներկայացնելու պարտականություն սահմանումը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ 1.2-րդ պարագրաֆում առաջարկված խմբագրությունը 33 քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածը նպատակահարմար է լրացնել հետևյալ 5-րդ և 6-րդ մասերով.

*«5. Գործարքի կեղծ կամ շինծու լինելու վերաբերյալ կողմի հայտարարությունը չնենի իրավական նշանակություն, եթե տվյալ գործարքը կնքելու՝ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նշված 33 օրենսդրությունը հակասող նպատակն իրականացված է:*

6. Կողմը գործարքի կեղծ կամ շինծու լինելը հիմնավորելու համար, ի թիվս այլ ապացույցների, պետք է ներկայացնի գործարքի կնքման պահին ստեղծված գրավոր ապացույցներ»:

### **§3.3. Կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների առանձնահատկությունները**

Անվավեր գործարքները չեն հանգեցնում իրավաբանական հետևանքների՝ բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքերն անվավեր են կնքելու պահից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մաս): ՀՀ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան գործարքների անվավերության ընդհանուր և գլխավոր հետևանքը ռեստիտուցիան է, որն առավել ընդհանրացրած կարելի է բնորոշել որպես կողմերի վերադարձ սկզբնական դրություն (երկկողմանի ռեստիտուցիա)<sup>209</sup>: Ռեստիտուցիան, այնուամենայնիվ, չի համարվում գործարքի անվավերության միակ հնարավոր հետևանքը: Գրականության մեջ այլ հետևանքները հաճախ դասակարգվում են հատուկ և լրացուցիչ հետևանքների<sup>210</sup>: Հատուկ հետևանքների շարքին սովորաբար դասում են միակողմանի ռեստիտուցիան և ռեստիտուցիայի անթույլատրելիությունը, այսինքն՝ գործարքով ստացվածը կամ հասանելիքը հօգուտ պետության բռնագանձելը<sup>211</sup>: Որպես գործարքի անվավերության լրացուցիչ հետևանք հանդես է գալիս տուժող

<sup>209</sup>Տե՛ս Կոչյր Կ. Վ., նշված ատենախոսություն, էջ 148:

<sup>210</sup>Տե՛ս նույն ստեղծում, էջ 149: Шестакова Н. Д. "Недействительность сделок". СПб.: Издательство "Юридический центр Пресс", 2001, էջ 61: Мындра Д. И., նշված ատենախոսություն, էջեր 153-154:

<sup>211</sup>Տե՛ս Կոչյր Կ. Վ., նույն աշխատություն, էջ 149:

կողմին պատճառված իրական վնասը հատուցելու պարտավորության ծագումը, որն առաջացել է անվավեր գործարքի կնքման և կատարման արդյունքում<sup>212</sup>: Կեղծ և շինծու գործարքների անվավերությունը կարգավորող իրավադրույթներով անվավերության հատուկ հետևանքներ նախատեսված չեն (բացառություն է կազմում միայն շինծու գործարքի դեպքում քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառման հնարավորությունը), ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան այս գործարքների անվավերության իրավաբանական հետևանքը պետք է լինի միայն երկկողմանի ռեստիտուցիան: Սակայն, կարծում ենք, նշվածը միանշանակ ընդունելի չի կարող լինել, քանի որ անվավեր գործարքների համակարգում կեղծ և շինծու գործարքներն ունեն ընդգծված առանձնահատկություններ, ինչն էլ հանգեցնում է անվավերության իրավաբանական հետևանքների մի շարք առանձնահատկությունների:

Այսպես, կեղծ և շինծու գործարքների անվավերության հետևանքների առաջին առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կողմերն այս գործարքները չեն կնքում գործարքի ցեխող իրավական հետևանքներն առաջացնելու նպատակով: Կեղծ և շինծու գործարքները, որպես կանոն, չեն կատարվում, հետևաբար կողմերի միջև հարաբերություններում կնքված գործարքի ցեխող գույքային հետևանքներ չեն առաջացնում: Նույնիսկ եթե կեղծ կամ շինծու գործարքների ցեխող որոշակի իրավական հետևանքներ առաջանում են, ապա դրանք ստեղծվում են միայն տեսանելիության համար և երբեք ավարտին

<sup>212</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 149:

չ են հասնում<sup>213</sup>: Հակառակ դեպքում գործարքի կեղծ կամ շինծու բնույթի մասին խոսելն անիմաստ է: Այդ է պատճառը, որ երկկողմանի ռեստիտուցիան, որպես գործարքի անվավերության հիմնական հետևանք, այս գործարքների դեպքում շատ հազվադեպ է կիրառվում: Իսկ եթե ոչ երկկողմանի ռեստիտուցիայի կիրառումը, ապա ո՞րն է կեղծ և շինծու գործարքների անվավերության պահանջով դատարան դիմելու նպատակը, հատկապես այն դեպքերում, երբ այս գործարքները կողմերի միջև հարաբերության ներքում կնքված գործարքից բխող փաստացի գույքային հետևանքներ չեն առաջացնում:

Գիտական գրականության մեջ այն կարծիքն է արտահայտվել, որ գործարքի անվավերության հետևանքների կիրառումն առաջին հերթին նպատակ ունի վերացնել դրա հետագա գոյությունը<sup>214</sup>: Բանն այն է, որ առնչինչ գործարքն անկախ փաստացի կատարումից նախևառաջ առաջացնում է իրավական շահի անորոշություն: Նման գործարքը շահագրգիռ անձի հայցով դատական կարգով անվավեր ճանաչելու հիմնական նպատակը նման անորոշության վերացումն է, ինչպես նաև գործարքի հետագա կատարումը բացառելը: Հետևաբար առնչինչ, սակայն փաստացի չկատարված գործարքն անվավեր ճանաչելով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անվավերության հետևանքների կիրառման խնդիր չի առաջանում<sup>215</sup>: Ուստի գտնում ենք, որ գործող իրավակարգավորման պայմաններում կեղծ և շինծու գործարքների անվավերության հիմնական և առաջնային հետևանքն այդ գործարքի և գործարքի առաջացրած

<sup>213</sup>Տե՛ս, օրինակ, թիվ ԿԴ1/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. հունիսի 22-ի որոշումը:

<sup>214</sup>Տե՛ս Хейфец Ф. С. "Недействительность сделок по российскому гражданскому праву", Хейфец Ф.С.. - 2-е изд., доп. - М.: Юрайт, 2000, էջ 113: Рабинович Н. В., նշված աշխատությունը, էջ 112: **Համբարձումյան Կ.Վ.**, նշված ատենախոս., էջ 102:

<sup>215</sup>Տե՛ս **Համբարձումյան Կ.Վ.**, նույն ատենախոս., էջ 103:

ի ր ա վ ա ր ան ակ ան - ձ ն ակ ան հ ե տ ն ան ք ն ե ր ի վ ե ր ա ց ու մ ն է  
դ ա տ ակ ան կ ար գ ո վ , գ ո թ ար ք ի հ ե տ ա գ ա գ ո յ ու թ յ ու ն ը  
և շ ա հ ար կ ու մ ը ք ա ց ա ռ ե լ ը : Օ թ ի ն ակ , ե ր ք կ ե ղ ծ  
գ ո թ ար ք ո վ գ ու յ ք ի ն կ ա տ մ ա մ ք փ ո խ ա ն ց վ ու մ է  
ս ե փ ա կ ան ու թ յ ան ի ր ա վ ու ն ք ը , ս ա կ ա յ ն ի ր ա կ ան  
ի ր ա վ ա տ ե ր ը շ ա ր ու ն ակ ու մ է փ ա ս տ ա ց ի տ ի ր ա պ ե տ ե լ  
գ ու յ ք ը , ա պ ա ե ր կ կ ո ղ մ ան ի ռ ե ս տ ի տ ու ց ի ա յ ի  
ան հ ր ա ժ ե շ տ ու թ յ ու ն ա ռ կ ա չ է : Մ ի ն չ դ ե ռ ե ր ը ը ը  
ան ձ ան ց կ ա մ գ ո թ ար ք ի կ ո ղ մ ի հ ա մ ար ծ ա գ ու մ է  
ս տ ե ղ ծ վ ա ծ ի ր ա վ ակ ան ան ո թ ո շ ու թ յ ու ն ը  
վ ե ր ա ց ն ե լ ու ան հ ր ա ժ ե շ տ ու թ յ ու ն : Ա յ ս տ ե ղ հ ար կ է  
ն կ ա տ ե լ , ո թ Յ Յ վ ճ ռ ա ք ե կ դ ա տ ար ան ը , ան դ ր ա դ ա ռ ն ա լ ո վ  
կ ե ղ ծ գ ո թ ար ք ի ան վ ա վ ե ր ու թ յ ան հ ե տ ն ան ք ն ե ր ի ն ,  
մ ա ս ն ա վ ո թ ա պ ե ս , ն շ ե լ է . « Յ Յ ք ա ղ ա ք ա ց ի ակ ան  
օ թ ե ն ս գ ը ք ի 306-ր դ հ ո ղ վ ա ծ ի վ ե ր լ ու ծ ու թ յ ու ն ի ց  
ք խ ու մ է , ո թ օ թ ե ն ս դ ի ը կ ե ղ ծ գ ո թ ար ք ն ե ր ի  
ան վ ա վ ե ր ու թ յ ան հ ա տ ու կ հ ե տ ն ան ք ն ե ր չ ի  
ն ա խ ա տ ե ս ե լ : Յ ե տ ն ա ք ար , ը ս տ է ու թ յ ան , պ ե տ ք է  
կ ի ր ա ռ ե լ ի լ ի ն ե ն Յ Յ ք ա ղ ա ք ա ց ի ակ ան օ թ ե ն ս գ ը ք ի 304-  
ր դ հ ո ղ վ ա ծ ո վ ն ա խ ա տ ե ս վ ա ծ հ ե տ ն ան ք ն ե ր ը :  
Ա յ դ ու հ ա ն դ ե թ ծ , հ ա շ վ ի ա ռ ն ե լ ո վ , ո թ կ ե ղ ծ գ ո թ ար ք ի  
դ ե պ ք ու մ գ ո թ ար ք ի փ ա ս տ ա ց ի կ ա տ ար ու մ , **ո թ պ ե ս  
կ ան ո ն** , տ ե ղ ի չ ի ու ն ե ն ու մ , ն մ ա ն ա տ ի պ դ ե պ ք ե թ ու մ  
վ ե ր ո գ ը յ ա լ ն ո թ մ ի կ ի ր ա ռ ու մ ն ու ն ի  
ա ռ ան ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն ե ր , մ ա ս ն ա վ ո թ ա պ ե ս ` ո թ պ ե ս  
ան վ ա վ ե ր ու թ յ ան հ ե տ ն ան ք կ ար ո ղ է լ ի ն ե լ ն ա խ կ ի ն  
ս ե փ ա կ ան ա տ ի ը չ տ ի տ ղ ո ս ի վ ե ր ա կ ան գ ն ու մ ը ,  
դ ա տ ակ ան ա կ տ ո վ գ ո թ ար ք ի կ ե ղ ծ լ ի ն ե լ ու  
հ ա ն գ ա մ ան ք ը հ ա ս տ ա տ ե լ ը , ո թ ը կ ար ո ղ է հ ա ն գ ե ց ն ե լ  
ո թ պ ե ս ան վ ա վ ե ր ու թ յ ան հ ե տ ն ան ք ա յ լ ա ծ ան ց յ ա լ  
պ ա հ ան ջ ն ե ր ն ե ր կ ա յ ա ց ն ե լ ու ն (օ թ ի ն ակ ` ի ր ա վ ու ն ք ի  
պ ե տ ակ ան գ ը ան ց ու մ ն ան վ ա վ ե ր ճ ան ա չ ե լ ը )»<sup>216</sup>:

<sup>216</sup>Տ ե ՛ս թ ի վ Կ Դ 1/0935/02/14 ք ա ղ ա ք ա ց ի ակ ան գ ո թ ո վ Յ Յ վ ճ ռ ա ք ե կ  
դ ա տ ար ան ի 2016թ . հ ու լ ի ս ի 22-ի ո թ ո շ ու մ ը :

Մի աժամանակ նշենք, որ կեղծ և շինծու գործարքների նկատմամբ ռեստրիտուցիայի կիրառման հնարավորությունը չի բացառվում: Նշված գործարքներով ռեստրիտուցիան կիրառվում է, երբ տվյալ գործարքը փաստացի որոշակի գույքային հետևանքներ առաջացրել է: Օրինակ, երբ կողմը փաստացի գույք է փոխանցել կամ գույքից օգտվել է կամ որոշակի ծառայություն է մատուցել, աշխատանք է կատարել: Ինչ վերաբերում է կեղծ և շինծու գործարքների անվավերությունը և րացուցիչ հետևանքներին, ապա թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ուղղակիորեն նման հետևանքներ նախատեսված չեն, սակայն որպես րացուցիչ հետևանք՝ կեղծ կամ շինծու գործարքի կնքման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասը հատուցելու պարտականությունը, մեր կարծիքով, պետք է նախատեսված լինի (այս մասին խոսվում է նաև 1-ին գլխի 1.3-րդ և 3-րդ գլխի 3.4-րդ պարագրաֆներում):

Այսպիսով, որպես կեղծ և շինծու գործարքների անվավերության իրավաբանական հետևանքներ առաջարկում ենք առանձնացնել նախևառաջ *կնքված գործարքի առաջացրած իրավաբանական-ձևական հետևանքներին վերացումը*, այնուհետև՝ *ռեստրիտուցիան* և որպես րացուցիչ հետևանք՝ *կեղծ կամ շինծու գործարքի կնքման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասը հատուցելու պարտականությունը*:

Անվավերության իրավաբանական հետևանքների յուրահատուկ կարգավորմամբ են առանձնանում շինծու գործարքները, քանի որ շինծու գործարքով քողարկված գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մաս):



Շիւծու գործարքի անվավերութեան հետևանքներն իրենց հերթին կարելի է բաժանել երկու խմբի՝ *շիւծու գործարքի՝ որպես անվավեր (ներկայիս իրավակարգավորման պայմաններում՝ առնչինչ) գործարքի անվավերութեան ընդհանուր հետևանքների*, որոնց շարքում կարող են լինել իրավաբանական-ձևական հետևանքների վերացումը, ռեսուրսի տուգիան, երրորդ անձանց պատճառված վնասը հատուցելու պարտականութենքը, և *շիւծու գործարքի անվավերութեան հատուկ կամ լրացուցիչ հետևանքի*, որն էլ շիւծու գործարքով քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառումն է: ԶԶ օրենսդրութեան և դատական պրակտիկայի ուսումնասիրութեան արդյունքում պարզել ենք, որ քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառման հստակ կանոնակարգումներ առկա չեն, ինչը մի շարք իրավակիրառ խնդիրներ է առաջացնում՝ շատ հաճախ հանգեցնելով իրավական անորոշութեան: Քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառման կառուցակարգն ու պայմանները հստակեցնելու նպատակով՝ նախ փորձ ենք պարզել, թե որն է ԶԶ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառման օրենսդրական պահանջի նշանակութենքը:

Ինչպես նկատում ենք ԶԶ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավադրութեան շիւծու գործարքը կնքվում է մեկ այլ գործարք քողարկելու նպատակով: Ինչպես արդեն նշել էինք, քողարկող գործարքը, ի տարբերութեան քողարկված գործարքի, ըստ էութեան, կեղծ գործարք է, և, որպես կանոն, այդ գործարքից բխող իրավունքներն ու պարտականութենքները կողմերը չեն

իրականացնում: Կողմերն իրականացնում են միայն այն պարտավորությունները, որոնք համընկնում են քողարկված գործարքից բխող պարտավորությունների հետ<sup>217</sup>: Այսինքն՝ շինծու գործարքի դեպքում առկա է երկու իրավահարաբերություն՝ շինծու գործարքից բխող կեղծ իրավահարաբերություններ և իրական իրավահարաբերություններ, որոնք, սակայն, բացահայտ չեն: Մինչդեռ շինծու գործարքի դեպքում կեղծ և իրական իրավահարաբերությունները մեկը մյուսից առանձին գոյություն ունենալ չեն կարող, ինչով էլ արտահայտվում է շինծու գործարքի տարբերությունը կեղծ գործարքից:

Չաշվի առնելով այն հանգամանքը, որ շինծու գործարքները կամքի արատով գործարքներ են, որոնցում առկա է կամքի և կամահայտնություն կանխամտածված անհամապատասխանություն<sup>218</sup>, գտնում ենք, որ օրենսդրի կողմից նման գործարքներն անվավեր գործարքների շարքը դասելու և անվավերության առանձնահատուկ հետևանքներ նախատեսելու նպատակն է կողմերի իրական կամքին առաջնայնություն տալը, կողմերի իրական մտադրությունները բացահայտելը, ինչն էլ միաժամանակ հնարավորություն է տալիս վերականգնելու նման գործարքների կնքման հետևանքով խախտված իրավունքներն ու օրինական շահերը: Ծինծու գործարքի կնքման հետևանքով խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնման նպատակ է հետապնդում ոչ միայն շինծու, այն է՝ քողարկող գործարքի

<sup>217</sup>Տե՛ս **Данилов И. А.**, նշված հոդվածը, էջ 33:

<sup>218</sup>Տե՛ս **Хейфец Ф. С.** "Недействительность сделок по российскому гражданскому праву", Хейфец Ф.С.. - 2-е изд., доп. - М.: Юрайт, 2000, էջ 84: **Кузнецова О. А.**, նշված հոդվածը, էջ 13: **Сергеев А. П. (ред.)** "Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации (постатейный)". Часть 1: учеб.- практич. комментарий / Е. Н. Абрамова, Н. Н. Аверченко, Ю. В. Байгушева (и др.) - Москва: Проспект, 2012, էջ 453:

անվավերություն հետևանքներ կիրառելը, այլ նաև կողմերի միջև իրականում առկա հարաբերությունների նկատմամբ քողարկված գործարքին վերաբերող կանոնները կիրառելը: Նշվածը, մեր կարծիքով, վկայում է այն մասին, որ քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառումը, միաժամանակ լինելով գործարքի անվավերության հետևանք, քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից է: Յարկ է նկատել, որ իրավունքների պաշտպանության նման յուրահատուկ եղանակ օրենսդրի կողմից կիրառվել է ոչ միայն շինծու գործարքների դեպքում, այլ նաև որոշ այլ դեպքերում, օրինակ՝ նվիրատվության (ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մաս) և աշխատանքային հարաբերություններում (ՅՅ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 6-րդ մաս): Յետևաբար քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառումը, լինելով իրավունքի պաշտպանության եղանակ, շինծու գործարքի դեպքում պետք է ծառայի առաջին հերթին երրորդ անձանց, պետական և համայնքային շահերի, այնուհետև գործարքի կողմերի շահերի պաշտպանությանը: Ուստի, գտնում ենք, որ շահագրգիռ անձը կարող է իր իրավունքների պաշտպանությանն իրականացնել՝ ինչպես միայն շինծու գործարքի անվավերության ընդհանուր հետևանքների կիրառման պահանջ ներկայացնելով, այնպես էլ վերջինիս հետ մեկտեղ քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառման պահանջ ներկայացնելով: Այսինքն՝ առաջին պահանջի ներկայացումը պարտադիր չի ենթադրում երկրորդ պահանջի ներկայացում, քանի որ անձնինքն է իր հայեցողությամբ ընտրում իր խախտված իրավունքների պաշտպանության եղանակները՝ ինքնուրույն որոշելով հայցի հիմքը և առարկան:

Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավադրույթից բխում է, որ քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառումը կրում է իմպերատիվ բնույթ: Այսինքն՝ ըստ գործող իրավակարգավորման՝ ցանկացած դեպքում, երբ դատարանը հաստատում է գործարքի շինծու լինելը, ապա պարտավոր է քողարկված գործարքի կանոնները կիրառել: Այստեղ հարց է առաջանում, թե ինչպես պետք է վարվի կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա գործը քննող դատարանը, եթե նման պահանջ չահագրգիռ անձը չի ներկայացրել: Չէ՞ որ գործարքի շինծու, հետևաբար նաև անվավեր (գործող իրավակարգավորման պայմաններում առնչինչ) լինելն ապացուցելու համար, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասի, բավարար է միայն ապացուցել կնքված գործարքով այլ գործարք քողարկելու նպատակը, իսկ այդ նպատակի առկայության մասին պարզապես կարող է վկայել կողմերի միջև կնքված շինծու գործարքից տարբեր փաստացի այլ իրավահարաբերությունների առկայությունը: Ուստի չահագրգիռ անձը պարտավորություն չի կրում ապացուցելու քողարկված գործարքի բոլոր պայմանները: Ծինծու գործարքի անվավերության ընդհանուր հետևանքների կիրառման համար բավարար է, որ չահագրգիռ անձն ապացուցի միայն շինծու գործարքից բխող իրավական հետևանքները չառաջանալու և կողմերի միջև այլ իրավահարաբերությունների առաջանալու փաստերը: Բացի այդ, եթե շինծու գործարքի՝ որպես անվավեր գործարքի հետևանքների կիրառման պահանջ ներկայացնի երրորդ անձը, ապա վերջինս շատ դեպքերում չի կարողանա ապացուցել կողմերի միջև քողարկված գործարքի բոլոր պայմանները՝

պարզապես չլինելով այդ իրավահարաբերությունների մասնակից և հաշվի առնելով այդ իրավահարաբերությունների արդեն իսկ քողարկված բնույթը: Քողարկված գործարքի բոլոր պայմանները չեն ապացուցվում նաև այն դեպքում, երբ նման հայցով դատարան է դիմում գործարքի կողմը, որին բավարար է լինում պարզապես շինծու գործարքի անվավերության ընդհանուր հետևանքների կիրառումը, իսկ մյուս կողմն իր իրավունքների պաշտպանությունը տանում է՝ հայցի դեմ ամբողջությամբ առարկելով: Օրինակ՝ շինծու առուվաճառքի պայմանագրով քողարկվել են գրավի և փոխառության պայմանագրերը: Շինծու պայմանագրով վաճառողը, դիմելով դատարան, խնդրում է գնորդի անունով կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչել պայմանագրի շինծու լինելու հիմքով, իսկ պատասխանողը՝ գնորդը, ամբողջությամբ առարկում է հայցի դեմ, հետևաբար այլևս չի էլ բարձրացնում քողարկված գործարքների պայմանների հարցը: Արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ դատարանի կողմից հաստատվում է գործարքի շինծու լինելը, սակայն քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառումը դառնում է անհնարին՝ այդ գործարքի պայմանների ապացուցված չլինելու հետևանքով:

Միաժամանակ հարկ ենք համարում նկատել, որ քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառումը, վեր հանելով կողմերի միջև իրականում առկա իրավահարաբերությունները, կոչված է, դրանց իրավական տեսանկյունից գնահատական տալով, վերականգնելու կողմերի իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը: Բանն այն է, որ միայն շինծու գործարքի անվավերության ընդհանուր

հետևանքների կիրառումը հնարավորություն է տալիս կողմերին ամբողջովին վերադարձնել մինչև շինծու գործարքի կնքումը եղած դրություն, քանի որ շինծու գործարքի կնքումից առաջ կամ հետո կողմերի միջև ծագում են իրական իրավահարաբերություններ, որոնց հետևանքով է փաստացի փոփոխություն ենթարկվում վերջիններիս գույքային դրությունը: Կրկին դիտարկենք դասական օրինակը. շինծու առևճամբի պայմանագրով քողարկվում են փոխառության և գրավի պայմանագրերը: Երբ կիրառվում են միայն առևճամբի պայմանագրի անվավերության ընդհանուր հետևանքները, այն է՝ վերականգնվում է վաճառողի սեփականության իրավունքը՝ անվավեր ճանաչելով իրավունքի պետական գրանցումը, ապա շինծու պայմանագրով վաճառողը հայտնվում է կրկնակի շահեկան վիճակում. վերջինիս են մնում ինչպես գրավադրված գույքը, այնպես էլ փոխառության ամբստացված գումարը, իսկ շինծու պայմանագրով գնորդը հայտնվում է կրկնակի բացասական վիճակում՝ կորցնելով ինչպես փոխառության ամբստացված գումարը, այնպես էլ գույքի նկատմամբ գրավի իրավունքը:

Բարձրացված հարցի վերաբերյալ դատական պրակտիկան, մեր կարծիքով, միասնական չէ: Որոշ դեպքերում դատարանները կողմի ներկայացրած պահանջին համապատասխան կիրառում են միայն շինծու գործարքի անվավերության ընդհանուր հետևանքները, որոշ դեպքերում ընդհանուր հետևանքների հետ մեկտեղ քողարկված գործարքին վերաբերող կանոնները կիրառում են մասամբ, իսկ որոշ դեպքերում՝ դատարանները, օգտվելով առնչինչ գործարքի անվավերության հետևանքները սեփական նախաձեռնության մեջ կիրառելու իրավունքից (ՔՅ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ

հոդվածի 3-րդ մաս), կիրառում են նաև քողարկված գործարքի նվերաբերող կանոնները:

Օրինակ, թիվ ԵԱՆԴ/1451/02/12 քաղաքացիական գործով կայացված վճռով<sup>219</sup> դատարանն անվավեր է ճանաչել Ա.Ս.-ի և Ն.Խ.-ի միջև կնքված բնակելի տան առևձեռնաբիշի նծու պայմանագիրը: Որպես շինծու գործարքի հետևանք անվավեր է ճանաչել նշված պայմանագրի հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումը: Միաժամանակ դատարանը վճռով արձանագրել է, «որ առևձեռնաբիշ պայմանագիրը Ա.Ս.-ի համար հանդիսացել է երաշխիք հետագայում Ն.Խ.-ին փոխառություն ամբողջությամբ տրված գումարը հետստանալու համար, իսկ պարտավորագիրը Ն.Խ.-ի համար հանդիսացել է երաշխիք հետագայում իրեն պատկանող տունը հետ վերադարձնելու համար»: Դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործով բացակայել է պահանջը՝ գործարքով ստացածը վերադարձնելու վերաբերյալ, և, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, սեփական նախաձեռնություն ամբողջությամբ գործարքի անվավերության հետևանքներ չի կիրառել, քանի որ կողմերի միջև պարտավորագրով գրված և հանձնված գումարը նույնպես վիճարկվել է կողմերի կողմից, ուստի գտել է, որ այն ենթակա է բնություն մեկայլ քաղաքացիական գործի շրջանակներում:

Մեկ այլ թիվ ԵԿԴ/1306/02/14 քաղաքացիական գործով հայցվորներ Ա.Զ. և Ա.Մ. պահանջել են որպես շինծու գործարք Ա.Զ.-ի և Ա.Մ.-ի ու Ռ.Ն.-ի միջև կնքված անշարժ գույքի առևձեռնաբիշ պայմանագրի նկատմամբ կիրառել առնչինչ պայմանագրի անվավերության հետևանքներ և որպես հետևանք վերացնել նույն անշարժ գույքի նկատմամբ Ռ.Ն.-ի սեփականության

<sup>219</sup>Տե՛ս թիվ ԵԱՆԴ/1451/02/12 քաղաքացիական գործով երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հունիսի 10-ի վճիռը:

իրավունքի պետական գրանցումը՝ վերականգնելով հայցվորների սեփականույթյան իրավունքը: Առաջին ատյանի դատարանի վճռով հայցը մերժվել է: ԶՅ վերաքննիչ դատարանը բեկանել և փոփոխել առաջին ատյանի դատարանի վճիռը՝ բավարարելով Ա.Ձ.-ի և Ա.Մ.-ի հայցն ընդդեմ Ռ.Ն.-ի՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը շինծու ճանաչելու և անվավերույթյան հետևանքներ կիրառելու պահանջների մասին: Որպես նշված շինծու գործարքի անվավերույթյան հետևանքներ՝ անվավեր է ճանաչվել առուվաճառքի պայմանագրի հիման վրա Ռ.Ն.-ի սեփականույթյան իրավունքի պետական գրանցումը և այդ անշարժ գույքի նկատմամբ վերականգնվել է Ա.Ձ.-ի և Ա.Մ.-ի սեփականույթյան իրավունքը: Միաժամանակ ԶՅ վերաքննիչ դատարանը հարկ է համարել անդրադառնալ միայն անշարժ գույքի նկատմամբ Ռ.Ն.-ի սեփականույթյան իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և Ա.Ձ.-ի ու Ա.Մ.-ի սեփականույթյան իրավունքը վերականգնելու հետևանքին՝ հաշվի առնելով, որ գործով վերջնականորեն ճշտված չէ կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած դրամային պարտավորությունների չափը<sup>220</sup>: Զե տազայում թիվ ԳԴ/0705/02/15 քաղաքացիական գործով Ռ.Ն. հայցադիմում է ներկայացրել ընդդեմ Ա.Ձ.-ի ու Ա.Մ.-ի՝ առնչինչ ճանաչված գործարքով ստացվածը բռնագանձելու պահանջի մասին<sup>221</sup>:

Քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառման վերաբերյալ բարձրացված խնդիրը, կարծում ենք, կարելի է վերացնել երկու ճանապարհով.

<sup>220</sup>Տե՛ս թիվ ԿԴ/1306/02/14 քաղաքացիական գործով ԶՅ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2015թ. հունիսի 18-ի որոշումը:

<sup>221</sup>Տե՛ս թիվ ԳԴ/0705/02/15 քաղաքացիական գործով ԶԻ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասույթյան դատարանի 2017թ. նոյեմբերի 24-ի վճիռը:



1. Մե ր ժ Ե Լ գ ո ր ծ ար ք ը շ ի ն ծ ո ւ ճ ան ա չ Ե Լ ո ւ և ան վ ա վ Ե ր ո ւ թ յ ան հ Ե տ ն ան ք ն Ե ր կ ի ր ա ռ Ե Լ ո ւ հ ա յ ց ը , Ե թ Ե շ ա հ ա գ ր գ ի ռ ան ձ ը չ ի ա պ ա ց ո ւ ց ո ւ մ ք ո ղ ար կ վ ա ծ գ ո ր ծ ար ք ի կ ն ք վ ա ծ ո ւ թ յ ան ը , վ ա վ Ե ր ա կ ան ո ւ թ յ ան ը վ Ե ր ա ք Ե ր ո ղ փ ա ս տ Ե ր ը և գ ո ր ծ ար ք ի ք ո Լ ո ր պ ա յ մ ան ն Ե ր ը : Ա յ ս ի ն ք ն ` շ ի ն ծ ո ւ գ ո ր ծ ար ք ի ան վ ա վ Ե ր ո ւ թ յ ան հ Ե տ ն ան ք ն Ե ր ի կ ի ր ա ռ մ ան վ Ե ր ա ք Ե ր յ ա Լ հ ա յ ց Ե ր ը ք ա վ ար ար Ե Լ մ ի ա յ ն ա յ ն դ Ե պ ք ո ւ մ , Ե ր ք տ վ յ ա Լ գ ո ր ծ ո վ ք ն ն ար կ մ ան ա ռ ար կ ա Ե ն դ ար ձ Ե Լ ք ո ղ ար կ վ ա ծ գ ո ր ծ ար ք ի ն վ Ե ր ա ք Ե ր ո ղ ք ո Լ ո ր հ ար ց Ե ր ը :

2. Շ ի ն ծ ո ւ գ ո ր ծ ար ք ի ան վ ա վ Ե ր ո ւ թ յ ան ը ն դ հ ան ո ւ ր հ Ե տ ն ան ք ն Ե ր ի կ ի ր ա ռ մ ան հ ա մ ար ք ա վ ար ար հ ա մ ար Ե Լ կ ո ղ մ Ե ր ի մ ի ջ և ա յ Լ ի ր ա վ ա հ ար ա ք Ե ր ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի ա ռ կ ա յ ո ւ թ յ ան փ ա ս տ ի հ ա ս տ ա տ ո ւ մ ը , ի ս կ ք ո ղ ար կ վ ա ծ գ ո ր ծ ար ք ի ն վ Ե ր ա ք Ե ր ո ղ կ ան ո ն ն Ե ր ի կ ի ր ա ռ ո ւ մ ը ն ա խ ա տ Ե ս Ե Լ ն ա ն ո ր պ Ե ս ի ր ա վ ո ւ ն ք ի պ ա շ տ պ ան ո ւ թ յ ան ի ն ք ն ո ւ ր ո ւ յ ն Ե ղ ան ա կ ` ն մ ան պ ա հ ան ջ ի ն Ե ր կ ա յ ա ց ո ւ մ ը թ ո ղ ն Ե Լ ո վ կ ո ղ մ ի հ ա յ Ե ց ո ղ ո ւ թ յ ան ը և մ ի ա ժ ա մ ան ա կ ս ա հ մ ան Ե Լ դ ա տ ար ան ի պ ար տ ա կ ան ո ւ թ յ ո ւ ն ը կ ի ր ա ռ Ե Լ ք ո ղ ար կ վ ա ծ գ ո ր ծ ար ք ի ն վ Ե ր ա ք Ե ր ո ղ կ ան ո ն ն Ե ր ը ` ա յ դ գ ո ր ծ ար ք ի ք ո Լ ո ր պ ա յ մ ան ն Ե ր ի ա պ ա ց ո ւ ց վ ա ծ Լ ի ն Ե Լ ո ւ դ Ե պ ք ո ւ մ :

Ա ռ ա ջ ի ն մ ո տ Ե ց մ ան կ ի ր ա ռ ո ւ մ ը , մ Ե ր կ ար ծ ի ք ո վ , մ ր ց ա կ ց ա յ ի ն դ ա տ ա վ ար ո ւ թ յ ան պ ա յ մ ան ն Ե ր ո ւ մ կ հ ան գ Ե ց ն ի ա ռ ա ն ց ա յ ն Ե Լ դ ժ վ ար ա պ ա ց ո ւ ց Ե Լ ի շ ի ն ծ ո ւ գ ո ր ծ ար ք ն Ե ր ի ան վ ա վ Ե ր ո ւ թ յ ան հ Ե տ ն ան ք ն Ե ր ի կ ի ր ա ռ մ ան հ ա յ ց Ե ր ի մ Ե ր ժ մ ան ք ա ն ա կ ի ա վ Ե Լ ա ց մ ան : Ե ` վ Ե ր ր ո ր դ ան ձ ա ն ց , և ` կ ո ղ մ Ե ր ի վ ր ա հ ա վ ա ս ար ա պ Ե ս պ ար տ ա կ ան ո ւ թ յ ո ւ ն կ դ ր վ ի ա պ ա ց ո ւ ց Ե Լ ո ւ ք ո ղ ար կ վ ա ծ գ ո ր ծ ար ք ի ք ո Լ ո ր պ ա յ մ ան ն Ե ր ը : Ն մ ան պ ա հ ան ջ ը , ի ն չ պ Ե ս ար դ Ե ն ն կ ա տ Ե ց ի ն ք , ա ռ ա ջ ի ն ս ո ւ ք յ Ե կ տ ն Ե ր ի հ ա մ ար մ ի շ ար ք դ Ե պ ք Ե ր ո ւ մ ան հ ն ար ի ն կ Լ ի ն ի ` պ ար գ ա պ Ե ս կ ո ղ մ Ե ր ի մ ի ջ և ա ռ կ ա ի ր ա վ ա հ ար ա ք Ե ր ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի

քողարկված լինելու պատճառով: Այնուհետև՝ նման պահանջը պատասխանողին չի թույլատրի իրավունքների պաշտպանությունն իրականացնել հայցի դեմ ամբողջությամբ առարկելով, քանի որ վերջինս ստիպված պետք է լինի, իր շահերից ելնելով, փաստարկներ ներկայացնել քողարկված գործարքի պայմանների վերաբերյալ:

Մաքուր մրցակցային դատավարության պայմաններում առավել ընդունելի համարելով երկրորդ մոտեցումը՝ գտնում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարանի կողմից մրցակցության սկզբունքի պահպանմամբ քողարկված գործարքի վերաբերող պայմանները քննարկման առարկա չեն դառնում, մինչդեռ շահագրգիռ անձն ապացուցել է կողմերի միջև իրականում այլ իրավահարաբերությունների առկայությունը և դրանով իսկ կնքված գործարքի շինծու՝ անվավեր լինելը, ապա պետք է կիրառվեն միայն շինծու գործարքի անվավերության ընդհանուր հետևանքները: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ անկախ կողմի ներկայացրած պահանջից, դատարանում քննարկման առարկա են դարձել քողարկված գործարքի պայմանները, ապա դատարանը պետք է վճռի եզրափակիչ մասում արտացոլի կողմերի միջև կնքված քողարկված գործարքի առկայությունը՝ արձանագրելով նաև գործարքի բոլոր էական պայմանները: Իսկ եթե դատարանի կողմից քողարկված գործարքի բոլոր էական պայմանները պարզված չեն, ապա դատարանը պետք է հաստատի կողմերի միջև համապատասխան այլ իրավահարաբերությունների առկայությունը, ինչը, որպես նախադատելի փաստ, հնարավորություն կտա կողմերին նոր քաղաքացիական գործի շրջանակներում իրականացնելու իրենց իրավունքների պաշտպանությունը, այսինքն՝

ապացուցելու քողարկված գործարքի վավերականությանը, իսկ այնուհետև բոլոր էական պայմաններին առկայությունը՝ դրանից բխող հետևանքներով: Ընդ որում, դատարանի կողմից սեփական նախաձեռնություններով անվավերության հետևանքների կիրառումը չի կարող նման դեպքերում դիտարկվել որպես հայցի առարկայի շրջանակներից դատարանի դուրս չգալու պահանջի խախտում, քանի որ նման իրավակարգավորումը պետք է հստակ սահմանված լինի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածով: Ավելին, նշվածը ոչ միայն բխում է շինծու գործարքի՝ ներկայիս իրավակարգավորմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով դատարանի վրա դրված պարտականությունից, այլ նաև արդարադատության շահերից, քանի որ ուղղված է խախտված իրավունքների վերականգնմանը և վեճի վերջնական լուծմանը: Ծահագրգիռ անձն այլևս ստիպված չի լինի, իր իրավունքը վերականգնելու նպատակով, կրկին դիմել դատարան:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք 1-ին գլխի 1.2-րդ պարագրաֆում առաջարկված խմբագրություններով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածը լրացնել հետևյալ 4-րդ մասով.

*«4. Ծիւծու գործարքի դեպքում հաստատվում է կողմերի միջև քողարկված այլ իրավահարաբերությունների առկայությունը, որոնց նկատմամբ կողմի միջնորդություններով կամ դատարանի նախաձեռնությամբ կիրառվում են քողարկված գործարքի նվերաբերող կանոնները: Դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ կիրառել քողարկված գործարքի նվերաբերող կանոնները, եթե տվյալ գործով հաստատված փաստերը նման հնարավորություն են տալիս»:*

Անդրադառնալով քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառմանը՝ կարծում ենք, ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ գործարքի կողմերի իրավունքներն ու պարտականությունները որոշելու համար նախևառաջ պետք է բացահայտել, թե կողմերի միջև փաստացի ինչպիսի իրավահարաբերություններ են ձևավորվել, և որն է այդ իրավահարաբերությունների բովանդակությունը: Այնուհետև անհրաժեշտ է քողարկված գործարքին իրավաբանական գնահատական տալ կնքված ության և վավերական ության տեսանկյունից: Այսինքն՝ քողարկված գործարքին վերաբերող կանոնների կիրառումը նախևառաջ կարող է ենթադրել կա՛մ կողմերի միջև որոշակի վավեր գործարքի առկայություն հաստատում, կա՛մ քողարկված գործարքի կնքված չլինելու փաստի հաստատում, կա՛մ քողարկված գործարքի անվավեր լինելու փաստի հաստատում: Քանի որ ՅՅ քաղաքացիական օրենսգրքով քողարկված գործարքի կնքված ությանը և վավերական ությանը ներկայացվող առանձնահատուկ պահանջներ սահմանված չեն, ուստի հարց է առաջանում, թե արդյոք քողարկված գործարքի նկատմամբ կիրառելի են տվյալ տեսակի գործարքի կնքված ությանն ու վավերական ությանը ներկայացվող բոլոր պահանջները:

Այս հարցի վերաբերյալ կարծիքները գրական ության մեջ միանշանակ չեն: Այսպես՝ Ա.Ա. Րյաբովի կարծիքով՝ շինծու գործարք կնքելիս քողարկված գործարքի ձևին ներկայացվող հատուկ պահանջները, ինչպես նաև պետական գրանցման պահանջը չեն պահպանվում, քանի որ դահնարավոր չէ՝

Ելնելով շիսթոսիոսյան գործարքի իրավական էությունից: Ձևը տրվում է կամահայտնությունը, որը ոչ մի իրավական կապ չունի քողարկված գործարքի հետ, իսկ քողարկված գործարքը չունի այն ձևը, որը պահանջվում է օրենքով, քանի որ այդ գործարքի կատարման կամքը քողարկված է: Յեղիսակը գտնում է, որ այն պայմանագրերի քողարկումը, որոնք կնքված են համարվում սահմանված ձև ստանալուց հետո, նշանակում է, որ քողարկված պայմանագիրը կնքված չէ: Այն գործարքների քողարկումը, որոնք անվավեր են դառնում սահմանված ձևը չպահպանելու հետևանքով, նշանակում է քողարկված գործարքի անվավերությունը<sup>222</sup>: Ըստ Յ.Վ. Մելնիկովայի՝ քողարկված գործարքի իրավական ճակատագիրը կախված է նրանից, թե արդյոք համապատասխանում է այն օրենքի պահանջներին՝ սուբյեկտային կազմի, բովանդակության, ձևի տեսանկյունից և այլն: Եթե այդ գործարքը ոչ ինչ հակաօրինական չի պարունակում, ապա այն վավեր է, և կողմերի համար առաջացնում է համապատասխան իրավունքներ և պարտականություններ: Մինչդեռ շիսթոսիոսյան գործարքների զգալի մասը, վերջինիս կարծիքով, օգտագործվում է անվավեր գործարքները քողարկելու նպատակով: Այդ դեպքում, կախված գործարքի արատից, կիրառվում են համապատասխան կանոնները<sup>223</sup>: Յակառակ նշված տեսակետների՝ Ի.Ա. Դանիլովը նշում է, որ քողարկված գործարքի պայմանները պետք է վերլուծության ենթարկվեն շիսթոսիոսյան գործարքի հետ փոխկապակցված: Յետևաբար շիսթոսիոսյան գործարքի առոչնչության հետևանքներ կիրառելիս քողարկված գործարքի գրավոր ձևին ներկայացվող պահանջների չպահպանումը չի կարող խոչընդոտել քողարկված գործարքը վավեր

<sup>222</sup>Տե՛ս **Рябов А. А.**, նշված հոդվածը :  
<sup>223</sup>Տե՛ս **Мельникова Ю. В.**, նշված հոդվածը , էջ 9:

ճանաչելու: Շինծու գործարքի գրավոր ձևն այս դեպքում պետք է ընդունվի որպես քողարկված գործարքի պատշաճ գրավոր ապացույց, որը հնարավորություն կտա վերացնել քողարկված գործարքի ձևի արատը<sup>224</sup>: Համակարծիք է նաև Մ.Ս. Մուրաշկոն՝ ավելացնելով, որ նույն կերպ պետք է լինի մոտեցումը քողարկված գործարքներով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման պետական գրանցման պահանջի նկատմամբ<sup>225</sup>:

Համաձայնելով վերջին հեղինակների տեսակետի հետ՝ կարծում ենք, որ շինծու գործարքների դեպքում ձևի նկատմամբ (քողարկող գործարք) էությունը (քողարկված գործարք) տրվում է առավելություն՝ քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելու, շահագրգիռ անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով: Ուստի, քողարկված գործարքի իրավաբանական գնահատականը չի կարող կախված լինել այդ գործարքի ձևը և դրանից բխող իրավունքների պետական գրանցման պահանջը պահպանված լինելու հանգամանքից: Բանն այն է, որ շինծու գործարքների դեպքում կողմերն իրենց միջև առկա իրական հարաբերությունները քողարկում են բավականին մեծ շրջահայեցությամբ: Այսինքն՝ քողարկող գործարքը կնքվում է այնպես, որ ամբողջությամբ համապատասխանում է օրենքով սվյալ գործարքի կնքվածությունն ու վավերականությունը ներկայացվող պահանջներին՝ բացառությամբ կամքի և կամահայտնություն համապատասխանության պահանջից, ինչն էլ այդ գործարքին հաղորդում է շինծու բնույթ, իսկ քողարկված գործարքը, որպես կանոն, չի

<sup>224</sup>Տե՛ս **Данилов И. А.**, նշված հոդվածը, էջ 36:

<sup>225</sup>Տե՛ս **Мурашко М. С.**, նշված հոդվածը:

համապատասխանում գործարքի ձևին ներկայացվող և  
իրավունքներն պետական գրանցման պահանջներին :  
Յետևաբար բավարար է համարվում միայն շինծու  
գործարքի՝ օրենքով սահմանված ձևի և  
իրավունքներն պետական գրանցման պահանջի  
պահպանումը : Մ.Ս. Մուրաշկոն այս կապակցությամբ  
իրավացիորեն նշում է, որ քողարկված գործարքը  
գնահատելով՝ պետք չէ մոռանալ քաղաքացիական  
իրավունքում շինծու գործարքի ինստիտուտի դերի  
մասին, որը կոչված է բացահայտելու  
քաղաքացիական շրջանառության մասնակիցների  
իրական կամահայտնությունը և այդ կերպ  
ապահովելու դրա օրինականությունը : Այդ  
հանգամանքը հաշվի չառնելն էականորեն  
դժվարացնում է քողարկված գործարքների  
ապացուցումը : Յնարավոր չէ պատկերացնել  
իրավիճակ, որի դեպքում կողմերը, կնքելով շինծու  
գործարք, պատշաճ կերպով ձևակերպեն իրական  
իրավահարաբերությունները : Շինծու գործարքը  
կնքվում է՝ մասնակիցների իրական  
մտադրությունները թաքցնելու նպատակով, իսկ երբ  
դրանք ամրագրված են պատշաճ ձևով, նման գործարքի  
անհրաժեշտությունն այլևս առկա չէ <sup>226</sup> :

Միաժամանակ, կարծում ենք, քողարկված  
գործարքին իրավաբանական ուժ հաղորդելու համար  
նախնառաջ պետք է պահպանված լինեն տվյալ տեսակի  
գործարքի կնքվածությունը ներկայացվող  
պահանջները : Այսինքն՝ որպեսզի կողմերը կամ  
երրորդ անձինք իրավունք ունենան  
ներկայացնելու քողարկված գործարքից բխող  
պահանջներ, քողարկված գործարքի կնքվածություն  
համար անհրաժեշտ էական պայմանները պետք է  
ապացուցված լինեն : Ինչ վերաբերում է  
վավերականությունը, ապա տվյալ դեպքում

<sup>226</sup>Տե՛ս **Муршко М. С.**, նշված հոդվածը :

ք ն ն ար կ մ ան առ ար կ ա պ ե տ ք Է Լ ի ն ի մ ի ա յ ն ք ո ղ ար կ վ ա ծ  
գ ո թ ծ ար ք ի ս ու բ յ Ե կ տ ա յ ի ն կ ա զ մ ի և  
բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ա ն հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու թ յ ու ն ն  
օ Ր Ե ն ք ի պ ա հ ա ն ջ ն Ե Ր ի ն , ք ա ն ի ո Ր , ի ն չ ա Ե ս ար դ Ե ն  
ն շ Ե ց ի ն ք , ք ո ղ ար կ վ ա ծ գ ո թ ծ ար ք ի ձ և ը , ո Ր ա Ե ս կ ա ն ո ն ,  
չ ի պ ա հ պ ա ն վ ու մ : Կ ա մ ա յ ի ն տ Ե ս ա ն կ յ ու ն ի ց ա յ ս տ Ե ղ  
կ ար ո ղ Է ն շ ա ն ա կ ու թ յ ու ն տ Ր վ Ե Լ ք ո ղ ար կ վ ա ծ  
գ ո թ ծ ար ք ը կ ն ք Ե Լ ու կ ա մ ք ի ա զ ա տ ո Ր Ե ն ձ և ա վ ո Ր վ ա ծ  
Լ ի ն Ե Լ ու հ ա ն գ ա մ ա ն ք ի ն , ք ա ն ի ո Ր գ ո թ ծ ար ք ի շ ի ն ծ ու  
Լ ի ն Ե Լ ու հ Ե տ ն ա ն ք ո վ մ ի շ տ առ կ ա Է կ ա մ ք ի և  
կ ա մ ա հ ա յ տ ն ու թ յ ա ն ա ն հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու թ յ ու ն :

Ա յ ս պ ի ս ո վ , գ տ ն ու մ Ե ն ք , ո Ր կ ա խ վ ա ծ ք ո ղ ար կ վ ա ծ  
գ ո թ ծ ար ք ի ն տ Ր վ ա ծ ի Ր ա վ ա ք ա ն ա կ ա ն գ ն ա հ ա տ ա կ ա ն ի ց `  
ք ո ղ ար կ վ ա ծ գ ո թ ծ ար ք ի ն վ Ե Ր ա ք Ե Ր ո ղ կ ա ն ո ն ն Ե Ր ի  
կ ի Ր առ ու մ ը կ ար ո ղ Է հ ա ն գ Ե ց ն Ե Լ տ ար ք Ե Ր ի Ր ա վ ա կ ա ն  
հ Ե տ ն ա ն ք ն Ե Ր ի : Ե թ Ե ք ո ղ ար կ վ ա ծ գ ո թ ծ ար ք ի Է ա կ ա ն  
պ ա յ մ ա ն ն Ե Ր ի շ ու Ր ջ հ ա մ ա ձ ա յ ն ու թ յ ու ն ձ Ե ո ք  
ք Ե Ր վ ա ծ չ Է , ա պ ա գ ո թ ծ ար ք ը կ ն ք վ ա ծ չ Է , և պ Ե տ ք Է  
կ ի Ր առ Ե Լ ի Լ ի ն Ե ն ա ն հ ի մ ն հ ար ս տ ա ց մ ա ն կ ա ն ո ն ն Ե Ր ը :  
Ե թ Ե ք ո ղ ար կ վ ա ծ գ ո թ ծ ար ք ը բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ա մ ք և  
ս ու բ յ Ե կ տ ա յ ի ն կ ա զ մ ո վ չ ի հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ու մ  
օ Ր Ե ն ք ի պ ա հ ա ն ջ ն Ե Ր ի ն , ա պ ա ա յ ն ա ն վ ա վ Ե Ր Է , և  
կ ի Ր առ Ե Լ ի Ե ն ա ն վ ա վ Ե Ր ու թ յ ա ն հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն  
ի Ր ա վ ա կ ա ն հ Ե տ ն ա ն ք ն Ե Ր ը , մ ա ս ն ա վ ո Ր ա պ Ե ս ,  
Ե Ր կ կ ո ղ մ ա ն ի ո Ե ս տ ի տ ու ց ի ա ն : Օ Ր ի ն ա կ ` Ե թ Ե շ ի ն ծ ու  
առ ու վ ա ճ առ ք ի պ ա յ մ ա ն ա գ Ր ո վ ք ո ղ ար կ վ ու մ Ե ն գ Ր ա վ ի  
և փ ո խ առ ու թ յ ա ն պ ա յ մ ա ն ա գ Ր Ե Ր , ի ս կ փ ո խ առ ու թ յ ա ն  
պ ա յ մ ա ն ա գ Ր ո վ տ ո կ ո ս ն Ե Ր ի չ ա փ ը գ Ե Ր ա զ ա ն ց ու մ Է Յ Յ  
կ Ե ն տ Ր ո ն ա կ ա ն ք ա ն կ ի ս ա հ մ ա ն ա ծ ք ա ն կ ա յ ի ն տ ո կ ո ս ի  
հ ա շ վ ար կ ա յ ի ն դ Ր ու յ ք ի կ Ր կ ն ա պ ա տ ի կ ը ( Յ Յ  
ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ Ր Ե ն ս գ Ր ք ի 879-ր դ հ ո ո վ ա ծ ի 1-ի ն մ ա ս ) ,  
ա պ ա փ ո խ առ ու թ յ ա ն պ ա յ մ ա ն ա գ ի Ր ն ա ն վ ա վ Ե Ր Է ( Յ Յ  
ք ա ղ ա ք ա ց ի ա կ ա ն օ Ր Ե ն ս գ Ր ք ի 306-ր դ հ ո ո վ ա ծ ) , հ Ե տ ն ա ք ար  
ա ն վ ա վ Ե Ր Է ն ա ն գ Ր ա վ ի պ ա յ մ ա ն ա գ ի Ր ը ` ո Ր ա Ե ս  
փ ո խ առ ու թ յ ա ն պ ար տ ա վ ո Ր ու թ յ ա ն կ ա տ ար մ ա ն



ապահովում (ՔՅ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 3-րդ մաս): Ուստի, տվյալ դեպքում քողարկված գործարքի նկատմամբ կիրառվում է երկկողմանի ռեստիտուցիա: Մեկ այլ օրինակ է, երբ վարձակալության հանձնված գույքի նկատմամբ ենթավարձակալության պայմանագրի կնքումն արգելված է (ՔՅ քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի 1-ին մաս), ենթավարձակալության պայմանագիրը քողարկելու նպատակով՝ կնքվում է համատեղ գործունեության պայմանագիր (ՔՅ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի 1-ին մաս): Տվյալ դեպքում, քանի որ վարձատուի համաձայնությունը ենթավարձակալության վերաբերյալ առկա չէ, ապա անվավեր է նաև քողարկված ենթավարձակալության պայմանագիրը (ՔՅ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդված):

**§3.4. Երրորդ անձանց իրավունքների պաշտպանությունն առաջնահերթության հարցը**

Չաշվի առնելով կեղծ և շինծու գործարքներ կնքելիս կողմերի վարքագծի, որպես կանոն, անբարեխիղճ բնույթը՝ 3-րդ գլխի 3.2-րդ պարագրաֆում քննարկվեց նշված գործարքներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ ներկայացնելու կողմերի իրավունքի սահմանափակման համապատասխան կառուցակարգը: Սակայն, մեր կարծիքով, օրենսդրի կողմից պետք է նաև առանձնակի ուղղորդություն հատկացվեր կեղծ և շինծու գործարքների մասնակից չհանդիսացող անձանց, այն է՝ երրորդ անձանց, ում իրավունքներն ու օրինական շահերը խախտվում են կեղծ և շինծու գործարքների կնքման հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ կեղծ և շինծու գործարքների կնքմամբ խախտված իրավունքների պաշտպանության եղանակները տարբերակված չեն կողմերի և նման գործարքներից տուժած երրորդ անձանց համար: ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես արդեն նշել էինք, և՛ կողմերի, և՛ երրորդ անձանց համար որպես կեղծ և շինծու գործարքների կնքմամբ խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակ նախատեսված է առնչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդված), իսկ որպես անվավերության հետևանք նախատեսված է միայն ռեստիտուցիան (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մաս), շինծու գործարքների դեպքում՝ նաև քողարկված գործարքի նվերաբերող կանոնների կիրառումը: Մինչդեռ կեղծ և շինծու գործարքների կնքմամբ խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների արդյունավետությանը և արդարացիությանը պետք է գնահատվի՝ նախնառաջ հաշվի առնելով, թե ով է խախտված իրավունքի սուբյեկտը:

Կարծում ենք, կեղծ կամ շինծու գործարք կնքած կողմերին և երրորդ անձանց իրավունքի պաշտպանության միևնույն գործիքակազմով օժտելն արդարացի և արդյունավետ չի կարող լինել՝ պայմանավորված նման գործարքների կողմերի, որպես կանոն, մեղավոր և անբարեխիղճ վարքագծով (այս մասին խոսվում է 3-րդ գլխի 3.2-րդ պարագրաֆում): Կեղծ և շինծու գործարքների կողմերին երրորդ անձանց հետ հավասար հիմունքներով նույն գործարքի անբարենպաստ հետևանքներից պաշտպանվելու հնարավորություն տալն ինչպես արդարացի չէ և ամենաթողություն նպաստավոր պայմաններ է ստեղծում քաղաքացիական

շրջանառություն անբարեխիղճ մասնակիցների համար, այլ նաև հաճախ հանգեցնում է բարեխիղճ երրորդ անձանց խախտված իրավունքների և իարժեք պաշտպանություն անհնարիսություն:

Առաջարկում ենք երրորդ անձանց իրավունքների պաշտպանություն եղանակները գործարքի կողմերի համեմատ հնարավորինս ընդլայնել՝ հաշվի առնելով այս գործարքներն երկկողմանի դիտավորությունամբ կնքելու և նման գործարքներ կնքելու միջոցով, որպես կանոն, իրավական առավելություններ ստանալու, օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ շրջանցելու նպատակներ հետապնդելու հանգամանքը: Կեղծ և շինծու գործարքների կնքման հետևանքով երրորդ անձանց կարող է պատճառվել վնաս, որը, մեր կարծիքով, պետք է ենթակալիսի հատուցման: Ինչպես արդեն նշել էինք, կեղծ և շինծու գործարքներն ինքնին իրավախախտումներ դիտարկվել չեն կարող, հետևաբար ինքնին պատճառված վնասի հատուցման հանգեցնել չեն կարող (այս մասին խոսվում է 1-ին գլխի 13-րդ պարագրաֆում): Իսկ ևրացուցիչ գույքային պատասխանատվությունը՝ որպես գործարքի անվավերության հետևանք, ներկայիս իրավակարգավորման պայմաններում կեղծ և շինծու գործարքների դեպքում կիրառելի չէ, քանի որ հատուկ սահմանված չէ այս գործարքների անվավերությունը կարգավորող իրավադրույթով: Անհասկանալի է օրենսդրի նման մոտեցումն այն պայմաններում, երբ, օրինակ, գործարքի կողմի մեղավորության դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 307-րդ, 308-րդ, 309-րդ, 310-րդ, 311-րդ, 312-րդ, 313-րդ հոդվածներով նախատեսված է ևրացուցիչ գույքային պատասխանատվությունը՝ որպես գործարքի անվավերության հետևանք:

Մի աժամանակ գտնուում ենք, որ վնասը պետք է ենթադրի ինչպես իրական վնասը, այնպես էլ բաց թողնված օգուտը: Ընդ որում, վնասի հատուցման պարտավորությունը պետք է կրի այն կողմը, ով կեղծ կամ շինծու գործարքի միջոցով խուսափել է որոշակի բացասական իրավական հետևանքներից կամ ստացել է որոշակի իրավական առավելություններ կամ շրջանցել է որևէ օրենսդրական արգելք, սահմանափակում, իսկ եթե հնարավոր չէ նշվածը պարզել, ապակողմերի պատասխանատվությունը պետք է լինի համապարտ: Որպես օրինակ, կարելի է կրկին մեջբերել հռոմեական իրավունքի կարգավորումը, որին համապատասխան՝ բացարձակ սիմուլյացիան կողմերի միջև հարաբերություններում որևէ հետևանք չէր առաջացնում, սակայն կարող էր հանգեցնել երրորդ անձանց առջև կողմերի համապարտ պատասխանատվության առաջացման, եթե վերջիններս սիմուլյացիոն ակտերի հետևանքով վնաս էին կրել: Նման դեպքերում սիմուլյացիան կարող էր համարվել դելիկտ<sup>227</sup>: Օրինակ, երբ վարձակալություն հանձնված գույքի նկատմամբ ենթավարձակալության պայմանագրի կնքումն արգելված է (ՔՅ քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի 1-ին մաս), ենթավարձակալության պայմանագիրը քողարկելու նպատակով՝ կնքվում է համատեղ գործունեության պայմանագիր (ՔՅ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի 1-ին մաս): Տվյալ դեպքում, երկկողմանի ռեստիտուցիայի կիրառումը բնականաբար վարձատուի իրավունքների պաշտպանությանը չի ծառայի: Ուստի, մեր կարծիքով, վարձատու ն իրավունք ունի վարձակալից պահանջելու ենթավարձակալության պայմանագրից ստացված գումարի չափով հատուցում, ինչպես նաև ուրիշ ի դրամական միջոցների ապօրինի

<sup>227</sup>Տե՛ս Пухан Иво, Поленак-Акимовская Мирьяна, նշված աշխատությունը, էջ 223:

օգտագործման համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ որպես շինծու գործարքի կնքման հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցում:

Այսպիսով, բոլոր այն դեպքերում, երբ ռեստիտուցիա կիրառելի են արվում չէ կամ ռեստիտուցիայի կիրառումը չի հանգեցնի երրորդ անձանց խախտված իրավունքների լիարժեք վերականգնման, ապա, մեր կարծիքով, երրորդ անձանց համար պետք է իրավունք սահմանվի ներկայացնելու կեղծ կամ շինծու գործարքի կնքման հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջ:

Բացի երրորդ անձանց առջև կեղծ և շինծու գործարքների կողմերի գույքային պատասխանատվության կիրառումից՝ կարծում ենք, որ պետք է գործեն գործարքի մասնակից չհանդիսացող անձանց իրավունքների պաշտպանության այլ երաշխիքներ ևս: Կեղծ կամ շինծու գործարքից տուժած երրորդ անձանց իրավունքների պաշտպանությունը միշտ պետք է առաջնային լինի: Հետևաբար եթե երրորդ անձինք բարեխղճորեն որպես վավեր գործարք հիմք են ընդունել կեղծ կամ շինծու գործարքը՝ առերևույթ սեփականատիրոջից ձեռք բերելով իրավունքներ, ապա, կարծում ենք, որ այդ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով պետք է առաջնայնություն տրվի կեղծ կամ շինծու գործարքին: Ուստի, կեղծ և շինծու գործարքները պետք է դիտարկվեն որպես վավեր գործարքներ, եթե երրորդ անձինք բարեխղճորեն հիմք են ընդունել այդ գործարքները: Հետևաբար, գտնում ենք, որ գործարքի կեղծ կամ շինծու բնույթը որպես պաշտպանություն և չի կարող օգտագործվել գործարքի կողմերի և վերջիններիս պարտատերերի կողմից երրորդ անձանց դեմ, ովքեր բարեխղճորեն

Իրավունքներ են ձեռք բերել առերևույթ  
 սեփականատիրոջից: Յարկ է նկատել, որ նմանատիպ  
 առանձնահատուկ կարգավորում նախատեսված է  
 Իտալիայի քաղաքացիական օրենսգրքով<sup>228</sup>: Բարեխիղճ  
 երրորդ անձանց իրավունքներին պետք է  
 առաջնայնություն տրվի ոչ միայն այն դեպքում,  
 երբ վերջիններս առերևույթ (ակնհայտ)  
 սեփականատիրոջից բարեխիղճորեն գույք և  
 իրավունքներ են ձեռք բերում, այլ նաև այն  
 դեպքում, երբ երրորդ անձինք հանդիսանում են  
 առերևույթ սեփականատիրոջ պարտատերեր, և նրանց  
 պահանջով բռնագանձում է տարածվում կեղծ կամ  
 շինծու գործարքով փոխանցված գույքի նկատմամբ:  
 Այստեղ ևս հիշարժան է Իտալիայի քաղաքացիական  
 օրենսգրքով սահմանված նույնաբովանդակ  
 կարգավորումը: Այսպես՝ «Պայմանագրի կողմերը չեն  
 կարող պայմանագրի \$իկտիվ (կեղծ, շինծու) լինել և  
 օգտագործել առերևույթ սեփականատիրոջ  
 պարտատերերի (\$իկտիվ պայմանագրին  
 համապատասխան սեփականատեր համարվող) դեմ,  
 ովքեր բարեխիղճորեն \$իկտիվ պայմանագրի առարկա  
 սեփականության նկատմամբ բռնագանձում են  
 տարածել»<sup>229</sup>:

Միաժամանակ, գտնում ենք, որ լրացուցիչ  
 կարգավորման կարիք ունի կեղծ և շինծու  
 գործարքներով իրավունքը փոխանցած և իրավունքը  
 ստացած անձանց պարտատերերի առաջնահերթության  
 հարցը: Կարծում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ  
 գործարքի կեղծ կամ շինծու լինելու  
 պայմաններում նույն գույքի նկատմամբ  
 հավակնություն ունեն ինչպես իրավունքը  
 փոխանցած, այնպես էլ իրավունքը ստացած անձանց  
 պարտատերերը, առաջնայնություն պետք է տրվի այն

<sup>228</sup>Տե՛ս **Luisa Antonioli, Anna Venezian**, նշված աշխատությունը, էջ 285:

<sup>229</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 284:

պարտատերերին, որոնց պահանջի հիմքն առաջացել է ավելի վաղ:

Հիմք ընդունելով վերագրյալը՝ առաջարկում ենք 1-ին գլխի 12-րդ պարագրաֆում առաջարկված խմբագրությունը հարկադրաբար օրենսգրքի 306-րդ հոդվածը լրացնել հետևյալ 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով՝

«7. Երրորդ անձն իրավունք ունի պահանջել ու իրեն պատճառված վնասի հատուցում կեղծ կամ շինծու գործարքի կողմից, եթե վնասը պատճառվել է կեղծ կամ շինծու գործարքի միջոցով տվյալ կողմի իրականացրած գործողությունների հետևանքով: Եթե հնարավոր չէ պարզել վնասի պատճառման մեջ մեղավոր կողմին, ապա գործարքի կողմերը երրորդ անձի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

8. Գործարքի կեղծ կամ շինծու լինելը որպես պաշտպանություն չի կարող օգտագործվել գործարքի կողմերի, նրանց իրավահաջորդների կամ գործարքով իրավունքը փոխանցող անձի պարտատերերի կողմից երրորդ անձանց դեմ, ովքեր բարեխղճորեն իրավունքներ են ձեռք բերել առերևույթ սեփականատիրոջից, այդ թվում՝ ովքեր բարեխղճորեն գործարքի առարկագույքի նկատմամբ բռնագանձում են տարածել:

9. Եթե գործարքի կեղծ կամ շինծու լինելու դեպքում գործարքի առարկա գույքի նկատմամբ հավակնություն ունեն ինչպես իրավունքը փոխանցած, այնպես էլ իրավունքը ստացած անձանց պարտատերերը, առջև այնուհետև պետք է տրվի այն պարտատերերին, որոնց պահանջի հիմքն առաջացել է ավելի վաղ»:

## ԵՁՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կեղծ և շինծու գործարքների իրավական կարգավորման առանձնահատկությունների, տարբեր հեղինակների մոտեցումների, միջարքերկրների փորձի և դատական պրակտիկայի համալիր վերլուծությունը թույլ է տալիս կատարելու ներքոշարադրյալ տեսական ու գործնական եզրահանգումները և կատարել հետևյալ առաջարկությունները.

1. Գործարքի կեղծ կամ շինծու լինելը բացահայտելու համար չի կարող հիմք ընդունվել միայն գործարքի իրավական առումով կատարված կամ չկատարված լինելու հանգամանքը, թեև վերջինս կարող է մյուս հանգամանքների հետ համակցություն լինելու մեջ վկայել գործարքի կեղծ կամ շինծու լինելու մասին: Կողմերի իրական մտադրությունը բացահայտելու համար պետք է, ի թիվս այլնի, որոշիչ նշանակություն տալ գործարքի կողմերի միջև առկա փաստացի դրությունը. արդյո՞ք վերջիններիս միջև առկա փաստացի հարաբերությունները փոփոխվել են կնքված գործարքին համապատասխան, արդյո՞ք կնքված գործարքից բխող հետևանքները հասել են իրենց տրամաբանական ավարտին:

2. Կեղծ գործարքի իրավաբանական որակման համար որոշիչ նշանակություն տալով կողմերի՝ տվյալ գործարքից բխող իրավական հետևանքները չառաջացնելու մտադրությունը՝ տեսական գրականություն, միջարքերկրների օրենսդրության և ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում առանձնացրել ենք ոչ սպառիչ հանգամանքների շարք, որոնք կարող են, կեղծ գործարքի առկայության մասին հետևություն հանգեցնելու համար, իրավակիրառ պրակտիկայում



ն ւ ն ե ն ա լ                    ն ւ ղ ե ն շ ա յ ի ն                    ն շ ա ն ա կ ու թ յ ու ն :  
Մասնավորապես՝            ն ւ շ ա դ ր ու թ յ ա ն            ե ն            արժանի  
գործարքի            առարկա            գ ու լ յ ք ի            գ տ ն վ ե լ ու            վ ա յ ը ,  
վճարման            փաստը            հաստատող            ապացույցները,  
գործարքի            կողմերի            միջև            առկա            ազգակցական            կամ  
կախվածություն            հարաբերությունները,            մի            քանի  
կազմակերպություններում            գործարքները            կնքած  
ն ու յ ն            անձի            կողմից            մի            քանի            պաշտոնների  
համատեղումը,            ն ու յ ն            անձանց            մասնակցությունը  
տվյալ            կազմակերպությունների            կանոնադրական  
կապիտալում,            գործարքի            մասնակցի            գ ու լ յ ք ի  
նկատմամբ            հարուցված            կատարողական            վարույթի  
առկայությունը,            կնքված            գործարքի            տնտեսապես  
անշահավետ            կամ            անարդյունավետ            լինելը,  
գործարքով            ստանձնած            պարտավորությունների  
կատարման            համար            անհրաժեշտ            միջոցների  
բացակայությունը            (համապատասխան            աշխատուժե,  
սարքավորումներ,            անշարժ            գ ու լ յ ք ,            դրամական  
միջոցներ և այլն):

3. Ծի ն ծ ու            գործարքի            դեպքում            քողարկող            և  
քողարկված            գործարքների            որոշակի            պայմաններ  
պարտադիր            համընկնում            են: Մեր            կարծիքով,            եթե  
կնքվում            է            շի ն ծ ու            գործարքների            ամբողջական  
շղթա, ապա սկզբնական            և            վերջնական            կողմերը            պետք է  
համընկնեն:

4. Ծի ն ծ ու            գործարքների            անվավերության  
վերաբերյալ            դատական            պրակտիկայի  
ուսումնասիրության            արդյունքում            պարզել            ենք, որ  
իրավակիր            առ            պրակտիկայում            ձևավորվել            է            շի ն ծ ու  
գործարքի            երեք            տեսակ՝            այլ            գործարք            քողարկող,  
գործարքի            որևէ            պայման            քողարկող            և            գործարքի  
իրական            կողմին            քողարկող            շի ն ծ ու            գործարքներ:

5. Հիմնավորելով            գործարքը            կեղծ            կամ            շի ն ծ ու  
որակելով            հարցում            նպատակի            որոշիչ            իրավական  
նշանակությունը՝            գտնում            ենք,            որ            ցանկացած

դեպքում, երբ առկա է կեղծ կամ շինծու գործարք կնքելու միջոցով որևէ քողարկված արդյունքի հասնելու նպատակ, որպես կանոն, հակաիրավական բնույթի, ապա չի կարելի խոսել կեղծ կամ շինծու գործարքի առկայության մասին:

6. Կեղծ և շինծու գործարքներում կամքի և կամահայտնություն առանձնահատկություններին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործարքը կեղծ կամ շինծու որակելու համար անհրաժեշտ է կեղծ կամ շինծու գործարք կնքելու և այդ գործարքը չկատարելու ընդհանուր կամքի առկայությունը գործարքի բոլոր կողմերի մոտ: Միայն մեկ կողմի մոտ նման խաթարված կամքի առկայությունը բավարար է գործարքը կեղծ կամ շինծու որակելու համար: Գործարքը շինծու որակելու համար անհրաժեշտ է ոչ միայն գործարքի բոլոր կողմերի մոտ տվյալ գործարքից բխող իրավական հետևանքները չառաջացնելու կամքի առկայությունը, այլ նաև այլ գործարք քողարկելու ընդհանուր կամքի առկայությունը, այսինքն՝ շինծու գործարքի դեպքում կողմերի ընդհանուր կամքը պետք է տարածվի նաև քողարկված գործարքի նկատմամբ:

7. Գտնում ենք, որ կեղծ և շինծու գործարքների՝ իրավախախտում չլինելու հանգամանքը գործող իրավակարգավորման պայմաններում ինքնին բացառում է այս գործարքների կնքման հետևանքով գործարքի մասնակից չհանդիսացող անձանց, պետությունը կամ համայնքներին պատճառված վնասի հատուցման հնարավորությունը: Մինչդեռ, հաշվի առնելով կեղծ կամ շինծու գործարքի՝ որպես հիմնականում հակաիրավական բնույթի գործողություններով ուղեկցվելու և ըստ այդմ՝ իրավական ձևացման մեկ ամբողջական գործընթացի բաղկացուցիչ մաս լինելու հանգամանքը՝ գտնում

ենք, որ կեղծ և շինծու գործարքների անվավերությունը կարգավորող իրավադրույթներով գործարքի մասնակից չհանդիսացող անձանց, պետություն և համայնքների համար հատուկ պետք է սահմանվի նման գործարքների կնքման հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունքը:

8. Քննարկելով կեղծ և շինծու գործարքների անվավերության տեսակի հարցը՝ պարզել ենք, որ կեղծ և շինծու գործարքներն այն անվավեր գործարքներն են, որոնք գտնվում են առնչինչ և վիճահարույց գործարքների միջակայքի օղակում: Առնչինչ և վիճահարույց գործարքների տարբերակման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված համակարգի անհակասականությունն ապահովելու համար՝ առաջարկել ենք կեղծ և շինծու գործարքները դասել վիճահարույց գործարքների շարքը, սակայն դիտարկել դրանք որպես բացարձակ վիճահարույց գործարքներ: Նման առաջարկը հիմնավորվել է նրանով, որ կեղծ և շինծու գործարքներում առկա կամքի արատն ակնհայտ է, որ ենթադրի անվավերությունն առանց դատարանի կողմից անվավեր ճանաչման: Միաժամանակ այս գործարքներն այնպիսի անվավեր գործարքներ են, որոնք կարող են խախտել անորոշ շրջանակի անձանց իրավունքներ և օրինական շահեր, հետևաբար գործարքի վիճարկման իրավունք ունեցող անձանց շրջանակն օրենսդրորեն կանխորոշել հնարավոր է, և նման իրավունք պետք է ունենա ցանկացած շահագրգիռ անձ:

9. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավակիրառ պրակտիկայում սնանկ ճանաչված պարտապանի կառավարչի կողմից «Սնանկություն մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով պարտապանի գույքը հետ

վերադարձնելու պահանջներ կայացնելիս հաճախ  
բարձրացվում է գույքի փոխանցման հիմքում ընկած  
գործարքների կեղծ կամ շինծու լինելու  
հանգամանքը, և նկատի ունենալով, որ «Սնանկու թյան  
մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում կասկածելի  
գործարքների հասկացությունը՝ ուսումնասիրել  
ենք սնանկու թյան վարույթի շրջանակներում կեղծ,  
շինծու և կասկածելի գործարքների  
հարաբերակցության առանձնահատկությունները՝  
«Սնանկու թյան մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին  
մասով նախատեսված փոխանցումների հիմքում  
ընկած գործարքներն անվանելով «կասկածելի»  
գործարքներ: Արդյունքում հետևություններ  
առայն, որ կեղծ, շինծու և կասկածելի գործարքները  
չեն կարող նույնանալ: «Սնանկու թյան մասին» ՀՀ  
օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված  
փոխանցումների հիմքում ընկած գործարքներին ՀՀ  
օրենսդրի կողմից ի սկզբանե վերագրվել են մի  
շարք օբյեկտիվ հատկանիշներ, որոնք արդեն իսկ  
վկայում են այդ գործարքների կասկածելի բնույթի  
մասին, և այդ հատկանիշների առկայությունը  
կառավարչին հնարավորություն է տալիս  
պարզեցված կարգով սնանկու թյան վարույթ  
վերադարձնել պարտապանի գույքը՝ առանց  
ապացուցելու գործարքի կողմերի՝ գույք  
«փախցնելու» կամ պարտատերերի շահերին վնասելու  
նպատակի առկայությունը: Նման նպատակի  
ապացուցման հարց բարձրացվում է կեղծ և շինծու  
գործարքների դեպքում, որոնց անվավերությունը  
կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:  
Գտնում ենք, որ եթե նման նպատակի ապացուցման  
պարտականություն սահմանվի նաև կասկածելի  
գործարքների դեպքում, ապա դա կհանգեցնի կեղծ,  
շինծու և կասկածելի գործարքների միջև առկա  
սկզբունքային տարբերության վերացման:

10. Կեղծ, շինծու և կասկածելի գործարքների հարաբերակցության խնդրի ուսումնասիրության համատեքստում պարզել ենք, որ իրավակիրառ պրակտիկայում առավել շատ իրավական անորոշություն է առաջացնում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված իրավադրույթի կիրառումը: Ուստի, կեղծ, շինծու և կասկածելի գործարքների նույնացումը բացառելու և հնարավորինս իրավական որոշակիություն ապահովելու նպատակով՝ առաջարկել ենք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը ձևակերպել հետևյալ կերպ՝ համապատասխան տոկոսային ցուցանիշները դիտարկելով որպես պայմանական թվեր. «Կառավարիչը կարող է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դիմել և դատական կարգով հետստանալ՝ (...) դ) պարտապանին սնանկ ճանաչելուն նախորդող երեք տարվա ընթացքում կատարված գործարքերով իրացված գույքի, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի արժեքի և գործարքի կատարման պահի դրույթամբ դրա շուկայական արժեքի էական տարբերության 60%-ը, բացառությամբ եթե գործարքը կնքվել է հրապարակային սակարկության հիման վրա: Գույքի, ծառայության, աշխատանքի իրացման արժեքի և գործարքի կատարման պահի դրույթամբ դրա շուկայական արժեքի տարբերությունը համարվում է էական, եթե գերազանցում է շուկայական արժեքի նվազագույնը 20%-ը □:

11. Ուսումնասիրելով իրական կողմի քողարկման նպատակով կնքված շինծու գործարքն այլ իրավական ինստիտուտներին ց տարբերակելու առաձևահատկությունները՝ գտնում ենք, որ եթե

գործարքը ստորագրել է ոչ իրական կողմը (օրինակ՝ ոչ իրական գնորդը), սակայն կողմերը նպատակ չեն հետապնդել՝ ստանալու որոշակի առավելություններ, շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ, ապա չի կարող բարձրացվել գործարքի կեղծ կամ շինծու լինելու հարցը, իսկ շահագրգիռ անձը կարող է օգտվել իրավական պաշտպանություն ալ եղանակներից կամ չունենալ իրավական պաշտպանություն հնարավորություն: Մասնավորապես՝ պրակտիկայում երբեմն շինծու գործարքի ինստիտուտը սխալմամբ կիրառվում է կոմիսիայի, նվիրատվության հարաբերությունների նկատմամբ, իսկ երբեմն էլ վստահության հարաբերությունների նկատմամբ, որոնք տվյալ դեպքում քաղաքացիաիրավական պաշտպանությունից չեն օգտվում:

12. Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին համապատասխան շինծու է դիտարկվում միայն իրական կողմի քողարկման նպատակով կնքված այն գործարքը, որում կողմին քողարկելու նպատակ են հետապնդում գործարքի երկու կողմերն էլ, սակայն իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել հետևություններ անել առ այն, որ երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը կարող են խախտվել նաև իրական կողմին քողարկելու նպատակով կնքված այնպիսի գործարքով, որում իրական կողմին քողարկելու նպատակը հետապնդում է միայն գործարքի մի կողմը: Ընդ որում, նշված երկու գործարքներով էլ իրական կողմին քողարկելը պետք է հետապնդի նպատակ՝ ստանալու որոշակի հակիրավական քնույթի առավելություններ, շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ:

Ուստի, երրորդ անձանց, մեր կարծիքով, պետք է հնարավորություն ընձեռել շինծու լինելու հիմքով վիճարկել նաև նշված գործարքը: Միաժամանակ, գտնում ենք, որ պետք է պաշտպանել այդ գործարքի քարտիսի դճ կողմի իրավունքները՝ նրան հնարավորություն տալով ստանալ գործարքի անվավերություն հետևանքով պատճառված վնասի հատուցում:

